



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

4 (74)

ԵՐԵՎԱՆ

2017

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

4 (74), 2017

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի

*Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական լայնախառն լրատվամատերիալի վարիչ, փ.գ.թ.
(Մոսկվա, ՌԴ)*

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Արա Մարջանյան

«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ՄԱԿ ԶԾ էներգետիկայի ազգային փորձագետ, տ.գ.թ.

Արամ Սաֆարյան

«Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ նախագահ, բ.գ.թ.

Բարկեն Վարդանյան

«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական

Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Զավեն Եկավյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Էդուարդ Լ. Դանիելյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան

ՀՀ վարչապետ, տ.գ.դ.

Հրանուշ Հակոբյան

ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.

Միհրան Դաբալ

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Յեդասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

Մուշեղ Լալայան

ՀՀ Կ փոխնախագահ

Ջորջ Կոստոպուլոս

ԱՄՆ Մերիլենդի համալսարանի կիրճեռանվտանգության պրոֆեսոր (Աթենք, Հունաստան)

Մամվել Մանուկյան

IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Մերգեյ Գրինյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

Վահագն Ազյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան

ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 4 (74), 2017թ.


ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒԹ Յ ՈՒՆ
<i>Գլխավոր խմբագիր</i> Գագիկ Հարությունյան	<i>Էդուարդ Դանիելյան</i> Դ.Մ. Լանգի ներդրումը Հայաստանի քաղաքակրթական ժառանգության արժևորման բնագավառում 5
<i>Գլխավոր խմբագրի տեղակալներ</i> Արա Մարջանյան Վահագն Ազյան	<i>Ալեքսանդր Մանասյան</i> Պատմական փաստարկները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում 17
<i>Պատասխանատու խմբագիր</i> Խոնարհիկ Քարառուղանյան	<i>Գագիկ Հարությունյան,</i> Կրիտիկական ենթակառուցվածքներ և գաղափարախոսություն 47
<i>Պատասխանատու քարտուղար</i> Լուսինե Բաղրամյան	<i>Արա Մարջանյան</i> Բառերի տիեզերք. հաճախակիության բառարանները և <i>Google n-grams</i> գործիքը 60
Արեստակես Մինավորյան Դիանա Գալստյան Կարեն Վերանյան Վահրամ Հովյան	<i>Աշոտ Թավադյան</i> Գնաճի, ազգային արժույթի փոխարժեքի ազդեցությունը տնտեսական աճի վրա 82
	<i>Վահրամ Հովյան</i> Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներն արդի փուլում. հայրենադարձության խնդիրը 97
	<i>Միրանուշ Անտոնյան</i> Համակարգչային համախտանիշի դրսևորումը հոգեխոսքային զարգացման հապաղման դեպքում 116
	<i>Մամվեղ Ասատրյան</i> Տեխնոլոգիական կախվածությունը որպես հիմնախնդիր 128
	<i>Հուշագիր հեղինակին</i> 137

Դ.Մ. ԼԱՆԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ¹

Էդուարդ Լ. Դանիելյան²

Բանալի բառեր՝ Հայկական լեռնաշխարհի, քաղաքակրթական ժառանգություն, Հայաստանը քաղաքակրթության բնօրրան, Հայասա, Մեծ Հայք, ազգապետություն, իսաչքարային արվեստ:

Հայաստանի քաղաքակրթական ժառանգության արժևորման գործում հայագետների, արևելագետների և կովկասագետների շարքում իր նշանակալից տեղն ունի բրիտանացի պրոֆեսոր, պատմաբան Դ.Մ. Լանգը (1924-1991թթ.), որը հեղինակել է Հայաստանի և հայ ազգի պատմությանը նվիրված մի շարք աշխատություններ². *Հայերը* (1976թ.), *Հայաստանը քաղաքակրթության բնօրրան* (1970, 1978թթ.), *Բարձունքների ժողովուրդներ: Հին Արարատը և Կովկասը* (1988թ.):



Դ.Լանգը, բարձր գնահատելով Հայաստանի քաղաքակրթական նշանակությունը, «*Հայաստանը քաղաքակրթության բնօրրան*» գրքում նշել է. «Հնագույն երկիր Հայաստանը տեղադրված է բարձր լեռներում... Թեև Միջագետքն իր հնագույն Շումերի և Բաբելոնի քաղաքակրթություններով, Եգիպտոսի հետ մեկտեղ, սովորաբար համարվում է քաղաքակրթական կյանքի հիմնական աղբյուրը ժամանակակից իմաստով, Հայաստանը նույնպես իրավունք ունի որակվելու որպես մարդկային մշակույթի օրրաններից

¹Զեկուցում՝ կարդացված «Օտարազգի հայագետների ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում» գիտաժողովում, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 28 հոկտեմբերի, 2016թ.:

²Պատմ. գիտ. դոկտոր:

²Տե՛ս *Danielyan E.L.*, The Contribution of D. M. Lang to the Appreciation of Armenia's Civilizational Heritage, Issue 2 (4) 2016, pp. 7-17 <http://www.fundamentalarmenology.am/datas/issues/ISSUE-2-2015.pdf>

մեկը: Նախ, ինչպես Ծննդոց Գրքում է ասվում, Նոյյան տապանը կանգ է առել Արարատ լեռան գագաթին՝ Հայաստանի հենց կենտրոնում... Անկախ այն հանգամանքից, թե մենք Ծննդոց Գրքին, որպես պատմական սկզբնաղբյուրի, կարևորություն տալիս ենք, թե ոչ, ոչ մեկը չի կարող ժխտել Նոյյան տապանի մասին դրա հաղորդման խորհրդանշական կարևորությունը, որին ակնածանքով են մոտենում հավատացյալները և անհավատներն ամբողջ աշխարհում: Դրա հետ մեկտեղ, Հայաստանը մեր ուշադրությունն է պահանջում՝ որպես մետաղագործության հնագույն հիմնական օջախներից մեկը, սկզբնավորվելով, առնվազն, հինգ հազար տարի առաջ: Ավելի ուշ Հայաստանը դարձավ քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած առաջին ընդարձակ թագավորությունը՝ լինելով եկեղեցական ճարտարապետության այն ոճի սկզբնավորողը, որը կանխագործում է մեր սեփական արևմտյան գոթիկան»¹:

Լանգն ուշադրություն է դարձրել Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից քաղաքակրթական զարգացումներին նպաստած աշխարհագրական, բնակլիմայական, մշակութային և բնական պաշարներով պայմանավորված գործոնների վրա: Նա աշխատում էր այնպիսի ժամանակաշրջանում, երբ հնագիտության և պատմագիտության մեջ գերիշխող էր հայերի «եկվորության» վարկածը: Սակայն նրա հայեցակարգին բնորոշ է Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից ստացվող տվյալների շարունակականության հիման վրա, տարբեր դարաշրջանների առումով *հայկական* տերմինի օգտագործումը, որով նա ձեռքում է «եկվորության» վարկածի թմբիրը և իր մեթոդաբանական որոշ հարցադրումներով մոտենում հայագիտական հետազոտությունների ոլորտում գտնվող հայերի տեղաբնիկության հայեցակարգին², որը ամրագրվում է նաև հնդեվրո-

¹ David M. Lang, Armenia: Cradle of Civilization, London, 1970, p. 9.

² Այիշյան Ղ., Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 79-81, 94-96, *Մարտիրոսեան Ն.*, Հայերենի յարաբերութիւնը հեթիղերենի հետ (Հանդես ամսօրեայ, 1924, N 9-10, էջ 453), *Մարտիրոսեան Ն.*, Նպաստ մը հեթ և հայ բառաքնության (ՊԲՀ, 1972, N 2, էջ 163-186), *Капанцян Гр.*, Хайаса – колыбель армян. Этногенез армян и их начальная история, Е., 1956, *Պետրոսյան Լ.Ն.*, Հայ ժողովրդի փոխադրամիջոցներ (տե՛ս Հայ ազգաբանություն և բանահյուսություն. ժողովածու, 6, Ե., 1974, էջ 123, *Иванов Вяч. Вс.*, Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры гимна Вахагн (ՊԲՀ, 1983, N 4, էջ 32-33), *Kavoukjian M.*, Armenia, Subartu and Sumer. The Indo-European Homeland and Ancient Mesopotamia, Montreal, 1987, *Խաչատրյան Վ.*, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Ե., 1998, *Ղազարյան Ռ.Պ.*, Հայաստայի քաղաքական և մշակութային պատմությունը, Ե., 2009, *Դանիելյան Է.Լ.*, Հայաստանի պատմաքաղաքակրթական ամբողջականության փաստն ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարությունների, Լրաբեր հաս. գիտ., № 1, 2016, էջ 29-44 և այլն:

պարանական լեզվաբանության զարգացմամբ և հնագիտական նոր հայտնագործություններով¹:

Դավիդ Լանգը լայնորեն կիրառում է ամբողջական նշանակությամբ *Հայաստան* անվանումը: Այսպես, հիշատակելով Հայկական լեռնաշխարհի հնագիտական մշակույթի ժամանակագրությունը՝ Միջին քարի դարից մինչև Ուշ պղնձի-քարի դարը, նա նշել է. «Հայաստանի հարավային՝ Վանա լճի շրջակայքի մասերը շահում էին մ.թ.ա. 5500-4400թթ. բարգավաճող՝ նրբագեղ և զարգացած «հալաֆյան մշակույթի» հետ շփումներից... Մելարտի կարծիքով՝ «հալաֆյան մշակույթը» ստեղծվել է հյուսիսից նոր եկածների կողմից, և դրա հայրենիքը հավանաբար գտնվում է Տիգրիսի և Եփրատի վերին հովիտների շրջանում, այն տարածքում, որը հետագայում կազմեց Մեծ Հայքի մի մասը... Հալաֆի ժողովուրդը հացահատկի մեծ աճեցնող էր և կառուցում էր ինքնատիպ տներ սալապատ ճանապարհների երկայնքով... Նման տներ նաև հանդիպում են Հայաստանի տարբեր մասերում: Հալաֆյան մշակույթը թեպետ կենտրոնացած էր Ասորիքում և Իրաքում, կարևոր և արդյունավետ կապեր ուներ Հայաստանի Վանի շրջանի հետ»²:

Ելնելով Նոր քարի դարի հնագիտական մշակույթի տվյալներից՝ Լանգը Հայաստանը համարել է միջազգային առևտրի հանգույց՝ միննույն ժամանակ նշելով, որ Հայկական վանակատը հանդիպում է ոչ միայն արևմտյան Փոքր Ասիայում, այլև նույնիսկ ստորին Վոլգայի ավազանի երկայնքով գտնվող հնավայրերում»³: Նա դիտարկել է, որ Հայաստանում Նոր քարի դարի բնակավայրերը շարունակել են բարգավաճել Պղնձի-քարի դարի, Բրոնզի դարի և հետագա ժամանակներում և որ նման հարուստ

¹ *Խանգաղյան Է.*, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Երևան, 1967, *Խանգաղյան Է., Մկրտչյան Կ.Հ., Պարսամյան Է.Ս.*, Մեծամոր, Ե., 1973, *Ավետիսյան Պ., Գասպարյան Բ.*, Ազարակի հուշարձանախմբի 2001թ. պեղումները (Հին Հայաստանի մշակույթը, XII, Ե., 2002, էջ 9-12), *Гамкрелидзе Т., Иванов Вяч.*, Индоевропейский язык и индоевропейцы, II, Тбилиси, 1984, с. 865, 895, *Gray R.D., Atkinson Q.D.*, Language-tree Divergence Times Support the Anatolian Theory of Indo-European Origin, *Nature*, vol. 426, 2003, pp. 435-438, *Remco Bouckaert, Philippe Lemey, Michael Dunn, Simon J. Greenhill, Alexander V. Alekseyenko, Alexei J. Drummond, Russell D. Gray, Marc A. Suchard, Quentin D. Atkinson*, Mapping the Origins and Expansion of the Indo-European Language Family. - www.sciencemag.org SCIENCE, VOL 337, 2012, p. 957-960. *Бадалян Р., Аветисян П., Ломбард П., Шагеньев К.*, Поселение Араташен (неолитический памятник в Араратской равнине), *Культура древней Армении*, XIII, Материалы республиканской научной сессии, Ե., 2005, с. 34-41, *Միմնիսյան Հ.*, Վերին Նավեր, գիրք Ա, Ե., 2006, նույնի՝ Ներքին Նավերի N 4 դամբարանը (Հուշարձան, տարեգիրք, 5, Ե., 2010, էջ 7-20), *G.E. Areshian, B. Gasparyan, P.S. Avetisyan, R.Pinhasi, K.Wilkinson, A.Smith, R.Hovsepian, D.Zardaryan*, The Chalcolithic of the Near East and South-Eastern Europe: Discoveries and New Perspectives from the Cave Complex Areni-1, Armenia, - *Antiquity*, vol. 86, N 331, March, 2012. etc.

² *D.M. Lang*, նշվ. աշխ., p. 63.

³ Նույն տեղում, p. 64.

հնավայրերից է Մոխրաբլուրը, որը գտնվում է հին հայկական Նախիջևան քաղաքից 8 կմ հյուսիս-արևելք և այն «մի քանի արժեքավոր հնարավորություններ է ընձեռում պղնձի և բրոնզի մետաղագործության առաջացումը հասկանալու համար»¹: Հայաստանը և Փոքր Ասիան Լանգը համարել է այն կենտրոնները, որտեղից մետաղամշակության գաղտնիքները թափանցել են Ասորիքի և Միջագետքի հարթավայրեր:

Լանգը բարձր է գնահատել Հայաստանում մետաղագործության առաջացումը և զարգացումը, ու պատմության ուսումնասիրությանը քաղաքակրթական մեթոդաբանության մոտեցմամբ «Հայկական մշակութային պատմության մեծ փուլ» է համարել, «այսպես կոչված, Կուր-Արաքսյան՝ Վաղ բրոնզի դարի մշակույթը» («...great phase in Armenian cultural history - the so-called 'Kuro-Araxes' Early Bronze Age culture»)²: Այստեղից հետևում է, որ Լանգը վերջինս դիտել է որպես Հայկական մշակութային պատմության նշանակալից փուլ: Այդ ժամանակաշրջանի հոգևոր պատմության առումով Լանգը նշել է. «Հայաստանը մեծ տեղ ուներ շումերների գիտակցության մեջ...» («*Armenia bulked large in the consciousness of the Sumerians...*»)³:

Քաղաքակրթական պատմության շարունակականության բնույթից ելնելով՝ Լանգը, Բրոնզի դարի մասին գրելուց հետո, անդրադառնալով Հայոց պատմության (*Armenian history*) մեջ «համեմատելի մշակութային միասնականացմանը» («*comparable cultural unification*»), դրա փուլերից է համարել «Ուրարտական թագավորության ծաղկման՝ մոտ մ.թ.ա. 750թ. և ապա՝ Տիգրան Մեծ արքայի գահակալության (մ.թ.ա. 95-55թթ.)» ժամանակաշրջանները⁴:

Լանգը բարձր է գնահատել Հայաստանի շինարարական արվեստը՝ նշելով. «այսպես կոչված Կուր-Արաքսյան հայկական քաղաքաշինության լավ օրինակ է Շենգավիթը՝ տեղադրված Հրազդան գետի ձախ ափին»⁵: Ինչպես տեսնում ենք, այսպես կոչված «Կուր-Արաքսյան մշակույթը» Լանգն անվանել է «Հայկական Կուր-Արաքսյան մշակույթ»⁶, նշելով, որ դրա ազդեցությունը հասել է մինչև Դնեստր գետի ավազանի *Տրիպոլյան մշակույթը*, որի հնավայրերում հայտնաբերված հողի պաշտամունքի հետ կապված կանացի արձանիկների պատկերում որոշ հետազոտողներ տեսնում են *արմենոիդ (Armenoid)* մարդաբանական տիպին բնորոշ յուրահատուկ գծեր⁷:

¹Նույն տեղում, pp. 64, 66.

²Նույն տեղում, p. 70.

³Նույն տեղում:

⁴Նույն տեղում, p. 73.

⁵Նույն տեղում, p. 74.

⁶Նույն տեղում:

⁷Նույն տեղում, p. 76.

Դ.Լանգը, կիրառելով իր մշակած տերմինաբանական չափանիշները, օգտագործում է «Հայկական Վաղ բրոնզի դար», «Հայկական Միջին բրոնզի դար», «Հայկական Ուշ բրոնզի դար» և «Հայկական Երկաթի դար» տերմինները (*“Armenian Early Bronze Age,” “Armenian Middle Bronze Age,” “Armenian Middle and Late Bronze Age,” “Armenian Iron Age”*)¹: Այսպիսով, քաղաքակրթական գործոնները նա դիտում է Հայաստանի հնագույն պատմության առանցքում:

Անդրադառնալով Սարիա Գիմբուտասի «կուրգանային» վարկածից² բխող հնդեվրոպական ցեղերի (հյուսիսային Մերձսևծովյան տափաստաններից) դեպի խնդրո առարկա տարածաշրջան մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսի գաղթին, Լանգը մինևույն ժամանակ Վաղ բրոնզի դարի ակներով կառքերի ստեղծողներ է նշել «հայերի նախնիներին»³: Հնագույն ժամանակներից սկսած պատմության շարադրանքում Լանգը կիրառել է *Հայաստան* երկրանունը: Դրանով իսկ նրա պատմական հայեցակարգը հնարավորություն է տալիս ամբողջականության մեջ դիտարկել Հայաստանի հնագիտական տվյալներով վավերացված մշակութային պատմությունը հնագույն ժամանակներից:

Դ.Ս. Լանգը, մեծ տեղ տալով Հայասայի ժամանակաշրջանին Հայոց պատմության մեջ, նշել է. «Հայերը իրենց կոչում են *Հայք* և իրենց երկիրը՝ *Հայաստան*»: Հետևելով այն կարծիքին, որ հիմքեր կան այս էթնիկ անունը կապելու իսթրական աղբյուրներում հիշատակվող *Հայասայի* հետ⁴, նա այն

¹ Նույն տեղում, pp. 76, 78, օրինակ՝ «Այս հիասքանչ դիլիջանյան անոթի զարդարումը վկայում է Հայկական Բրոնզի դարի մեկ այլ կարևոր հատկանիշի մասին՝ դիցուք, երկրի հույժ առաջադիմած դիրքին անվավոր փոխադրամիջոցների և մարտակառքերի բնագավառում... Էդիմբուրգի համալսարանի պրոֆ. Ս.Պիգոթը և Բրիտանական թանգարանի դոկտոր Ռ.Բարնեթը արևմտյան այն հնագետների թվին են պատկանում, որոնք տեղում հետազոտել են Հայկական Բրոնզի դարի այս կառքերը» (Նույն տեղում, pp. 82-83):

² Նույն տեղում, p. 76.

³ Նույն տեղում, p. 82.

⁴ Հիմնվելով Հայասային նվիրված հետազոտությունների, սեպագիր սկզբնաղբյուրների, հնագիտական նյութերի և մասնագիտական գրականության վրա Ռ.Ղազարյանը եզրակացրել է. «Բրոնզի դարի ընթացքում Հայաստանի արևմտյան մասը մտավ ակտիվ տնտեսական, քաղաքական և մշակութային հարաբերությունների մեջ Փոքր Ասիայի և Միջագետքի երկրների հետ: Այդ մեծագույնս նպաստեց պետական միավորների ստեղծմանը. Հայասա (Ազգի), Բուսվա (Օոփք) և Ալգի (Աղձնիք): Ուշ բրոնզի դարում Հայասան հզոր պետություն էր Հայկական լեռնաշխարհում: Այն կարող էր դիմակայել Խեթական պետությանը, որը Առաջավոր Ասիայի մեծ տերություններից էր: Քաղաքական, մշակութային և տնտեսական բնագավառներում զգալի փոխհարաբերություններ էին հաստատվել վերջինիս և Հայասայի (Ազգի) թագավորության միջև: Հայասայի (Ազգի) թագավորությունը, շնորհիվ իր անկախ քաղաքական իշխանության, տնտեսության և մշակութային արժեքների, Հայոց պետականության մասն էր, մեծագույն ներդրում կատարելով Հայոց պատմության մեջ» (*Ghazaryan R.P., The development of the Armenian statehood: Kingdom of Hayasa (the 14th-13th cc. BC), Fundamental Armenology, Issue 1, 2015, pp. 16-20*):

նշել է Հայաստանի արևմտյան լեռնային մասում, Եփրատի վերին ավազանի շրջանում: Լանգը այնուհետև գրել է. «Հայասայի ժողովրդի լեզուն ակնհայտորեն ազգակից էր Փոքր Ասիայի հին հնդեվրոպական լեզուներին, այսինքն՝ խեթերենին, լուվիերենին, լյուդիերենին, լիկիերենին և փոյոգիերենին, ու այս կարևոր է, նկատի ունենալով հայերենի՝ հնդեվրոպական մյուս լեզուների հետ ազգակցությունը»¹:

Անհրաժեշտ է նշել, որ Լանգը «Ուրարտու» անունը դիտել է թե՛ *Հայաստան* անվանը գուգահեռ և թե՛ որպես թագավորություն՝ «Հայաստանի առաջին ազգապետություն»²: Այս կապակցությամբ նա շոշափել է «հայ ազգի ձևավորման» խնդիրը և, կասկած հայտնելով «եկվորության»³ վարկածի հանդեպ, նշել. «Հնագիտական և լեզվաբանական արդի հայտնագործությունները ցույց են տալիս, որ պարզունակ գաղթի տեսությունը չի կարող համապատասխանել փաստերին: Ուրարտական քաղաքակրթության շատ գծերը մասնավորապես պահպանվել են հին հայկական մշակույթում: «Ուրարտու» անունը երկար ժամանակ գոյատևեց տարբեր ձևերով Վանի թագավորության անկումից հետո»: Կարևոր է նշել, որ Լանգը *Արարատ* անունը դիտելով որպես «Ուրարտու» անվան նախնական ձև, նշել է. «Իրոք, մինչև այսօր հայկական ազգային գիտակցության կիզակետի՝ Արարատ լեռան անվան լոկ այլ ձևն է «Ուրարտուն»⁴:

Դ.Մ. Լանգի աշխատությունում նկատվում է Մովսես Խորենացու երկի վրա հիմնված ավանդական մոտեցում՝ «Վանի հիմնադրման և Ուրարտական թագավորության» ժամանակաշրջանի առումով: Նա գրել է. «Արքայազն Արա Գեղեցիկը կարող է նույնացվել պատմական Արամե կամ Արամու թագավորի (մ.թ.ա. 880-844թթ.) հետ»⁵:

¹ D.M. Lang, նշվ. աշխ., p. 114.

² Նույն տեղում, p. 85.

³ Հայերի «եկվորության» վարկածի քննադատության, Հայկական լեռնաշխարհում հայերի տեղաբնիկության և Հայոց ավելի քան հինգհազարամյա պետականության մասին տե՛ս *Դանիելյան Է.Լ.*, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի ակունքները, Գիտություն և տեխնիկա, 1990, N4, էջ 1-9, *Մովսիսյան Ա.*, Հնագույն պետությունը Հայաստանում, Արատտա, Ե., 1992, *Դանիելյան Է.Լ.*, Հայոց պետականությունը և նախարարական համակարգը հնագույն ժամանակներից վաղ միջնադար, Գիտություն և տեխնիկա, 1993 N9, էջ 5-6, N 10, էջ 4-8, *Դանիելյան Է.Լ.*, Հին Հայոց պետականությունը Առաջավոր Ասիայի երկրների համակարգում, Գիտություն և տեխնիկա, 1994, N7-9, էջ 5-7, *Ձուլայան Ս.*, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Երևան, 1995, *Այվազյան Ա.*, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ (քննական տեսություն), Երևան, 1998, էջ 117-121, *Մովսիսյան Ա.Ե.*, Սրբազան լեռնաշխարհը: Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2004, *Դանիելյան Է.Լ.*, Հայոց պատմական և քաղաքակրթական արժեհամակարգի պաշտպանության անհրաժեշտությունը, Լրաբեր հաս. գիտ. N° 3, 2010, էջ 53-74:

⁴ D.M. Lang, նշվ. աշխ., p. 112.

⁵ Նույն տեղում, pp. 85-86.

Այսպիսով, Լանգի աշխատությունում երկու մոտեցում է դիտարկվում Հայաստանի հնագույն պատմության առումով: Քաղաքակրթական հետազոտության մեթոդաբանությամբ Հայաստանի պատմամշակութային պատկերը՝ հիմնված հնագիտական պեղումներից ստացվող արդյունքների վրա, նա ներկայացնում է ամբողջականության մեջ՝ այն բնութագրելով *Հայկական տերմինով*, սկսած Վաղ բրոնզի դարից: Իսկ էթնիկական պատմությունը շարադրելիս, չնայած իր ժամանակ գերակայող հնդեվրոպական ցեղերի *գաղթի տեսությանը*, նա իր հարցադրումներով փորձում է հայերի էթնիկական ծագումնաբանության հարցը լուծել ոչ թե «պարզունակ գաղթի տեսության», այլ էթնամշակութային ժառանգության շարունակականության սկզբունքով՝ հատկապես ընդգծելով Հայաստանի ժամանակները:

Դ.Մ. Լանգը, հիմնվելով Հերոդոտոսի հաղորդումների վրա, անդրադարձել է Հայաստանի և Աքեմենյան կայսրության միջև եղած հարաբերություններին: Այնուհետև նա նշել է հատկապես Երվանդյանների մայրաքաղաք Արմավիրի բարձրացման կարևորությունը և միջազգային առևտրում Հայաստանի հանգուցային դերը, քանզի այնտեղով էին անցնում հիմնական ուղիները դեպի հյուսիս և հարավ: Գիտնականը մասնավորապես շեշտադրում է հայերի հյուրընկալության հատկանիշը:

Մ.թ.ա. IV դ. երրորդ քառորդից Առաջավոր Ասիայում աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխմամբ՝ Լանգը նշել է, որ Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից Հայաստանը դուրս էր, սակայն շուտով չկարողացավ խուսափել նոր՝ հունա-արևելյան աշխարհի քաղաքակրթության՝ հելլենիզմի ազդեցությունից և տնտեսական ու սոցիալական նոր փուլ ապրեց՝ շփվելով մի շարք հարևան հելլենիստական երկրների հետ: Հայոց պատմության՝ Մեծ Հայքի և (նրա բնական մաս) Մոփքի թագավորությունների ժամանակաշրջանի կարևոր առանձնահատկությունը Լանգը համարել է նոր քաղաքների հիմնադրումը և հների վերականգնումը: Քաղաքաշինությունը շարունակվեց նաև Արտաշեսյանների օրոք: Լանգը գրել է Արտաշես I-ի հիմնած Արտաշատի կառուցման գործում կարթագենացի գորավար Հանիբալի ցուցաբերած օգնության մասին:

Հայոց պետականության անընդմեջ զարգացման տեսանկյունից ուշագրավ է Լանգի հետևյալ միտքը. «Արտաշեսը հիմնադիրն էր երրորդ և մեծագույն Հայոց միապետության, շարունակելով Արամեի հիմնադրած (ըստ Մովսես Խորենացու), որպես առաջինը՝ Ուրարտական թագավորությունը և Երվանդյաններիը՝ երկրորդը»¹:

¹Նույն տեղում, p. 125.

Տիգրան Բ Մեծի գահակալության ժամանակաշրջանը հետևյալ կերպ է բնութագրել Դ.Լանգը. «Հայաստանը կարճ ժամանակով հասավ կայսերական հզորության և հաջողության գագաթնակետին Տիգրան Մեծի օրոք... Հայկական գերիշխանությունը շատ առումներով նախընտրելի էր հռոմեականից, որը լավ ճանապարհների և ընդհանուր արդյունավետության հետ մեկտեղ բերեց տնտեսական շահագործում, ստրկություն և քաղաքական հպատակեցում: Տիգրան Մեծի տիրությունները ձգվում էին Կասպից ծովից մինչև Միջերկրականը, Միջագետքից մինչև Պոնտական Ալպերը... Հարևան երկրները, որոնք ճանաչել էին Տիգրանի՝ որպես «արքայից արքայի» գերիշխանությունը, պարտավորված էին նրան վճարել հաստատված հարկ և ուղարկել օժանդակ զորքեր պատերազմի ժամանակ...»¹: Տիգրան Մեծի կայսրության կենտրոնում էր իր հիմնած Տիգրանակերտ մայրաքաղաքը²:

Մեծ Հայքի թագավորության Արշակունյաց ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության առումով Լանգը կարևորել է Գառնիի պեղումները՝ հատկապես բարձր գնահատելով այնտեղ գտնվող դասական տաճարը³: Նա հայկական քաղաքակրթության նախաքրիստոնեական շրջանի առավել ուշագրավ խնդիրներից է համարել հայ հեթանոսության բնույթը: Նկարագրելով Արայի, Աստղիկի, Անահիտի, Տիրի, Արամազդի կերպարները՝ գիտնականն անդրադառնում է նաև Վահագնին որպես արեգակնային աստվածություն բնութագրող տեսակետին՝ հիմնված Վահագնի երգի վրա⁴:

Քրիստոնեության ընդունման պատմությունը դիտարկելով որպես հայ ազգի ամենից սիրելի ավանդություններից մեկը՝ Լանգը նշել է. «Այս սրբազան ավանդությունների գիտելիքը անհրաժեշտ է հայկական որմնանկարների և մանրանկարչության սրբապատկերները հասկանալու համար»⁵:

Արքայական և հոգևոր կառույցների թվում Լանգը հիշատակել է «Հայաստանի ամենից սուրբ քաղաք Էջմիածինը՝ գերագույն կաթողիկոսի»⁶ նստավայրը Արարատի տեսարանով: Այն սկզբնապես կոչվել է Վաղարշապատ՝ Վաղարշ I-ի (117-140թթ.) անունով, որը Արտաշեսյան հարստությանը հաջորդած Արշակունյաց հարստության ներկայացուցիչն էր⁷:

Հայ ճարտարապետությանը և արվեստին նվիրված բաժնում Լանգը նշել է, որ հայերը մեծ վարպետներ էին ամրոցների և ռազմական շինու-

¹ Նույն տեղում pp. 130-131.

² Նույն տեղում, p. 123.

³ Նույն տեղում, p. 144.

⁴ Նույն տեղում, p. 148.

⁵ Նույն տեղում, p. 155.

⁶ Ամենայն Հայոց կաթողիկոս:

⁷ D.M. Lang, նշվ. աշխ., p. 123.

թյունների կառուցման գործում: Այդ են վկայում Ամբերդը և Կիլիկիայի ամբողջներն ու բերդերը: Իսկ եկեղեցաշինության մեջ Տրդատ ճարտարապետի կառուցած Անիի Մայր տաճարը Լանգը (1001թ.) համարել է հայ ճարտարապետության գլուխգործոցը:

Լանգը բարձր է գնահատել խաչքարային արվեստը՝ որպես միջնադարյան հայկական քանդակագործության փառքի դրսևորում, ինչպես նաև մանրանկարչությունը և որմնանկարչությունը¹: Նա հիացած էր նաև հայ ոսկերիչների ստեղծած զարդերով, որոնք մինչև այսօր մեծ համբավ են վայելում: Լանգը հատուկ անդրադարձել է հայ գորգագործության պատմությանը և հայկական գորգերի տարածմանն աշխարհում:

XIX-XX դարերի հայ գեղանկարիչներից Հովհաննես Այվազովսկու, Մարտիրոս Սարյանի, Արշիլ Գորկու, կոմպոզիտորներից՝ Կոմիտասի, Ալեքսանդր Սպենդիարյանի և Արամ Խաչատրյանի վերաբերյալ մեծ հիացմունքով է արտահայտվել Դ.Լանգը: Կոմիտասի մասին նա մասնավորապես գրել է. «Կոմիտասի վոկալ ստեղծագործությունները երբեք չեն դադարում զարմացնել և հիացնել իրենց վեհությամբ և ոճով՝ հարուստ հարմունիայով և երաժշտական նուրբ ներշնչանքով»²:

Հնագիտական, պատմագիտական և մշակութաբանական տվյալներին քաղաքակրթական չափանիշներով մոտենալով՝ Լանգը բարձր է գնահատել հին և միջնադարյան Հայաստանում (Մեծ Հայք, Փոքր Հայք, Կիլիկյան Հայաստան) հայ ժողովրդի՝ ճարտարապետության (քաղաքաշինություն, ամրոցաշինություն, տաճարաշինություն և եկեղեցաշինություն), խաչքարային արվեստի և մանրանկարչության, գորգագործության, դրամագիտության, դպրության, զիտության և կրթության (պատմագիտություն, փիլիսոփայություն, տիեզերագիտություն և աշխարհագրություն, աստղագիտություն, մաթեմատիկա) բնագավառներում մշակութակերտ գործունեությամբ համաաշխարհային մշակույթի գանձարանը ներդրված արգասիքները:

Հայոց հնագույն և միջնադարյան պատմության հետ մեկտեղ, Լանգը անդրադարձել է նոր և նորագույն ժամանակաշրջաններին՝ հատկապես ընդգծելով օտար նվաճողների ներխուժումների և տիրապետության ու հատկապես 1915թ. Հայոց ցեղասպանության³՝ հայ ժողովրդի և քաղաքակրթության համար աղետավոր հետևանքները:

¹Նույն տեղում, pp. 227-228.

²Նույն տեղում, p. 261.

³Ինչպես նշել է Դ.Մ. Լանգը, մոտ մեկ ու կես միլիոն արևմտահայեր սպանվեցին նախապատերազմյան ընդհանուր երեք միլիոնից (Նույն տեղում, p. 288).

Դ.Ս. Լանգն իր գիրքը ժամանակագրորեն հասցրել է մինչև 1968թ., երբ «հայ ժողովուրդը տոնում էր Երևանի հիմնադրման 2750-ամյակը... Այս հոբելյանին մասնակցեցին հազարավոր հայեր ամբողջ աշխարհից, և այն վերածվեց ազգային հպարտության և համերաշխության տարերային դրսևորման: Այս ամենը լավագույնս կանխատեսում է այս հիասքանչ ժողովրդի և նրա՝ մեծ վնասներ կրած, սակայն հավերժ սրբազան երկրի՝ իրոք մարդկության քաղաքակրթության բնօրրանի ապագա ճակատագիրը»¹:

Հունիս, 2017թ.

Դ.Ս. ԼԱՆԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Էդուարդ Լ. Դանիելյան

Ամփոփագիր

Հայաստանի քաղաքակրթական ժառանգության արժևորման գործում հայագետների, արևելագետների և կովկասագետների շարքում իր նշանակալից տեղն ունի բրիտանացի պրոֆեսոր, պատմաբան Դ.Ս. Լանգը (1924-1991թթ.), որը հեղինակել է Հայաստանի և հայ ազգի պատմությանը նվիրված մի շարք աշխատություններ. *Հայերը* (1976թ.), *Հայաստանը քաղաքակրթության բնօրրան* (1970, 1978թթ.), *Բարձունքների ժողովուրդներ: Հին Արարատը և Կովկասը* (1988թ.):

Քաղաքակրթական պատմությանը բնորոշ առանձնահատկությունը մշակութային շարունակականության կատեգորիա է, ինչպես բխում է Լանգի հայեցակարգից: Բարձր գնահատելով Հայաստանի քաղաքակրթական նշանակությունը՝ Դ.Լանգն իր «Հայաստանը քաղաքակրթության բնօրրան» գրքում նշել է. «Հնագույն երկիր Հայաստանը տեղադրված է բարձր լեռներում... Թեև Միջագետքն իր հնագույն՝ Շումերի և Բաբելոնի քաղաքակրթություններով, Եգիպտոսի հետ մեկտեղ, սովորաբար համարվում է քաղաքակրթական կյանքի հիմնական աղբյուրը ժամանակակից իմաստով, Հայաստանը նույնպես իրավունք ունի որակվելու որպես մարդկային մշակույթի օրրաններից մեկը: Նախ, ինչպես Ծննդոց Գրքում է ասվում, Նոյյան տապանը կանգ է առել Արարատ լեռան գագաթին՝ Հայաստանի հենց կենտրոնում... Հայաստանը մեր ուշադրությունն է պահանջում՝ որպես մետաղագործության հնագույն հիմնական օջախներից մեկը, սկզբնավորվելով, առնվազն, հինգ հազար տարի առաջ: Ավելի ուշ Հայաստանը դարձավ քրիստոնեությունը որպես պետական կրոն

¹ Նույն տեղում, p. 296.

ընդունած առաջին ընդարձակ թագավորությունը՝ լինելով եկեղեցական ճարտարապետության այն ոճի սկզբնավորողը, որը կանխագործում է մեր սեփական արևմտյան գոթիկան»:

ВКЛАД Д.М.ЛАНГА В ОЦЕНКУ ЦИВИЛИЗАЦИОННОГО НАСЛЕДИЯ АРМЕНИИ

Эдуард Л.Даниелян

Резюме

Британский профессор, историк Д.М.Ланг (1924-1991) занимает значительное место среди арменоведов, востоковедов и кавказоведов в исследовании и оценке цивилизационного наследия Армении. Он является автором ряда книг: *Армяне* (1976), *Армения: колыбель цивилизации* (1970, 1978), *Народы возвышенностей: древний Арарат и Кавказ* (1988).

Характерной особенностью цивилизационной истории является категория культурной преемственности, как следует из концепции Ланга. Высоко оценив цивилизационное значение Армении, Д.Ланг в своей книге *Армения: колыбель цивилизации* отметил: «Древняя страна Армения расположена в высоких горах... Хотя Месопотамия со своими древними цивилизациями Шумера и Вавилона обычно рассматривается вместе с Египтом как основной источник цивилизованной жизни в современном понимании, Армения также может классифицироваться как одна из колыбелей человеческой культуры. Во-первых, как утверждается в Книге Бытия, Ноев ковчег остановился на вершине горы Арарат, в самом центре Армении... Армения требует нашего внимания как один из основных очагов древней металлургии, берущей начало, по крайней мере, пять тысяч лет назад. Позднее Армения стала первым обширным царством, принявшим христианство как государственную религию, являясь зачинателем того стиля церковной архитектуры, который предвосхищает нашу собственную западную готику».

THE CONTRIBUTION OF D.M. LANG IN
VALUING THE CIVILIZATIONAL LEGACY OF ARMENIA

Eduard L. Danielyan

Resume

Professor David Marshall Lang (1924-1991), a British historian has a special place among the scholars of Armenian, Oriental and Caucasian Studies by the virtue of his study and evaluation of the Armenian civilizational legacy. He authored a number of books, such as *The Armenians* (1976), *Armenia: Cradle of Civilization* (1970, 1978), and *The Peoples of the Hills: Ancient Ararat and Caucasus* (1988). As it stems from Lang's concept, the characteristic feature of the civilizational history is a category of cultural continuity. Highly appreciating the civilizational significance of Armenia, D. Lang wrote in his *Armenia: Cradle of Civilization*: "The ancient land of Armenia is situated in the high mountains... Although Mesopotamia with its ancient civilizations of Sumer and Babylon, is usually considered together with Egypt as the main source of civilized life in the modern sense, Armenia too has a claim to rank as one of the cradles of human culture. To begin with, Noah's Ark is stated in the Book of Genesis to have landed on the summit of Mount Ararat, in the very centre of Armenia.... Armenia has a claim on our attention as one of the principal homes of ancient metallurgy, beginning at least five thousand years ago. Later on, Armenia became the first extensive kingdom to adopt Christianity as a state religion pioneering a style of Church architecture which anticipates our own Western Gothic."

**ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

*Ալեքսանդր Մանասյան**

*Բանալի բառեր*¹ Ղարաբաղյան հակամարտություն, կոնֆլիկտի կարգավորում, կոնֆլիկտի նախապատմություն, կոնֆլիկտի սեփական պատմություն, պատմական փաստարկները կոնֆլիկտի կարգավորման գործընթացում, փոխզիջումներ, ստատուս-քվո:

Մովորաբար, միջազգային զինված հակամարտությունների կարգավորման ընթացքում միջնորդները կողմերին հորդորում են չխորանալ պատմության մեջ, չդիմել պատմական փաստարկների (նույն համառությամբ այդ պահանջը չի առաջադրվում իրավական փաստարկների դեպքում, չնայած այս կամ այն կերպ հասկացվում է, որ դրանք նույնպես պետք է շրջանցվեն): Ղարաբաղյան հակամարտության դեպքում այդ պահանջը բաց տեքստով կամ ոչ բացահայտ ուղղված է լինում հատկապես հայկական կողմերին՝ այն ենթադրությամբ, թե իբր հենց նրանք են սիրում դիմել պատմական անցյալին և այդ հիմքով ներկայացնել հակամարտության հետ կապ չունեցող փաստարկեր և ոչ կառուցողական առավելապաշտական պահանջներ: Խորհրդային պետական հայտնի գործիչ Եվգենի Պրիմակովը թափանցիկ ակնարկով մեզ այդ հարցում «մեղադրել» է դեռևս 1988թ., երբ հարցը քննարկվում էր հիմնախնդրին նվիրված Խորհրդային Միության (հետայսու՝ ԽՍՀՄ)¹ ԳԽ նախագահության նիստում: Մոտեցումը որդեգրված է նաև Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խմբի (ՄԽ) համանախագահների կողմից, որոնց առաջարկություններում որևէ ուղղակի անդրադարձ չկա խնդրի պատմու-

*Փ.գ.դ., պրոֆ.:

¹ Պետությունների, կազմակերպությունների և աշխարհագրական անվանումների հապավումները փակագծերում կօգտագործվեն տեքստում դրանց անվանման առաջին հիշատակման կողքին, իսկ այնուհետև ըստ լեզվառճական հարմարության կօգտագործվեն լրիվ անվանումները կամ հապավումները:

թյանը՝ որպես իրենց առաջարկի հիմնավորում: Բանակցությունների ընթացքում պատմությունը շրջանցելու սովորաբար բանավոր խոսքի ձևով ներկայացվող հորդորը կամ պահանջը հանգում է հետևյալին. «սուզվելով» պատմության մեջ՝ կողմերն այնքան են հեռանում խնդրի արդի վիճակից, որ սկսում են խոսել նրա հետ անմիջապես կապ չունեցող թեմաներից և բերում փաստարկներ, որ կապ չունեն կոնկրետ իրադրության հետ և չեն կարող նպաստել հակամարտության կարգավորմանը: Մոտեցումն ընդհանրացվում է բանակցային գործընթացին կանխահղվող մեթոդաբանական այն դրույթով, թե պատմությունը չի կարող կառուցողական դերակատարություն ունենալ կոնֆլիկտի խաղաղ հանգուցալուծման բանակցային գործընթացում, որ իրենք (այսինքն՝ միջնորդները) փորձում են դնել փոխըմբռնման ու փոխզիջումների ուղու վրա:

Համանախագահների նման պահվածքը բացատրություն ունի, և այն գուրկ չէ բանական հիմքերից: Իրոք, Ղարաբաղյան հակամարտության դեպքում հազիվ թե կառուցողական նշանակություն ունենա պատմականորեն հավաստի այն դրույթը, թե երբ Քուրդ եղել է հայկական պետության հյուսիսարևելյան սահման, տարածաշրջանում ընդհանրապես թուրքեր չեն եղել: Միջնորդներն այդ փաստը չեն կարող հիմք ընդունել խնդրի կարգավորման որևէ առաջարկ ներկայացնելու համար: Եվ նրանց կարելի է հասկանալ: Նույն տրամաբանությամբ նրանք նշանակություն չեն տալիս (դարձյալ պատմականորեն հավաստի) այն փաստին, որ ընդհուպ մինչև XX դարը Հարավային Կովկասում ոչ *Ադրբեջան* անունով պետություն է եղել և ոչ էլ այդ էթնոնիմն ունեցող ազգություն, որ 1920թ. Խորհրդային Ադրբեջանը հիմնվել է որպես ոչ ազգային հանրապետություն (այդ տեսակետից այն միակն է եղել ԽՍՀՄ-ում), որտեղ խորհրդային տարիներին ցեղասպանության է ենթարկվել նրա հիմնադիր ժողովուրդներից մեկը՝ ադրբեջանահայությունը¹: ԵԱՀԿ ՄԽ համանախագահներն անգամ նման փաստերի մասին չեն սիրում խոսել: Ավելի հաճախակի հնչեղություն է տրվում քաղաքական իրատեսության և նպատակահարմարության գաղափարներին:

¹ Ի դեպ, պատմությանը չդիմելու միջնորդների պահանջը Ստեփանակերտն ու Երևանը, ի տարբերություն Բաքվի, ըմբռնումով են ընկալում և աշխատում հնարավորության սահմաններում հետևել դրան չնկատելու տալով Բաքվի կողմից գրեթե ամեն օր հնչեցվող պատմական փաստարկները և չարձագանքելով դրանց: Խոսքը հենց բանակցային գործընթացի հետ այս կամ այն կերպ կապված միջազգային կառույցներում ադրբեջանական կեղծ փաստարկները հերքելու, դրանք պակասզերծելու մասին է, այլ ոչ գիտական հրատարակություններում կամ մամուլում առկայծող հողվածների մասին, որ մենք հասցեագրում ենք առավելապես մեր ներքին լսարանին: Հարկ է ընդգծել՝ թե՛ իրավունքի, թե՛ բարոյականության տեսակետից բանական ոչ մի արդարացում չի ստանում միջազգային ատյաններում մեր կողմից պահպանվող լռությունն ադրբեջանահայության ցեղասպանության մասին:

Բայց պարզվում է, որ պատմական (և նաև իրավական) փաստարկներից հետո մնալու միջնորդների հորդորները միայն բանակցային գործընթացի արդյունավետության պրագմատիկ նկատառումներով չեն արվում: Ավելին, այդ մտահոգությունը չէ կոնֆլիկտների պատմությունը դրանց կարգավորման գործընթացներից դուրս մղելու միջնորդների հիմնական շարժառիթը: Կա հանրայնորեն հայտնի այլ մի բացատրություն՝ չնայած միշտ չէ, որ այդ մասին խոսվում է: Բանն այն է, որ գլոբալացված աշխարհում ծագող բացառապես բոլոր կոնֆլիկտներն անմիջապես հայտնվում են գերտերությունների շահերի դաշտում: Այլևս չկա որևէ հիմնախնդիր, որ նրանք «չհամարեն իրենցը», չկա որևէ կետ, որտեղ ծագած կոնֆլիկտը կարգավորելու կամ ավելի բորբոքելու հարցում նրանք դրսևորեն անտարբերություն: Գլոբալ քաղաքական դաշտի ամեն մի խոշոր խաղացող ձգտում է օգուտ քաղել այստեղ ու այնտեղ ծագող կոնֆլիկտներից, օգտագործել դրանք որպես տարածաշրջանային գործընթացների կառավարման գործիք: Հենց դա է սովորաբար նկատի առնվում, երբ խոսվում է կոնֆլիկտի քաղաքականացման մասին: Ասվածը նորություն չէ, ինչպես նորություն չէ և այն, որ կոնֆլիկտների վերահսկման ու կառավարման ամենահարմար ու փորձված եղանակներից մեկը վաղնջական ժամանակներից հայտնի միջնորդական գործառույթի ստանձնում է: Պատահական չէ, որ միջազգայնորեն նշանակալից բոլոր կոնֆլիկտների կարգավորման միջնորդական առաքելությունը մեր օրերում իրագործում են աշխարհի հզորները՝ գլոբալ քաղաքական դաշտի գլխավոր դերակատարները, որ հենց Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Ֆրանսիան են Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբում համանախագահող պետությունները:

Կոնֆլիկտների քաղաքականացումը բացատրություն է տալիս այն հարցին, թե ինչ ուշադրության են արժանանում հակամարտ կողմերի պատմական, իրավական (առավել ևս՝ բարոյական) բնույթի փաստարկները: Խնդիրը քաղաքականացնող միջնորդների (և նաև նկրտումներ ունեցող կողմի) համար դրանք դառնում են իրենց գործողությունները սահմանափակող կանխապայմաններ, որ կարող են խանգարել վեճի՝ իրենց համար նպաստավոր կարգավորմանը: Բնական է, որ այդ մասին միջնորդները չեն բարձրաձայնում: Պրագմատիկ կեցվածքով նրանք կողմերին առաջարկում են ձևակերպել իրողություններն այնպես, ինչպես դրանք կան որպես առկա փաստեր և այնուհետև, հաշվի նստելով իրողությունների հետ, ձևակերպել իրենց պահանջները՝ փոխզիջումային տեխնոլոգիաներով համաձայնու-

թյան հասնելու համար¹: «Հաշվի նստել իրողությունների հետ» պահանջը, որը բանակցություններում ներկայացվում է որպես իրատեսության հորդոր, սովորաբար հենց պատմական ու իրավական փաստարկները շրջանցելու համար է առաջադրվում:

Միջնորդների համար ձեռնտու «Քաղաքականությունը պատմության հետ գործ չունի» տարածում ստացած արտահայտությունը պարզ ձևակերպմամբ լայն հանրությանը ներկայացվող այն մտքերից մեկն է, որով նրանք համոզում են, որ հակամարտությունների կարգավորման գործընթացներում քաղաքականությունը գերիշխում է բացարձակ իմաստով՝ անմնացորդ դուրս մղելով այլ կարգի բոլոր փաստարկները: Բանաձևն այնքան հաճախ է առկայծում քաղաքական վերլուծություններում ու տարաբնույթ տեղեկատվական հոսքերում, որ թվում է, թե այն կասկածից դուրս ճշմարտություն է: Մակայն հարցի ավելի հանգամանալից վերլուծությունը պարզում է դրան տրամագծորեն հակառակ իրողություն: Դրանում համոզվելու համար բավական է դիմել կոնֆլիկտների կարգավորման միջազգային փորձին²:

Փաստի խորքային իմաստավորումը տանում է դեպի կոնֆլիկտի՝ որպես սոցիալական երևույթի տեսական-փիլիսոփայական վերլուծությունը: Այդ համատեքստում է հասկանալի դառնում, որ կոնֆլիկտի պատմությունը նրա գոյաբանության կայանատեղին ու նրանում ներդրված իմաստների զետեղարանն է: Նրանով է անցնում դեպի այդ իմաստները տանող ուղին, նա է տրամադրում հակամարտող կողմերի քաղաքական ու բանակցային վարքի, նրանց բանակցային մարտավարության ու ռազմավարական նպատակների ըմբռնման բանալիները: Ղարաբաղյան հակամարտությունն այդ իմաստով բացառություն չէ:

Դրույթը, որը մենք այստեղ կփորձենք հիմնավորել, հակամարտու-

¹ Այդ ձևով նրանք ներկայանում են որպես խնդրի կարգավորմամբ ու բանակցությունների արդյունավետությամբ մտահոգ միջնորդներ: Բնչ-որ իմաստով համոզիչ այդ փաստարկը, ինչպես ասում են, միայն ճշմարտության կեսն է: Իրականում նրանք լռում ու լռությամբ շրջանցում են հակամարտության հանգուցալուծման ավելի կարևոր այն հիմքերը, որոնք առկա են հիմնախնդրի իրավական փաթեթում: Շրջանցվում և լռության են մատնվում այնպիսի կարևորագույն իրավական հարցեր, ինչպիսիք Արցախի ու Ադրբեջանական Հանրապետության հռչակման լեգիտիմության ու նրանց տարածքային հավակնությունների օրինականության հարցերն են, որոնք ուղիղ գծով նրանց հետ կտաննեն դեպի 1918-1920թթ., իսկ եթե ցանկություն չունենային այդքան «հեռուն գնալ», իրավական մոտեցման հարկադրությամբ կանդրադառնային Ստեփանակերտում ու Բաքվում անկախացման կապակցությամբ ընդունված իրավական փաստաթղթերին: Իրավական մոտեցման այդ պարտադրող ներուժից է, որ ամեն կերպ խույս են տալիս միջնորդները հեշտացնելով նաև բանակցային սեղանների շուրջ պատմական փաստարկներն արժեզրկելու իրենց մարտավարությունը:

² Ի դեպ, այդ փորձը հատուկ դիտարկման կարիք ունի կոնֆլիկտների՝ պատմության բանակցային գործընթաց թափանցելու, այդ գործընթացում երևակվելու, այնտեղ ուղղակի կամ անուղղակի ձևով ներկա լինելու փաստի տեսական իմաստավորման համար:

թյան կարգավորման քաղաքական (ոչ ուժային) գործընթացից նրա պատմությունը դուրս մղելու անհնարինությունն է, որ մեր թեմայի դեպքում հաստատում են ինչպես ԵԱՀԿ ՄԽ համանախագահների առաջարկած, այնպես էլ Բաքվի, Ստեփանակերտի և Երևանի կողմից խնդրի հանգուցալուծման մասին ընդունված փաստաթղթերը: Սույն հոդվածի պաթոնն այն անվիճելի փաստի հերքումը չէ, որ հզորները քաղաքականացնում են կոնֆլիկտների կարգավորման գործընթացը: Պատմության, իրավունքի ու բարոյականության տեսակետից բոլոր կոնֆլիկտներն ունենում են արդար ու անարդար, զավթող ու պաշտպանվող կողմեր: Եվ եթե արդար կողմն ունի պատմական ու իրավական որոշիչ փաստարկներ և լռում է այդ մասին՝ այն մտայնությամբ, թե դրանք ոչ մի արժեք չունեն, քանի որ խնդիրը քաղաքականացված է, ուրեմն նա տանուլ կտա կռիվը նաև քաղաքական դաշտում: Եթե նա չի տիրապետում այն հնարքներին, թե ինչպես են այդ փաստարկները շրջանցում կամ «թաքուն» օգտագործում «միջնորդության բեռը» ստանձնած խոշոր տերությունները, չի կարող տիրապետել նաև քաղաքական փաստարկումների նրբություններին: Այս հոդվածն այդ մասին է:

Բայց նախ՝ երկու միջանկյալ դիտարկում:

Առաջին դիտարկում. Մենք դիտարկելու ենք հակամարտությունների քաղաքական, բանակցային կարգավորման, այլ ոչ թե կողմերին կամ նրանցից մեկին բռնի ուժով որևէ լուծում պարտադրելու դեպքը: Բռնությամբ, պատերազմով հարաբերություններ պարզելու ժամանակ ոչ միայն պատմական, այլև իրավական, բարոյական ու այդ կարգի բոլոր փաստարկներն են մոռացության մատնվում: Միջազգային հանրությունը, ի դեմս ԵԱՀԿ-ի, Ղարաբաղյան հակամարտության հանգուցալուծումը տեսնում է միայն նրա խաղաղ կարգավորման ուղիներում: «Ղարաբաղյան հակամարտությունը չունի ռազմական լուծում» բանաձևը, որ ԵԱՀԿ անունից հավաստում են միջնորդները, սոսկ ձևական բնույթ չունի: Տարածքային ամբողջականության ու ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքների հետ մեկտեղ՝ այն մեկն է այն երեք սկզբունքներից, որոնք դրված են խնդրի կարգավորման հիմքում: ԵԱՀԿ-ն այն որդեգրել է ոչ միայն կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված առաքելություններին առերևույթ հարազատ մնալու նկատառումներով: Ամենայն հավանականությամբ, վճռական նշանակություն է ունեցել տարածաշրջանում 1991-ին հաստատված և մինչ օրս պահպանվող աշխարհաքաղաքական հավասարակշռության հանգամանքը: Բայց ինչպիսին էլ լինեն միջազգային հանրության կողմից այդ սկզբունքների որդեգրման բացատրությունները, փաստ է, որ 1992-ից ի վեր դրանք մնում են անփոփոխ: Ուժի կամ

նրա կիրառության սպառնալիքի բացառումը, որը ԵԱՀԿ-ն դրել է հակամարտության կարգավորման հիմքում, նշանակում է, որ հիմնախնդրի կարգավորման մանդատն ստացած միջազգային այդ կառույցը ստանձնել է հարցի ոչ ուժային լուծմանը հետամուտ միջնորդի առաքելությունը: Ընդ որում, այդ գաղափարախոսությամբ ուժի գործադրման կամ կողմերից մեկին խնդրի որևէ լուծում պարտադրելու արգելքը վերաբերում է ոչ միայն հակամարտ կողմերին, այլ նաև իրեն՝ ԵԱՀԿ-ին, որը շուրջ քառորդ դար է, ինչ իր առաջարկությունները չի պարտադրում կողմերին և հաշտվում է դրանք Բաքվի, Ստեփանակերտի կամ Երևանի կողմից մերժվելու փաստերի հետ¹: ԵԱՀԿ-ն, այսպիսով, հիմնախնդրի կարգավորման նախագծերն առաջադրել է սուկ որպես առաջարկություններ:

Հարցը, որին դեմ են առնում ԵԱՀԿ որդեգրած սկզբունքների կոնֆլիկտաբանական իմաստավորման փորձերը, այն է, թե արդյոք սկզբունքորեն հնարավոր է հակամարտության հետ կապված պատմաիրավական փաստերի դուրսմղումը (շրջանցումը, անտեսումը) բանակցային խոսույթից, երբ միջնորդներն ուժի բացառման պայմանով հորդորում են կողմերին խնդրի հանգուցալուծմանը հասնել փոխզիջումների ճանապարհով: Ինքը՝ փոխզիջումն արդեն անհրաժեշտաբար ենթադրում է անդրադարձ նախկին կարգավիճակներին ու սահմաններին, անցյալի իրավական իրողություններին, այն բանին, թե իրավունքի տեսակետից ինչ է պատկանել (պատկանում) կողմերին՝ դրա հիման վրա փոխզիջման գնալու համար: Ակնհայտ է, որ *փոխզիջումների ուղին դեպի պատմություն տանող ուղի է*:

Երկրորդ դիտարկում. Պարզվում է, այնուամենայնիվ, որ կա հակամարտ կողմերի հարաբերությունների կարգավորման այնպիսի տարբերակ, որը չի ենթադրում պատմական (և նաև իրավական) փաստարկներին դիմելը: Դա կոնֆլիկտի կարգավորման այն տեխնոլոգիան է, որը հայտնի է *ստատուս-քվո* անվամբ:

Ստատուս-քվոն հակամարտության սառեցումը կամ ընդհանրապես դադարեցումն է մի կետում, որտեղ հաստատվում է ուժերի այնպիսի հավասարակշռություն (դրա մասնավոր դեպք է կողմերի ուժասպառ լինելը), որ անիմաստ է դարձնում հետագա առճակատումը: Ստատուս-քվոն հաճախ հաստատվում է նաև խնդրով շահագրգիռ հզորների միջամտությամբ կամ պարտադրանքով, եթե կոնֆլիկտի շարունակումը վտանգում է նրանց շահերը: Կողմերը կարող են հաշտվել դրա հետ, և այդ դեպքում ստատուս-

¹Սա չի բացառում միջազգային հանրության՝ կողմերին խաղաղություն պարտադրելուն ուղղված քայլերը:

քվոն դառնում է հակամարտության հանգուցալուծում: Այդտեղ մի տեսակ կտրվում են նախորդ շրջանի զարգացումների տրամաբանությունը, կողմերի նպատակներն ու վարքի շարժառիթները: Կոնֆլիկտի պատմությունը ծվարում է դասագրքերում և ժողովուրդների ու ազգերի հիշողության մեջ: Խաղաղությունը պահպանվում է այնքան, որքան նրանք հարգում են հաստատված ստատուս-քվոն՝ փաստացի հաստատված վիճակը, որ մեծ կոնֆլիկտների դեպքում սովորաբար միջազգային քաղաքական և ուժային հավասարակշռության արդյունքում է հաստատվում:

Մեր մոլորակի վրա հաստատված պետական բոլոր սահմաններն ինչ-որ իմաստով ստատուս-քվոյի միջոցով հաստատված սահմաններ են, ինչ-որ ժամանակ հաստատված ռազմաքաղաքական հավասարակշռության արդյունք: Ինչպես պատմական փորձն է ցույց տալիս, նրանց անսասանության որևէ երաշխիք չկա: Ստեղծված հավասարակշռությունը որևէ հիմք չի տալիս հուսալու, որ նոր միջազգային քաղաքական իրադրություններում այն չի դառնա հին կոնֆլիկտի բորբոքման նոր մեկնակետ:

Մեր քննարկման թեման այստեղ ոչ թե հաստատված ստատուս-քվոն ուժի կիրառությամբ փոխելն է, այլ նրա վերանայումն է բանակցային սեղանի շուրջ՝ ուժի կամ նրա գործադրման սպառնալիքի բացառման պայմանով:

Ակնհայտ է, որ ստատուս-քվոյի այդպիսի վերանայումը ենթադրում է վերադարձ անցյալի ինչ-որ իրավիճակի, որի խախտված լինելը կողմերից մեկը համարում է իր համար անարդար ու անընդունելի: Ղարաբաղյան կոնֆլիկտը հենց այդպիսի կոնֆլիկտ է ըստ ադրբեջանական կողմի, որն իրեն ներկայացնում է հայկական ագրեսիայի գոհ: Դատելով ԵԱՀԿ միջնորդների հոետորաբանությունից և կոնֆլիկտի հանգուցալուծման մասին ներկայացվող առաջարկություններից, որոնցում ենթադրվում է այսպես կոչված գրավյալ տարածքների վերադարձ, նրանք նույնպես խնդիրն այդպես են հասկանում: Ենթադրվում է վերադարձ անցյալի ինչ-որ իրավիճակի: Մա նշանակում է, որ *ղարաբաղյան պատերազմի արդյունքում հաստատված ստատուս-քվոյի ցանկացած վերանայում, եթե այն կատարվում է բանակցությունների միջոցով, դարձ է դեպի խնդրի պատմությունը, որին, ինչպես տեսանք վերը, անխուսափելիորեն տանում է նաև փոխզիջումների մարտավարությունը*: Ահա թե ինչու, հակառակ պատմությանը չդիմելու իրենց հորդորներին, որոնցով միջնորդները դիմում են կողմերին, հենց իրենք են իրենց առաջարկություններում ու խնդրի առնչությամբ արված հայտարարություններում ուղղակի կամ անուղղակի անդրադառնում հիմնախնդրի պատմությանը: Նույնը, ինչպես կտեսնենք, անում են կոնֆլիկտի կողմերը:

«Կոնֆլիկտի նախապատմություն» և «կոնֆլիկտի սեփական պատմություն» հասկացությունները

Մակայն այստեղ ծագում է մի հարց, որից մենք սկսել ենք նյութի շարադրանքը: Ի՞նչ խորությամբ կարող են կողմերն ու միջնորդները «սուզվել» պատմության խորքը, որպեսզի չհակասեն բանակցությունների արդյունավետության ու փաստարկների իմաստավորության, դրանց «աշխատունակության» պահանջին: Պատմական բնույթի ո՞ր փաստարկներն ունեն ընկալվելու, ընդունվելու շանս: Արդեն նշել ենք, որ «Երբ Քուռը Հայաստանի սահման է եղել, տարածաշրջանում թուրքեր ընդհանրապես չեն եղել» հավաստի պատմական փաստը միջնորդները չեն կարող ընկալել ու ընդունել որպես դարաբաղա-ադրբեջանական հակամարտության կարգավորման փաստարկ: Բնականորեն հարց է ծագում, թե պատմական որ փաստերն ունեն կառուցողական ներուժ՝ դրանք բանակցային գործընթացում ներգրավելու համար: Ինչ-որ իմաստով դրա պատասխանն արդեն տվել է կոնֆլիկտաբանությունը՝ առանձնացնելով կոնֆլիկտի պատմության փուլեր, որոնք ունեն համընդհանուր կիրառության բնույթ: Առաջինը կոնֆլիկտի ձևավորման, հասունացման փուլն է, ինկուբացիոն այն շրջանը, որը հայտնի է որպես *կոնֆլիկտի նախապատմություն*: Երկրորդը կոնֆլիկտի բուռն զարգացման, լատենտ ձևերից բաց ձևերի անցման շրջանն է, որի համար մենք կօգտագործենք *կոնֆլիկտի սեփական պատմություն* (երբեմն նաև *կոնֆլիկտի բուն պատմություն*) եզրը: Վերջապես, կոնֆլիկտի պատմության երրորդ փուլը նրա *կարգավորման ու հանգուցալուծման փուլն է*, որի ելքը պիտի լինի հակամարտության մարումը՝ կողմերի համար ընդունելի որոշակի ստատուս-քվոյի հաստատմամբ (կամ կողմերից մեկին դրա պարտադրմամբ):

Որպես հարցի վերլուծության մեթոդաբանական մեկնակետ մենք առաջադրում ենք հետևյալ երկու դրույթները.

Առաջին. կոնֆլիկտի նախապատմությանը պատկանում են բոլոր այն փաստերը, առանց որոնց հնարավոր չէ հասկանալ նրա ծագումն ու բնույթը, կողմերի քաղաքական վարքը, նրանց առաջ մղող շարժառիթները:

Երկրորդ. կոնֆլիկտի սեփական պատմությանը պատկանում են բոլոր այն փաստերը, առանց որոնց հնարավոր չէ սահմանել կոնֆլիկտի առարկան, որոնք ուղղակի ազդեցության ներուժ ունեն նրա կարգավորման նախագծերի վրա և կարող են հաշվի առնվել որպես նրա հանգուցալուծման հիմնավորումներ:

Փաստերի այդ երկու խմբերի գլխավոր տարբերությունն այն է, որ առաջիններն առավելապես միջնորդավորված ձևով կարող են հաշվի

առնվել հակամարտության կարգավորման ծրագրերում, այն դեպքում, երբ երկրորդները կարող են անմիջապես ներգրավվել բանակցային գործընթացում դառնալ «եզրափակիչ փաստաթղթի» փաստարկ: Հակամարտող կողմերն առաջին խմբի փաստերին դիմում են առավելապես իրենց ընդդիմախոսների քաղաքական կերպարի ձևավորման, հակամարտության արմատների մասին ճշմարտությունը հանուրի սեփականություն դարձնելու համար, այն դեպքում, երբ երկրորդ խմբի փաստերին կարող են դիմել դրանք որպես հանգուցալուծման մեկնակետ կամ հիմնավորում ներգրավելու առաջարկությամբ: Եվ այսպես, խոսելով կոնֆլիկտի կարգավորման գործընթացում պատմության ներկայության մասին՝ մենք նկատի ունենք ոչ թե տարածաշրջանի հեռավոր անցյալին վերաբերող, կոնֆլիկտի հետ անմիջական կապ չունեցող, այլ նրա *բուն պատմության* փաստերը:

Մեր քննարկման առարկան կարգավորման փուլում գտնվող Ղարաբաղյան հակամարտությունն է, որի նկատմամբ կիրառելի են թե՛ առանձնացված փուլերը, թե՛ խնդրի վերլուծության առաջարկվող մոտեցումը: Բայց նախ՝ Ղարաբաղյան հակամարտության նախապատմության և սեփական պատմության մասին՝ հակիրճ անդրադարձով:

Ղարաբաղյան հակամարտության նախապատմությունը (ինկուբացիոն շրջանը)

Ոչ մի հակամարտություն մեկ օրում չի ծնվում: Սովորաբար, բոլոր կոնֆլիկտներն ունենում են նրան անմիջապես նախորդող մի շրջան, մերձավոր պատմական մի միջավայր, որում սկիզբ է առել այն, և որտեղ բացատրություն են ստանում նրա ծագման պատճառներն ու հասունացման շարժառիթները: Դա *կոնֆլիկտի նախապատմությունն է* կամ նրա *ինկուբացիոն* (լատենտ, թաքնված) շրջանը: Ղարաբաղյան կոնֆլիկտի դեպքում այն ընդգրկում է 1828-1918թթ.՝ Անդրկովկասը Պարսկաստանից ռուսական տիրապետության տակ անցնելուց սկսած մինչև Ռեմանովների հարստության վերացումը բոլշևիկների կողմից:

Մինչ այդ էլ Արցախը դիմակայել է տարածաշրջան ելումուտ անող քոչվոր ցեղերի մեկը մյուսին հաջորդող ալիքներին, պաշտպանական մարտեր մղել Անդրկովկաս խուժած օսմանական զորքերի հետ: Հայտնի է, որ Նադիր շահն իր հովանու տակ միավորել է հինգ մելիքական իշխանություններ (*Խամսայի մելիքություններ*)՝ որպես դեպի Արևելք օսմանյան թուրքերի առաջխաղացումը խափանելու պատնեշ: Հերոսական իր այդ մարտերը Արցախը մղել է տարածաշրջանային մի իրադրության պայման-

ներում, երբ Պարսկաստանի սահմաններում գտնվող հարավարևելյան Կովկասում (խորհրդային տերմինաբանությամբ՝ Արևելյան Անդրկովկասում) չկային Արցախին սպառնացող ինքնիշխան պետական գոյացություններ: Կային դաշտային Ղարաբաղի ձմեռոցներում բնավորված իսլամադավան քոչվոր ցեղեր ու ցեղային միություններ, որոնք հարկ էին վճարում ղարաբաղյան մելիքներին նրանց պատկանող ալպիական արոտավայրերում ամառներն իրենց հոտերը պահելու համար¹: Հայտնի են, օրինակ, *յիրմիդորդ* (թարգմանաբար՝ քսանչորս) և *օթուզիքի* (թարգմանաբար՝ երեսուններկու) քոչվոր ցեղերի միությունները, որոնց անուններով տեղանուններ են պահպանվել մինչ մեր օրերը: 1828-ին նախորդած պատմական այդ շրջանը մենք չենք ներառում Ղարաբաղյան հակամարտության նախապատմության մեջ, քանի որ Արցախի ու նրանից դեպի արևելք ընկած տարածքներում ապրող ցեղերի ու ժողովուրդների միջև ծագած հարաբերությունները, ներառյալ նաև կոնֆլիկտները, այլ բնույթ են ունեցել և քաղաքական այլ իրադրության պայմաններում են ծավալվել:

1828-ին, երբ ռուս-պարսկական պատերազմների արդյունքում ողջ Հարավային Կովկասը (ռուսական տերմինաբանությամբ՝ Անդրկովկասը) Պարսկաստանից անցավ Ռուսաստանին, գրավված տարածքների ժողովուրդները, այդ թվում և արևելահայությունը, հայտնվեցին որակապես նոր քաղաքական ու քաղաքակրթական միջավայրում: Այդ նորությունը առավելապես պայմանավորված էր ռուսական արքունիքի կողմից Անդրկովկասում տարվող ազգային քաղաքականությամբ, որը մասնագիտական գրականության մեջ ստացել է *տարածաշրջանի իրանագերծման քաղաքականություն*² որակումը: Ռուսաստանը խնդիր էր դրել Պարսկաստանի ենթակայության տակ դարեր շարունակ գտնված երկրամասն ազատել նրա քաղաքական, տնտեսական, մշակութային ու հոգևոր ներկայությունից (ու նաև նրա հնարավոր ազդեցությունից ապագայում) և ներառել այն ռուսա-

¹ Խաչնարած ցեղերի կողմից ղարաբաղյան մելիքություններին պատկանող լեռնային արոտավայրերից օգտվելու պրակտիկական լայնորեն հայտնի է եղել: Ամենայն հավանականությամբ, հենց այդ ժամանակներում է ձևավորվել համագործակցության «*աշնա-քիրվա*» ինստիտուտը: Սարը բարձրացող ցեղի ամեն ընտանիք բարիորացիական կապեր էր հաստատում լեռնային արոտավայրեր տանող ճանապարհին գտնվող հայկական գյուղերի որևէ մի ընտանիքի հետ, որպեսզի ապահովվի հոտի անվտանգ քոչը: *Քիրվան* սար բարձրացող քոչվորն էր, *աշնան* նստակյաց հայը:

² Թեման լայնորեն արձարծված է պատմագիտական ու քաղաքագիտական գրականության մեջ: Դրան անդրադարձել են թե՛ ռուս, թե՛ եվրոպական հետազոտողները: Լեն հետազոտող Թադեոշ Սվենտեխովսկին իրանագերծման քաղաքականության նպատակը տեսնում է տեղի իսլամադավան ժողովուրդների մեջ իրենց ինքնությունն իրանականության սահմաններում տեսնելու դարերով հաստատված ավանդույթը թուլացնելու մեջ (տե՛ս *Тадеш Свентеховский, Русское правление, модернизаторские элиты и становление национальной идентичности в Азербайджане// Азербайджан и Россия: общества и государства, М., 2001, стр. 13*):

կան քաղաքական, տնտեսական ու մշակութային համակարգ: Դրա համար նա նախ անտեսեց երկրատարածքի իսլամադավան ժողովուրդների ազգային տարբերությունները՝ միավորելով նրանց ընդհանուր *մուսուլմաններ* «զլխարկի» տակ: Միաժամանակ մուսուլմանների մեջ առանձնացրեց թյուրքալեզու զանգվածին, «մկրտեց» նրան *կովկասյան թաթար* էթնոնիմով, ընտրեց այդ զանգվածը որպես երկրամասի իրանազերծման իր քաղաքականության հենարան և օժտեց նրան զանազան արտոնություններով: Այդ ընտրությունը պատահական չէր: Կայսրության արքունիքում առաջնորդվում էին այն հաշվարկով, որ ի տարբերություն վրացիների ու հայերի՝ Պարսկաստանում հիմնականում քոչվորական կյանք վարած և Անդրկովկասում նոր-նոր նստակյացության անցնող այդ զանգվածն անկախ պետականության գաղափար ու գաղափարախոսություն ունենալ չէր կարող: Հաշվի էր առնվում նաև տարածաշրջանում թյուրքերի ու պարսիկների՝ դարերի պատմություն ունեցող հոգևոր ու քաղաքական հակամարտությունը, որ ընդունել էր բացահայտ թշնամանքի բնույթ:

Տասնամյակներ շարունակ կայսրությունը կովկասյան թաթարների համայնքը համալրեց իր թույլտվությամբ Պարսկաստանից Անդրկովկաս թափանցող էթնիկապես տարախառն, հիմնականում թյուրքախոս նորաբնակներով՝ այսպես կոչված *օսիստոնիկներով*¹: Եվ նա դա անում էր այն ժամանակ, երբ տարբեր ձևերով նեղում էր հայերին, փակում հայկական դպրոցները, արտոնում վանքապատկան հողերի զավթումը: XIX դարի վերջերին արդեն *կովկասյան թաթար* անունն ստացած Արևելյան Անդրկովկասի այդ համայնքը դարակեսի փոքրաթիվ համայնքը չէր: Ավելին, Ռուսաստանում ու Եվրոպայում կրթություն ստացած կովկասյան թաթարները հենց XIX դարավերջին իրանազերծման կայսերական քաղաքականության ալիքների վրա ոչ միայն հրաժարվեցին իրանիզմի քաղաքակրթական արժեքներից, այլև կտրուկ շրջադարձ կատարեցին դեպի Մտամբուլ և դարձան պանթյուրքիզմի գաղափարակիրներ և ակտիվ գործիչներ²: Ռուսաստանն

¹ Պարսկաստանից Անդրկովկաս թափանցող *օսիստոնիկներ*ի մասին ուշագրավ հոդվածներ են հայտնվել դեռևս նախախորհրդային տարիներին: Խորհրդային հեղինակներից առանձնանում է “Вопросы истории” ամսագրի 1956թ. N10-ում հրապարակված Ն.Կ. Բելովայի փաստերով հագեցված “Об отходничестве из северо-западного Ирана в конце XIX – начале XX века” հոդվածը, որտեղ վիճակագրական տվյալներով ու վկայություններով հիմնավորվում է այն փաստը, որ XIX դարի վերջին տասնամյակներին և XX դարի սկզբներին ռուսների թույլտվությամբ Անդրկովկաս ներգաղթած և սահմանը ոչ լեզավ կերպով հասած թյուրքալեզու *օսիստոնիկներ*ի թիվը բավական է եղել, որպեսզի այդտեղ տեղի ունենա նախորդ դարերում ձևավորված ժողովրդագրական իրադրության խախտում հօգուտ թյուրքալեզու զանգվածի:

² Այդ իմաստով տիպական է Ահմեթ-բեյ Ադաևի հայացքներում տեղի ունեցած բեկումը: 1890-ականների սկզբներին Իրանը Անդրկովկասի մուսուլմանների ընդհանուր հայրենիքը համարող և Փարիզում կրթություն ստացած Ադաևը XX դարասկզբին պանթյուրքիզմի ջատագովներից ու ակտիվ քաղաքական գործիչներից մեկը դարձավ:

ինքն իր ազգային քաղաքականությամբ նպաստեց, որպեսզի Անդրկովկասը XIX դարի վերջերին դառնա պանթուրքիզմի օջախներից մեկը: Մինչ այդ ռուսական ծառայություններն Արևելյան Անդրկովկասի էթնոքաղաքական նկարագրի համար շրջանառության մեջ էին դրել «մուսուլմաններ ու հայեր» երկանդամ կադապարը, որում հայերն ու մուսուլմանները արձանագրված էին ոչ միայն որպես տարածաշրջանի գլխավոր էթնիկական գործոններ, այլև որպես կողմեր պոտենցիալ այն կոնֆլիկտների, որոնք միջոց պիտի ծառայեին երկրամասում կայսերական քաղաքականության համար:

Միայն XX դարի սկզբներին, հատկապես 1905-1907թթ. հայ-թաթարական բախումներից հետո, ռուսական քաղաքական շրջանակներում գիտակցվեց այն փաստը, որ «կովկասյան թաթարներին երես տալը» հանգեցրել է Արևելյան Անդրկովկասում կայսրության համար վտանգավոր թուրքամետ նոր գործոնի ձևավորմանը: Արքունիքին այդ հարցում «գլխի էր զցում» նաև փոխարքա Վորոնցով-Դաշկովը¹, որը Նիկոլայ II-ին հղած իր նամակներում ընդգծում էր այդ փաստը և կայսրին հիշեցնում տարածաշրջանը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու գործում հայերի ունեցած ծառայությունները: Փոխարքան առաջարկում էր Ելիզավետպոլի նահանգը բաժանել երկու նահանգի և նրա արևմտյան մասը, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում, առանձնացնել, որպեսզի դադարեցվեն նահանգի վարչական մարմիններում խրամատավորված թաթարների կամայականությունները հայերի հանդեպ²:

Հարցը հետագայում քննարկվեց նաև Ժամանակավոր կառավարության կողմից, սակայն մինչև խնդիրը կհանգեր իր հանգուցալուծմանը, վրա հասավ 1917թ. հոկտեմբերը՝ փակելով մեր օրերում Ղարաբաղյան կոնֆլիկտ անվամբ հայտնի հակամարտության նախապատմությունը, պատմական մի ժամանակաշրջան, երբ Ռուսական կայսրությունը տարածաշրջանի իրանագերծման քաղաքականության հունում Արևելյան Անդրկովկասում ձևավորեց թուրքամետ և հակահայ մի գործոն, որը պոտենցիալ վտանգ էր ներկայացնում նաև Ռուսաստանի համար³:

¹ Փոխարքա Վորոնցով-Դաշկովի՝ Նիկոլայ II ցարին ուղղված երկրորդ զեկուցագրի մանրամասն վերլուծությունը տե՛ս *Հրաչիկ Միսնոյան*, Ազատագրական պայքարի ուղիներում, Գիրք V, Երևան, 2013, էջ 486-492:

² Այն, որ ցարիզմի ազգային քաղաքականությունը տարածաշրջանում տարվել է ի նպաստ թուրքական զանգվածի, նկատել են նաև բոլշևիկները Ստալինը, Վորովսկին և ուրիշներ: «...Թաթարները իրենց սոցիալական վիճակով և կրոնական հավատալիքներով ամենից շատ տարբերվում էին հայերից... Նրանց լրիվ ազատություն էր ընձեռվում սպանելու, բռնանալու, թալանելու» (տե՛ս *В.В. Воронский, Сочинения, т. 3, 1933, стр. 106-107*).

³ Պատմությունը երկար սպասել չտվեց: 1917թ. բոլշևիկյան հեղաշրջումից ընդամենը մի քանի ամիս անց՝ 1918թ. հունվարին, թուրքական քաղաքականության ծիրում հայտնված կովկասյան թաթարները Շամքոր, Ելիզավետպոլ, Աղստաֆա, Եվլախ, Ջուլֆա, Խաչմաս

Կոնֆլիկտի սեփական (բուն) պատմությունը

Ղարաբաղյան հակամարտության դեպքում ակնհայտ է, որ նրա սեփական կամ, այսպես ասած, բուն պատմությունը սկսվում 1918-ից, երբ Անդրկովկաս խուժած թուրքական բանակի կողմից հիմնված Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը (ԱԴՀ) տարածքային հավակնություններ է դրսևորել հարևան պետությունների նկատմամբ՝ ի թիվս որոնց նաև իրեն Հայաստանի Հանրապետության անքակտելի մաս հռչակած Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) նկատմամբ: Տարածաշրջանում առաջին անգամ հայտնված ԱԴՀ-ն իրեն Ազգերի լիգայի կողմից ճանաչվելու խնդրագրին կցել է տարածքային անհեթեթ նկրտումների մի քարտեզ՝ Բաքվից մինչև Բաթում, որն, անկասկած, գծել էր Անդրկովկասում նոր թուրքական խամաճիկ պետություն հիմնելու նպատակին հետամուտ Անկարան: Սակայն Մեծ Ադրբեջան հիմնելու թուրքական այդ նախագիծը ձախողվել է ոչ միայն այն պատճառով, որ Ազգերի լիգան չի ճանաչել Բաքվից ներկայացված այդ հավակնությունները, այլև առավելապես այն պատճառով, որ այդ նախագծի իրագործման ճանապարհին կանգնել էր իր ազատությունը և փաստացի անկախությունը պաշտպանող Արցախը¹: Հենց 1918թ. Արցախի և մուսավաթական Ադրբեջանի միջև ծավալված զինված բախումներով էլ սկսվում է Ղարաբաղյան *հակամարտության սեփական պատմությունը*, իսկ 1919-1920թթ. Ազգերի լիգայում խնդրի քննարկումները² նշանավորել են հարցի միջազգայնացումը: *1918թ. զինված ընդհարումներից մինչև մեր օրերը տարբեր ձևերով ու տարբեր ինտենսիվությամբ շարունակվող Արցախ-Ադրբեջան առձակատումը հենց այն է, ինչ մենք անվանում ենք Ղարաբաղյան հակամարտության սեփական պատմություն: Դա մի շրջան է, որի ամբողջ ընթացքում չեն փոխվել ոչ կոնֆլիկտի առարկան, ոչ բնույթը,*

կայարաններում հարձակվեցին այն գնացքների վրա, որոնցով ռուս զինվորները փրկված ռազմաձակատից տուն էին վերադառնում և ջարդեցին նրանց (տե՛ս «Бакинский рабочий», №№ 30 и 31, 1918, ինչպես նաև Վ. Մելիքյան, Ելիզավետպոլի և Շամխորի իրադարձությունները Անդրկովկասում իշխանության հիմնահարցի համատեքստում (1917թ. նոյեմբեր-1918թ. փետրվար), Պատմա-բանասիրական հանդես, № 2, 2014): Ակնատեսների վկայությունների մասին տե՛ս Ս. Եմևսկիյ, Шамхорская трагедия (рассказ очевидца)//Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 12-13, Երևան, 2003):

¹ Արցախ և Լեռնային Ղարաբաղ անվանումները հումանիշներ են թե՛ ազգագրական, թե՛ պատմական, թե՛ աշխարհագրական առումներով:

² Ազգերի լիգայում Ղարաբաղյան հարցի առնչությամբ տեղի ունեցած քննարկումների նյութերն ու ընդունված փաստաթղթերը զետեղված են Գ.Բարսեղովի խմբագրությամբ Մոսկվայում 2008թ. «Нагорный Карабах в международном праве и мировой политике (Документы и комментарии)» վերստառությամբ լույս տեսած երկհատորյակի առաջին հատորի VII գլխում, էջ 543-592:

ոչ կողմերը: Այն ծագել ու մնացել է որպես Արևելյան Անդրկովկասի ազգային պետական կառուցվածքի շուրջ ծագած հակամարտություն, որի մի կողմում մի ժամանակ մուսուլման, հետո կովկասյան թաթար, իսկ հիմա ադրբեջանցի անունով հանդես եկած Արևելյան Անդրկովկասի թուրքը կամ թուրքացած զանգվածն է, որ 1918-ից ի վեր ընդգրկված է Հայոց ցեղասպանության, տարածաշրջանից հայկական գործոնը դուրս մղելու թուրքական ծրագրում, իսկ մյուս կողմում՝ իր գոյության և ինքնության պահպանության համար պայքարող Արցախի և Արևելյան Անդրկովկասի հայությունը: Բուն Ղարաբաղյան կոնֆլիկտն արդեն իսկ ունի մի ամբողջ դարի պատմություն:

Եվ այսպես, 1918-ին թուրքական ներխուժումով սկսված և մինչ օրս շարունակվող հակամարտության անընդհատականությունը 1918-ից մինչ օրս թույլ է տալիս այդ ամբողջ շրջանի մեջ տեսնել նրա սեփական պատմությունը: Կողմերը նույնն են մնացել 1918 թվականից մինչ օրս, չնայած փոխվել են պետաիրավական այն կարգավիճակներն ու ձևաչափերը, որոնցում նրանք ներկայացված են եղել հարյուրամյա հակամարտության ընթացքում: Այդ փոփոխությունները թույլ են տալիս կոնֆլիկտի սեփական պատմության մեջ առանձնացել փուլեր, որոնք համընկնում են տարածաշրջանի պատմության շրջափուլերին: Դա առանձին դիտարկման նյութ է: Մեր խնդիրն այստեղ այն հարցի քննությունն է, թե հակառակ պատմությանը չդիմելու միջնորդների հորդոր-պահանջներին՝ ինչ ուղղակի ու անուղղակի ձևերով է այն երևակվում-ներկայանում բանակցային խոսույթում և միջնորդների առաջարկություններում:

Ստորև մենք կփորձենք ցույց տալ, թե ինչպես է կոնֆլիկտի սեփական պատմությունը համառությամբ (ավելի մեծ համառությամբ, քան կարելի է պատկերացնել) թափանցում միջնորդների կողմից ներկայացված բոլոր այն փաստաթղթերից ու հայտարարություններից ներս, որոնք մշակվել կամ արվել են հենց պատմությունը շրջանցելու (հայտարարված կամ լռելյայն ընդունված) նպատակադրությամբ: Կոնֆլիկտի պատմությունը «դռնով կամ հետնամուտքով» բանակցային գործընթաց է մտնում ամեն անգամ, երբ առաջարկություններ են ներկայացվում փոխզիջումների կամ ինչ-որ ժամանակ հաստատված հավասարակշռությունը (ստատուս-քվո) փոփոխելու շուրջ: Եվ այդ հանգամանքը հատուկ բացատրությունների կարիք չունի: Մասնավորապես, ակնհայտ է, որ ստատուս-քվոյի ցանկացած վերանայում, եթե կողմերն ու միջնորդները հետամուտ են հիմնախնդրի ոչ ուժային կարգավորմանը, բանակցային գործընթացը շրջում է դեպի խնդրի

պատմություն՝ խնդրի հանգուցալուծումը կողմնորոշելով դեպի անցյալի ինչ-որ իրավիճակ: Մեր խնդիրն այստեղ այդ փաստի բացահայտումն է:

Կոնֆլիկտի պատմությունը Մինսկի խմբի առաջարկություններում

Նախ՝ ԵԱՀԿ ՄԽ առաջարկությունների մասին: Ստեփանակերտին, Բաքվին և Երևանին ՄԽ-ի կողմից առաջարկված կոնֆլիկտի կարգավորման նախագծերի պատմական բաղադրիչի վերհանման փորձ մեզանում դեռ չի արված: Այստեղ մենք կդիտարկենք այդ փաստաթղթերում տեղ գտած այն անդրադարձները, որ վերաբերում են փախստականությանն ու ներքին տեղափոխվածներին, տարածքային հարցերին և Արցախի կարգավիճակին: Հակիրճ ձևակերպումներով այդպիսիք կան նաև 2016-ի դեկտեմբերին Համբուրգում կայացած ԵԱՀԿ նախարարական գագաթաժողովի շրջանակներում ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների արտգործնախարարների համատեղ հայտարարության մեջ: Միջնորդ համանախագահները ենթադրում են, որ փախստականների ու ներքին տեղափոխվածների խնդիրը պետք է լուծվի այնպես, որ նրանք վերադառնան իրենց նախկին բնակավայրերը: Եվ այդ մասին նրանց առաջարկություններում ասվում է տարընթերցումներ չհանդուրժող ձևակերպումներով: Փաստորեն, ենթադրվում է վերադարձ այն իրավաքաղաքական միջավայրը, որում ապրել են այդ մարդիկ: Դա նշանակում է նրանց համար ապահովել իրենց նախկին բնակության վայրերում անվտանգ ապրելու պայմաններ¹: Խնդրին քիչ թե շատ ծանոթ ամեն մի փորձագետի համար ակնհայտ է, որ այդ առաջարկությունն անիրագործելի է: Բաքուն Արևելյան Անդրկովկասի հայությանը (ադրբեջանահայությանը) ցեղասպանական գործողություններով դուրս չի մղել, որպեսզի համաձայնվի իր բնակության նախկին վայրերը նրա վերադառնալու միջնորդների առաջարկին:

Զանգվածային ջարդերից փրկված ադրբեջանահայ փախստականները և հենց Բաքվի կողմից սանձազերծված պատերազմի պատճառով տեղափոխված ադրբեջանցիները տարբեր բնույթի կորուստներ կրած կողմեր են: Մեկը՝ հայը, հազիվ է փրկվել կոտորածներից և հայտնվել իր

¹ Միջնորդների ներկայացրած այդ պահանջը տեղ է գտել նաև Համբուրգում 2016-ի դեկտեմբերին կայացած ԵԱՀԿ նախարարական գագաթաժողովի շրջանակներում, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարներ ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի, ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիի և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան-Մարկ Էյրոյի Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցով ընդունած համատեղ հայտարարության մեջ: Այն ենթադրում է «...ներքին տեղահանված բոլոր անձանց և փախստականների վերադարձ իրենց նախկին բնակության վայրեր և միջազգային անվտանգության երաշխիքներ, որոնք ներառում են խաղաղապահ գործողություն»: Տե՛ս <https://goo.gl/40qrv6>

քաղաքացիության երկրի սահմաններից դուրս, մյուսը՝ ադրբեջանցին, պատերազմի հետևանքով հարկադրված է եղել տեղափոխվել բնակության մեկ այլ վայր մի երկրում, որը նա համարում է իր քաղաքացիության երկիրը (միայն այս հանգամանքը հերիք է՝ հաստատելու համար, որ Ղարաբաղյան հակամարտության համատեքստում ադրբեջանցի փախստական չկա): Առանց խնդիրն ավելի մանրամասնելու կարելի է անվարան պնդել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների կողմից հակամարտության խաղաղ կարգավորման համար առաջադրված պայմանը, որ կապված է հայ փախստականության ու բնակության վայրը հարկադրված կերպով փոխած ադրբեջանցիների հետ, ենթադրում է պատմական նյութի ներգրավում, առանց որի հնարավոր չէ նշված կարգերին դասվող մարդկանց կրած վնասների հատուցումն ու նախկին կարգավիճակի վերականգնումը: Դա հայ փախստականների անցյալ կարգավիճակի վերականգնման և պատերազմի հետևանքով բնակության վայրը փոխած ադրբեջանցիների վերաբնակեցման իմաստն ունեցող առաջարկություն է: Ակնհայտ է, որ ինքը՝ առաջակը, կարգավորման գործընթաց է բերում հակամարտության մերձավոր պատմությունը:

Մյուս հարցը, որին համանախագահները անդրադարձել են իրենց բոլոր առաջարկություններում, ԼՂ ապագա կարգավիճակին է վերաբերում: Խնդիրը ներկայացվում է այնպես, որ ներկա կարգավիճակը չի կարող դիտվել կոնֆլիկտի հանգուցալուծում ԵԱՀԿ-ի կողմից խնդրի կարգավորման հիմքում դրված սկզբունքների տեսակետից, որոնց մեջ դրված է նաև Ադրբեջանական Հանրապետության (ԱՀ) տարածքային ամբողջականության սկզբունքը: Այդպիսի հարցադրումն ակնհայտորեն ենթադրում է նահանջ ստատուս-քվոյից՝ փաստացի հաստատված իրավիճակից, որ, ինչպես նշվեց վերը, բանակցային գործընթացում անխուսափելիորեն բացում է դռները պատմական փաստարկների առաջ¹:

¹ Վեցերորդ գումարման ՀՀ Ազգային ժողովին հղած իր ուղերձի՝ Ղարաբաղյան հակամարտությանը վերաբերող մասում ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանն անդրադարձել է *ստատուս-քվոյին* և *փոխզիջմանը*՝ կարևորելով դրանք որպես հակամարտության կարգավորման իրավաքաղաքական գործիքներ: Սհա ուղերձի այդ հատվածը. «Ստատուս-քվոյի փոփոխությունը մեզ համար ընդունելի է, բայց միայն ու միայն հիմնահարցի համապարփակ կարգավորման դեպքում: Հայաստանը բազմիցս է կոչում արտահայտվել փոխզիջման հիման վրա հանգուցալուծման գնալու օգտին, որի ելությունը Արցախի ինքնորոշման իրավունքի ճանաչումն ու իրացումն է... Այո , փոխզիջման հիման վրա, այլ ոչ թե միակողմանի զիջումների՝ տեղի տալով ադրբեջանական սպառնալիքներին, թե հակառակ դեպքում պատերազմն անխուսափելի է: Այո , մենք չենք ցանկանում ստատուս-քվոյի պահպանում և ոչ մի օր ավել» (տե՛ս <https://goo.gl/BYjY1H>): ՀՀ նախագահի այս հայտարարությունն ամենայն հավանականությամբ պետք է մեկնաբանվի պաշտոնական Երևանի կողմից հնչեցված այն մտեցման համատեքստում, որ Արցախի կարգավիճակին ու տարածքներին վերաբերող հարցերը ԼՂՀ իշխանությունների բացառիկ իրավասության ենթակա հարցեր են (տե՛ս <https://goo.gl/HQQQK7>):

Ընդ որում, դա արվում է ինչ-որ իմաստով նախնական մի փուլում, երբ փորձում են կողմերի հետ հստակեցնել կոնֆլիկտի հանգուցալուծման ընդհանուր սկզբունքները: Եթե մի պահ պատկերացնենք, որ այդ փուլը հաջողությամբ հաղթահարված է, ապա դժվար չէ պատկերացնել, թե պատմությանն անխուսափելիորեն կատարված հղումները, նրա առկայությունը բանակցային գործընթացում ինչ վճռական դեր կկատարեն, երբ միջնորդներն ու կողմերն անցնեն մանրամասների հստակեցմանն այնպիսի կարևոր հարցում, ինչպիսին «վերջնական կարգավիճակն» է, որը խիստ տարբեր են պատկերացնում Երևանը և հակամարտության անմիջական կողմերը՝ Բաքուն ու Ստեփանակերտը:

Մինսկի խումբը հակամարտության պատմությունը նրա կարգավորման գործընթաց բերելու ամենավճռական փորձը ձեռնարկել է 1998թ. նոյեմբերին՝ Բաքվին, Ստեփանակերտին և Երևանին ներկայացնելով *Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, ներառյալ՝ պետությունների տարածքային ամբողջականության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքներին համապատասխան իրագործելու*¹ մասին մի առաջարկություն, որը հայտնի դարձավ նրա բանալի բառերի՝ *ընդհանուր պետություն*, անվանմամբ: «Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին» վերտառությունը կրող այդ առաջարկությունը մանրամասների մեջ մշակված փաստաթուղթ էր, որը ելնում էր հենց պատմական նախադեպից՝ առանց այդ հանգամանքն ընդգծելու: *Ընդհանուր պետության* մասին առաջարկն իր նախադեպն ունեցող մտահղացում էր, որը փորձ էր վերադառնալ 20-ական թթ. Խորհրդային Ադրբեջանի՝ որպես *հայերի ու մուսուլմանների ընդհանուր պետություն* հիմնելու նախագծին: Ընդհուպ մինչև 30-ական թթ., երբ Խորհրդային Ադրբեջանը չունեւ տիտղոսակիր ազգ և դեռ գործողության մեջ չէր դրված ադրբեջանական ազգ ձևավորելու ստալինյան նախագիծը, այն ներկայացվել է տարբեր բանաձևումներով: Շրջանառվել են «արտազգային Ադրբեջան», «ինտերնացիոնալ Ադրբեջան», «հայերի ու մուսուլմանների միասնական պետություն» ձևակերպումները: 1998-ին Ստեփանակերտը և Երևանն ընդունել են *ընդհանուր պետության* մասին այդ առաջարկը որպես բանակցությունների հիմք, իսկ Բաքուն այն կտրականապես մերժել է: Անկախ ամեն ինչից, *ընդհանուր պետության* մասին ԵԱՀԿ առաջարկությունը ներկայացվել է պատմական փորձից ելնելով:

¹ Շեղ տառատեսակներով ընդգծված բառերը վերցված են այդ փաստաթղթի տեքստից:

Փաստորեն, ստացվում է, որ պատմությանը չդիմելու պահանջը միջնորդները նախատեսում են միայն հակամարտության կողմերի համար: Նրանք իրենց են թողնում պատմությանը բանակցային գործընթաց ներբերելու արտոնությունը, որ արվում է ընտրողաբար, իրենց հայեցողությամբ, քաղաքական նպատակահարմարության իրենց չափանիշներով, բայց անուղղակի ձևերով, առանց պատմության անունը տալու, փոխզիջումների կամ ստատուս-քվոյի վերանայման քողի տակ: Մակայն պարզվում է, որ հակամարտող կողմերը ևս չեն կարող իրենց ընդունած փաստաթղթերում և հռետորաբանության մեջ դռները փակել պատմության առջև:

Պատմությունը Բաքվի հռետորաբանությունում և ընդունած փաստաթղթերում

Ինչ վերաբերում է Բաքվին, ապա խնդիրը դեպի պատմություն հետ տանելու նրա հակումներն ակնհայտ են: Բավական է ասել, որ 1988-ից ի վեր ադրբեջանական քարոզչամեթոդային կողմից շրջանառության մեջ դրված «Լեռնային Ղարաբաղը վաղնջական ադրբեջանական տարածք է» դրույթը, որը նա փորձում է դարձնել իր գլխավոր փաստարկներից մեկը, ունի զուտ պատմական բնույթ¹: Լուրջ մասնագետների համար պարզ է, որ Բաքվի կողմից պատեհ-անպատեհ հնչեցվող «Լեռնային Ղարաբաղը վաղնջական ադրբեջանական տարածք է» պատմական բնույթի պնդումը կեղծ է: Լեռնային Ղարաբաղը չի կարող տարածաշրջանում միայն 1918թ. հայտնված արհեստածին պետության վաղնջական տարածքը լինել:

Այդ «փաստարկը» միակը չէ պատմական փաստարկների ադրբեջանական փաթեթում: Նման հղումներ առատորեն ներգրավված են ԽՍՀՄ տրոհման տարիներին Բաքվում ընդունված փաստաթղթերում: Դրանցում հատկապես այժի է զարնում պատմաիրավական անդրադարձներով հագեցած «Ադրբեջանական Հանրապետության պետական անկախության մասին» Մահմանադրական ակտը, որ ընդունվել է 1991թ. հոկտեմբերի 18-ին և, անկասկած, գլխավորն է այդ կարգի փաստաթղթերի շարքում²:

Մահմանադրական ակտի նախաբանը երկրատարածքի պատմությանը վերագրվող կեղծ պնդումների հավաքածու է: Կեղծիք է շարադրվում

¹ Բաքվի քաղաքական ղեկավարությունը մեծ կարևորություն է տալիս Արցախի իրական պատմության հետ կապ չունեցող այդ դրույթի ներդրմանը տեղեկատվական դաշտում և հսկայական միջոցներ է ծախսում դրա համար: Իլհամ Ալիևը, ինչպես հայտնի է, հանրապետության ակադեմիայի առջև պահանջ է դրել ինչ-որ կերպ հիմնավորել կանխապես կեղծ դրույթը:

² Փաստաթուղթը հրապարակվել է 1991թ. նոյեմբերի 7-ին «Бакинский рабочий» օրաթերթում:

ամեն մի նախադասության մեջ: Բավական է ասել, որ այն սկսվում է մի նախադասությամբ, որում միահյուսված են գիտությանն անհայտ պատմա-իրավական բնույթի «փաստեր»: Ահա այն. «1918 թվականի մայիսի 28-ին Ադրբեջանի ազգային խորհուրդն ընդունել է Ադրբեջանի անկախության մասին հռչակագիրը՝ դրանով իսկ վերսկսելով ադրբեջանական ժողովրդի պետականության բազմադարյան ավանդույթները»: Հռչակագիրը, որի մասին խոսվում է, իրականում ընդունել է Անդրկովկասի մուսուլմանների ազգային խորհուրդը¹ 1918-ի փետրվարին ստեղծված Անդրկովկասյան սեյմի խմբավորումներից մեկը, որը Սեյմի նիստում դեռևս մայիսի 25-ին է հայտարարել այդ մասին: «Ադրբեջանի ազգային խորհուրդ» անվանումը՝ հրապարակում հայտնվել է հենց անկախության հռչակման ակտով՝ մայիսի 28-ին: Հռչակագրում «ադրբեջանական ժողովուրդ» հասկացությունն չի օգտագործված, քանի որ այդպիսի անվանումով ժողովուրդ չի եղել, որ Ազգային խորհուրդ ունենա: Դրա համար այդ փաստաթղթում խոսվում է ոչ թե *ադրբեջանական ժողովրդի*, այլ *Ադրբեջանի ժողովուրդների* մասին, որոնց անունից Անդրկովկասի մուսուլմանների ազգային խորհուրդը նոր պետություն հռչակելու լիազորություններ չուներ: Վերջապես, Անդրկովկասի մուսուլմանների խորհուրդն այդ հռչակագրով չէր կարող վերսկսել «ադրբեջանական ժողովրդի պետականության բազմադարյան ավանդույթները», քանի որ տարածաշրջանի պատմությունը չգիտի ոչ այդ անունով ժողովուրդ, ոչ էլ նման անվանումով պետություն, որ պատկաներ գոյություն չունեցած ադրբեջանական ժողովրդին:

«Պատմական» այդ «հիմնավորումներից» հետո Սահմանադրական ակտը, Ադրբեջանի բռնազավթում որակելով երկրատարածքի խորհրդայնացումը, դրանք ամբողջացնում է իրավական բնույթի փաստարկով՝ հռչակելով Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից հրաժարվելն ու 1918-1919թթ. ԱԴՀ պետականության վերականգնումը: Քիչ է ասել, որ Բաքուն դրանով ոչ միայն ԱՀ հռչակման լեգիտիմությունը կապեց Ազգերի լիգա ընդունվելու մերժումը ստացած, առանց ճանաչված կամ փաստացի հաստատված սահմանների անհետացած ԱԴՀ-ի հետ: Նա դրանով իր փաստարկների փաթեթ ներբերեց երկրամասի XX դարի ողջ պատմությունը:

Իրեն ունիտար պետություն հռչակած Ադրբեջանական Հանրապետությունն առայժմ (քանի դեռ դա նրան թույլ է տալիս հակամարտության կարգավորման՝ միջնորդների կողմից ընդունված մարտավարությունը)

¹ Հայտնի է նաև *Անդրկովկասի մուսուլմանների ժամանակավոր ազգային խորհուրդ (Временный национальный совет мусульман Закавказья)* անվանումով:

խնդրի մի շարք կարևոր այլ «մանրամասների» հետ միասին մոռացության է մատնում 1991-ին ԽՍՀՄ տրոհման ընթացքում Խորհրդային Ադրբեջանի (Ադր. ԽՍՀ) իրավահաջորդությունից հրաժարվելու պատմական ու իրավական փաստը: Բայց չի բացառվում, որ այն սկզբունքային բնույթ կարող է ստանալ, երբ հիմնական սկզբունքների շուրջ համաձայնություն ձեռք բերելուց հետո կողմերը մտնեն հակամարտության կարգավորման ավելի առարկայական փաստաթղթերի մշակման փուլ կամ երբ միջնորդները վերանայեն իրենց մոտեցումները:

Պատմության անդրադարձը Ստեփանակերտի դիրքորոշման ու նրա կողմից ընդունված փաստաթղթերում

Անկախացման վերաբերյալ Ստեփանակերտում ընդունված փաստաթղթերում և *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության* (ԼՂՀ) իշխանությունների հայտարարություններում ևս պատմությանն արված անդրադարձներ կան: Որքան էլ տարօրինակ թվա, դրանք ավելի քիչ են, քան Բաքվի կողմից պատմությանն արված հղումները, հակառակ այն բանի, որ Ստեփանակերտն իր տրամադրության տակ ունի պատմագիտության կողմից վաղուց ընդունված բազմաթիվ փաստեր, որոնք ճշմարտության լույս կարող են սփռել հիմնախնդրի վրա: Հայտնի է, օրինակ, որ Հայկական լեռնաշխարհում հենց Արցախն է անընդմեջ պահպանել հայոց պետական ավանդույթներն այն բանից հետո, երբ 428թ. Հայաստանը բաժանվել է Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև: Իր անկախության համար հերոսական մարտեր մղած հայ ժողովրդի այդ հատվածին է հաջողվել ավելի քան մեկուկես հազարամյակ անառիկ պահել իր երկրամասը և միջնադարյան անկախ ու կիսանկախ պետական կազմավորումների ձևով պահպանել պետականության ավանդույթները: *Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը մեր օրերում պատմական ասպարեզ է իջել Արցախում անընդմեջ գոյություն ունեցած պետական այդ կազմավորումների ժառանգական գծի վրա:*

Ստեփանակերտում դեռևս 1988-ին հակված էին այն մտքին, որ խնդրին անմիջապես վերաբերող իրավական փաստարկները և միջազգային իրավունքի նորմերն ավելի մեծ կշիռ ունեն, քան պատմությանը կատարած հղումները: Թերևս, դրանով պիտի բացատրել այն հանգամանքը, որ ԼՂՀ իշխանությունները պաշտոնական փաստաթղթերում պատմական բնույթի հղումների դիմել են չափավոր՝ իբրև դրանցում բերվող իրավական փաստարկների լրացում: Բավական է ասել, որ ի տարբերություն ԱՀ

անկախության մասին հռչակագրի (1991թ. օգոստոսի 30) և վերը դիտարկված Պետական անկախության մասին Սահմանադրական ակտի (1991թ. հոկտեմբերի 18), ԼՂՀ Անկախության մասին հռչակագրում (1991թ. սեպտեմբերի 2) սեփական պատմությանը կատարած հղումներ ընդհանրապես չկան: Պատմական բնույթի միակ փաստը, որ բերված է այդտեղ, վերաբերում է անկախության մասին Բաքվում ընդունված հռչակագրին, որով վերականգնվել է 1918-1920թթ. ԱԴՀ պետականությունը: Ինչ վերաբերում է ԼՂՀ պետական անկախության մասին հռչակագրին, ապա այդտեղ՝ փաստաթղթի նախաբանում, Արցախի պատմությանն արված դարձյալ մեկ հղում է արված՝ «զարգացնելով Լեռնային Ղարաբաղի 1918-1920թթ. անկախ ժողովրդական ինքնակառավարման փորձը» դրույթի ձևով: Հետաքրքիր է նկատել, որ նույնիսկ այդ դեպքում հռչակագրերը մնացել են հակամարտության սեփական պատմության սահմաններում և չեն հիշատակել պետականության բազմադարյան ավանդույթները, որ ունի արցախահայությունը, չնայած նման հիշատակումը հարիր կլիներ հիմնարար այդ փաստաթղթի բնույթին:

Պատմական փաստարկները կոնֆլիկտի մասին Երևանի դիրքորոշման մեջ

Երևանի բանակցային վարքը ԵԱՀԿ հովանու տակ ընթացող կարգավորման գործընթացում պայմանավորված է այն դերակատարությամբ, որ ստանձնել է որպես Արցախի անվտանգության երաշխավոր: Ինչպես հայտնի է, ԽՍՀՄ լուծարման ավարտական փուլում Երևանում հրաժարվել են «ՄԻՍՏՈՒՄ» կարգախոսից և 1991-ին անկախություն հռչակել նախկին Խորհրդային Հայաստանի (ՀԽՍՀ) սահմաններում: Ստեփանակերտ-Բաքու և Ստեփանակերտ-Երևան հարաբերությունները նույն 1991-ին են դադարել լինել ԽՍՀՄ ներքին գործը և հայտնվել միջազգային իրավաքաղաքական դաշտում: Որպես նորանկախ պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) որդեգրեց կառուցողական միջնորդության դերակատարություն՝ մերժելով հակամարտության անմիջական կողմի որակումները, որ նրան համառորեն վերագրում էր Բաքուն¹: Բացառապես որպես միջնորդ ներկայանալու

¹ 2014թ. սեպտեմբերի 29-ին ՄԱԿ 69-րդ նստաշրջանում ՀՀ պաշտոնական դիրքորոշումը վերահաստատել է նախագահ Մերժ Սարգսյանը՝ հաստուկ շեշտադրումներով ընդգծելով, որ միջազգային հանրության տեսակետն այդ հարցում համընկնում է Երևանի դիրքորոշման հետ. «ՄԱԿ Անվտանգության խորհրդի ոչ մի բանաձևում Հայաստանը չի նշվել որպես հակամարտող կողմ: Մեր երկրին ուղղված կոչերում միայն խոսվում էր «շարունակել ազդեցություն գործադրել» ԼՂ հայության վրա (853, 884) հակամարտությունը դադարեցնելու համար, ինչը Հայաստանը լիարժեք իրականացրել է, և նաև դրա շնորհիվ 1994թ. կնքվել է զինադադար: Բոլոր բանաձևերում ԼՂ-ն հստակորեն ճանաչվել է հակամարտող կողմ» (տե՛ս <https://goo.gl/pLnjaX>):

մղումներով պետք է բացատրել այն փաստը, որ 1992թ. մարտի 5-ին՝ ՀՀ ՄԱԿ ընդունվելու օրը, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը մոսկովյան «Комсомольская правда» թերթին տված հարցազրույցում Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի՝ բոլոր կողմերի համար ընդունելի լուծում համարեց ԱՀ կազմում ինքնավար հանրապետության նրա հնարավոր կարգավիճակը:

Կառուցողական միջնորդի և Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորի դերակատարությունը, որը ստանձնել է Հայաստանի Հանրապետությունը¹, կարծես թե հեշտացնում է պատմական փաստարկներին դիմելու Երևանի գործը: Սակայն մնալով *real politic*-ի շրջանակներում, նա նախընտրում է ուժերը կենտրոնացնել բանակցային գործընթացում:

Պատմական բնույթի միակ փաստարկը, որ հնչեցվել է նաև եվրոպական ամբիոնից, արվել է ՀՀ երկրորդ նախագահի կողմից և հետագայում շրջանառվել հետևյալ ձևակերպմամբ՝ «Լեոնային Ղարաբաղը երբևիցե անկախ Ադրբեջանի մաս չի կազմել»²:

Պատմությունը կոնֆլիկտի հանգուցալուծման տեսլականներում

Խնդրի հանգուցալուծման տակ հասկացվում է ԼՂ կարգավիճակի մասին համաձայնությունը, որը ճանաչված կլինի հակամարտող կողմերի և (ուզենք, թե չուզենք) տարածաշրջանում կենսական շահեր ունեցող, միջազգային հանրությունը ներկայացնող միջնորդների կողմից: Երևանն ու Մտեփանակերտը՝ մի կողմից, և Բաքուն՝ մյուս կողմից, տարբեր կերպ են պատկերացնում Արցախի ապագա կարգավիճակը:

Բաքուն ընդգծում է նախկին Ադր. ԽՍՀ սահմաններում իր ճանաչվածության փաստը և պատրաստակամություն հայտնում Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) սահմաններում ԼՂ-ին տրամադրել «ինքնավարության ամենաբարձր աստիճանը»: Հեյդար Ալիևն է ժամանակին կոնֆլիկտի հանգուցալուծման պաշտոնական Բաքվի ըմբռնումը բանաձևել այդպիսի ձևակերպմամբ, որ ուժի մեջ է մնում մինչ օրս և հնչեղություն է տրվում նաև նրա որդու՝ նախագահ Իլհամ Ալիևի կողմից: Զուտ պատմական բնույթի «Լեոնային Ղարաբաղը վաղնջական ադրբեջանական տարածք է» փաստարկի ակնհայտորեն կասկածելի լինելու հանգամանքը նրան թույլ չի

¹ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն այս տարվա մարտի 13-ին իսպանական EFE գործակալության հետ ունեցած հարցազրույցում, խոսելով բանակցային գործընթացի մասին, նորից է ընդգծել այդ հանգամանքը՝ ասելով. «...բանակցային սեղանի շուրջ... Հայաստանը նստում է Ղարաբաղի փոխարեն»:

² Տե՛ս ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի 2004թ. հունիսի 23-ի ելույթը ԵՄ խորհրդարանական ժողովում, որ տեղադրված է նրա վեբ-կայքում՝ <https://goo.gl/8CiGzZ> էլեկտրոնային հասցեով:

տալիս այդ բանաձևը քարոզչական դաշտից տեղափոխել բանակցային գործընթաց: Ահա թե ինչու պաշտոնական փաստաթղթերում ու հայտարարություններում նա առավելապես հիշատակում է Ադր. ԽՍՀ սահմաններում Ադրբեջանական Հանրապետության ճանաչվածության փաստը:

Ստեփանակերտն այլ տեսակետ ունի Արցախի կարգավիճակին վերաբերող հարցում: Այնտեղ գտնում են, որ 1991-ին ԼՂԻՄ-ի՝ որպես խորհրդային տիպի ազգային պետականության, կարգավիճակի բարձրացման արդյունքում՝ խստագույնս պահպանելով լուծարվող երկրի (ԽՍՀՄ) օրենքները և միջազգային իրավունքի նորմերը, այդ անկախացման օրինականությունն անբասիր է: Ստեփանակերտը հիմնավոր ձևով փաստարկում է, որ ԽՍՀՄ լուծարման և դրան հաջորդած ադրբեջանա-ղարաբաղյան պատերազմի ընթացքում Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետությունը կայացել և այդ պատերազմի արդյունքներով պետական իրավասություն է իրագործում մերօրյա Ադրբեջանական Հանրապետությանն իրավաբանորեն չպատկանող տարածքներում: Այստեղից էլ գլխավոր եզրակացությունը՝ բանակցություններում Արցախի անկախությունը սակարկումների առարկա լինել չի կարող: Փաստորեն, հաստատված սահմաններում Արցախի անկախությունը հենց այն կարգավիճակն է, որը չի հակասում հիմնախնդրի իրավական հիմքերին ու 1994-ին հրադադարով սառեցված զինված հակամարտության արդյունքներին:

Ստեփանակերտից պարբերաբար հնչում է այն դրույթը, որ անկախության հռչակումից քառորդ դար անց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դե-ֆակտո կայացած, Ադրբեջանական Հանրապետությունից տարբեր քաղաքակրթական արժեքներ որդեգրած, ժողովրդավարական, իրավական պետություն է, որը հրադադարի մասին Բիշքեկում Ադրբեջանական Հանրապետության հետ կնքված համաձայնագրով¹ 1994թ. մայիսին ճանաչվել է հակամարտության կողմ², կարգավիճակ, որ մինչ օրս նրա միջազգայնորեն ճանաչված կարգավիճակն է բանակցային գործընթացներում:

Երևանի դիրքորոշումը ԼՂ կարգավիճակի հարցում ունի որոշակի նրբերանգներ՝ կապված այն դերակատարության հետ, որ ստանձնել է որպես ԼՂ ժողովրդի անվտանգության երաշխավոր: Կարգավիճակի հարցում մնալով այն դիրքորոշմանը, որ այն չի կարող ընդունվել առանց Ստե-

¹ Փաստաթղթի տակ դրված են եղել նաև Երևանի, ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցչի և ԱՊՀ միջխորհրդարանական ասամբլեայի նախագահի ստորագրությունները:

² Դրան հաջորդել են Ռուսաստանի միջնորդությամբ կնքված երկկողմ մի շարք փաստաթղթեր՝ հրադադարի պահպանման մասին:

փանակերտի համաձայնության, Երևանը միաժամանակ առիթը բաց չի թողնում ընդգծելու, որ դեմ չէ փոխզիջումներին, քանի որ միայն այդպես կարող է ներկայանալ որպես հակամարտության ոչ անմիջական կողմ և որպես կառուցողական բանակցությունների ջատագով նպաստել դրանց դինամիկան պահպանելուն: Այդքանով հանդերձ, դեռևս 1992թ. հուլիսի 8-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է ԼՂ ապագա կարգավիճակին վերաբերող մի որոշում, որով Հայաստանի Հանրապետության համար անընդունելի է համարվում «միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»¹:

Պարզ էր, որ «Միացում»-ից հրաժարվող և խնդրի նման հանգուցալուծում առաջարկող Երևանը ներկայանում էր որպես պետություն, որը չնայած կենսական ազգային շահեր ունի Արցախում և 1989-ին նույնիսկ ընդառաջ է գնացել հայկական մարզն իր հետ միավորելու համաժողովրդական պահանջին, բայց այնուամենայնիվ, իր անկախությունը 1991-ին հռչակել է նախկին Խորհրդային Հայաստանի սահմաններում և ներկայացել որպես զինված ընդհարումներին վերջ դնելու պատրաստակամ կողմ: Բաքուն, որտեղ 1991-ին Ադրբեջանական Հանրապետությունը հռչակել էին ունիտար պետություն (դա նշանակում էր, որ 1991-ին այնտեղ նույնիսկ մերժում էին ԼՂ ինքնավարության գաղափարը), անպատասխան թողեց Լևոն Տեր-Պետրոսյանի այդ ուղերձը և շարունակեց բռնությամբ Արցախը հայաթափելու ուղեգիծը: Արցախի դեմ Բաքվի սանձազերծած պատերազմը, ինչպես հայտնի է, 1994թ. մայիսին ավարտվեց հրադադարի մասին բիշփեկյան արձանագրությամբ՝ այն բանից հետո, երբ ԼՂՀ զինված ուժերն ազատագրել էին այն շրջանների մի մասը, որ իրականում չընդունված, բայց բռնությամբ գործադրված ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921թ. որոշմամբ պետք է ընդգրկվեին ԼՂԻՄ կազմում²:

Բնական է ենթադրել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն այդ ամենի մասին տեղյակ են, և նրանց կողմից հնարավոր միջնորդական առաջարկությունները, որոնք բանակցությունների վերջին քսանհիզ տարում արվում են փոխզիջումների նշանաբանով, չեն կարող Արցախի համար նախատեսել ավելի ցածր իրավաքաղաքական կարգավիճակ, քան այն, որ նա ունեցել է խորհրդային տարիներին, երբ ԼՂԻՄ-ը ԽՍՀՄ ազգային-պետական կառույցի՝ ինքնորոշման ճանաչված իրավունքով օժտ-

¹ Տե՛ս ՀՀ ԳԽ Տեղեկագիր, հ. 13 (1017), Երևան, 1992, էջ 3-4:

² Բիշփեկյան արձանագրության տակ դրված է նաև ՀՀ ստորագրությունը:

ված սուբյեկտ էր՝ ներկայացված նրա բարձրագույն օրենսդրական իշխանության մարմնում: 1990թ. ապրիլի 3-ին նաև Խորհրդային Հայաստանի, Խորհրդային Ադրբեջանի ու ԼՂԻՄ պատգամավորների մասնակցությամբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Միութենական հանրապետության ԽՍՀՄ կազմից դուրս գալու հետ կապված հարցերի լուծման մասին» օրենքը, որն արտոնում էր Արցախին երկրի տրոհման դեպքում ինքնուրույն որոշել իր իրավական կարգավիճակը՝ ընդհուպ մինչև անկախ պետության հռչակումը, փաստորեն վերահաստատել է ազատ ու լիիրավ ինքնորոշման դեռևս 20-ական թվականներին ճանաչված նրա իրավունքը: Պատահական չէ, որ որպես խորհրդային տիպի պետականություն ստեղծված ԼՂ Ինքնավար Մարզի սահմանների անձեռնմխելիությունը երաշխավորված էր ԽՍՀՄ օրենսդրությամբ:

Պատմաիրավական այդ փաստերը ԵԱՀԿ Մինսկի խմբի առջև հարուցում են սկզբունքային բնույթի հարցադրում՝ *ինչպիսին էլ լինեն Արցախի ապագա կարգավիճակի կապակցությամբ նրանց կողմից արվելիք հնարավոր առաջարկները, Արցախին չի կարող առաջարկվել ավելի ցածր կարգավիճակ, քան այն, ինչ նա ունեցել է 1990-ին որպես խորհրդային դաշնային պետության ազգային-պետական համակարգի սուբյեկտ, որը երկրի տրոհման դեպքում ուներ ինքնիշխան պետություն հռչակելու իրավունք*: Ակնհայտ է, որ եթե Ադրբեջանը վերակազմավորվի և ներկայանա որպես դաշնային պետություն, ապա նույնիսկ այդպիսի Ադրբեջանում համանախագահները չեն կարող տեսնել Արցախի այնպիսի ազգային պետական կարգավիճակ, անվտանգության և սահմանների անձեռնմխելիության այնպիսի իրավաբաղաբական երաշխիքներ, որոնք նա ունեցել է ԽՍՀՄ-ի՝ դաշնային այդ հզոր գերտերության կազմում: Չի բացառվում, որ համանախագահող երկրների վերլուծական կենտրոններում այլ մտահղացումներ են մշակվում (կամ արդեն մշակվել են): Հնարավոր է, որ մի օր, երբ խոշոր դերակատարները համաձայնության գան տարածաշրջանում իրենց շահերի հարցում, օրակարգում կդնեն Ադրբեջանական Հանրապետության դաշնային կամ համադաշնային վերակազմավորման նախագիծը որպես հակամարտության հանգուցալուծման առաջարկ, որը, ըստ նրանց, կհանի տարածքային ամբողջականության և ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքների միջև տխրահռչակ (իրականում գոյություն չունեցող) հակասությունը և հիմնված կլինի (դարձյալ ըստ միջնորդների) բանական փոխզիջումների վրա: Եթե նման առաջարկ երբևիցե միջնորդները դնեն բանակցությունների սեղանին, ապա կարգավորման հիմքում դրված

սկզբունքների ներքին տրամաբանությամբ նրանում բացահայտ կամ ոչ բացահայտ ձևով առկա կլինի հակամարտության վերջին 100 տարիների պատմությունը երկրամասի այն կարգավիճակներով հանդեձ, որ նա ձեռք է բերել իր ազատագրական պայքարում:

Այն, որ հաստատված ստատուս-քվոյից նահանջն անխուսափելիորեն ենթադրում է վերադարձ պատմական անցյալին, օրակարգային է դարձնում այն հարցը, թե նախկին որ իրավիճակին պետք է վերադառնան կողմերը խնդրի՝ նրանց համար ընդունելի, արդարացի հանգուցալուծման համար: Լեռնային Ղարաբաղը (Արցախը) Ռուսական կայսրության փլուզումից ի վեր «անցել» է պետաիրավական մի շարք կարգավիճակներով: Թվարկենք դրանք.

- 1918թ. Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների առաջին համագումարը երկրամասը հռչակել է Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս:
- 1919-1920թթ. Ազգերի լիգան, հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի նկատմամբ մուսավաթական Ադրբեջանի հավակնությունները, երկրամասը ճանաչել է վիճելի տարածք Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության միջև: Այդ ընթացքում Լեռնային Ղարաբաղը եղել է դե-ֆակտո անկախ ազգային պետական կազմավորում:
- 1920թ. Ռուսաստանի XI բանակի կողմից Բաքվում խորհրդային կարգերի հաստատումից հետո օգոստոսի 10-ին Հայաստանի Հանրապետության հետ կնքված պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը ժամանակավորապես օկուպացրել է Լեռնային Ղարաբաղը, որի վերջնական կարգավիճակը պետք է որոշվեր Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվելիք պայմանագրով, որի նախագիծը կողմերը նախապատրաստել էին 1920թ. հոկտեմբերին¹:
- 1920թ. նոյեմբերի 30-ին, Երևանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, Բաքուն Լեռնային Ղարաբաղը նախ ճանաչել է Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս, ապա դեկտեմբերի 2-ի հռչակագրով ճանաչել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի լիիրավ ինքնորոշման իրավունքը:
- 1921թ. հունիսի 12-ին Խորհրդային Հայաստանն իր անկապտելի մաս է հռչակել Լեռնային Ղարաբաղը:

¹ ЦГИА РА, ф. 200, оп. 1, д. 632. л. 1-5. Копия. Машинопись.

- 1921թ. հուլիսի 5-ին ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոն՝ երրորդ երկրի կուսակցական մարմինը, Բաքվի պահանջով քննարկել է արդեն Խորհրդային Հայաստանի մաս հռչակված Լեռնային Ղարաբաղի փաստորեն արդեն լուծված հարցը և որոշում կայացրել հանրաքվե անցկացնել այնտեղ՝ հակառակ այն բանի, որ երկրամասի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարները 1918-1920թթ. մի քանի անգամ Լեռնային Ղարաբաղը հռչակել էին Հայաստանի անկապտելի մաս (վերջին անգամ 1920թ. ապրիլի 28-ին՝ Բաքվում խորհրդային կարգերի հաստատման օրը):
- 1921թ. հուլիսի 5-ին նույն Կովբյուրոյում բոլշևիկյան կենտրոնը ներկայացնող Ստալինը, առանց հարցի քննարկման ու քվեարկության, ընդունված է հայտարարել մի նոր որոշում, ըստ որի՝ Լեռնային Ղարաբաղը մարզային լայն ինքնավարության կարգավիճակով մտցվում է տիտղոսակիր ազգ չունեցող, ոչ ազգային (ինտերնացիոնալ) Խորհրդային Ադրբեջանի սահմանները: Այդ և նախորդ բոլոր փաստաթղթերում խոսքը ողջ Լեռնային Ղարաբաղի (ողջ Արցախի), այլ ոչ թե նրա մի մասի մասին է եղել:
- Չստանալով Լեռնային Ղարաբաղի բնակչության՝ երկրամասը Խորհրդային Ադրբեջանի սահմանները մտցնելու համաձայնությունը, 1923թ. հուլիսի 7-ին, խախտելով Լեռնային Ղարաբաղի մասին Կովբյուրոյի առանց այն էլ ապօրինի որոշումը, Բաքուն հատուկ դեկրետով ինքնավար մարզը հռչակեց Լեռնային Ղարաբաղի միայն մի մասի վրա, նրա սահմաններից դուրս թողնելով հսկայական տարածքներ, որոնց մի մասը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն ազատագրել է 1991-1994թթ. Բաքվի կողմից նրան պարտադրված պատերազմի ընթացքում:
- 1923թ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը հիմնվել է որպես խորհրդային տիպի պետականություն և մինչև 1991թ. եղել է ԽՍՀՄ դաշնային պետության ազգային-պետական կառուցվածքի սուբյեկտ՝ իր սահմանների անձեռնմխելիությամբ ու երկրի բարձրագույն օրենսդիր իշխանությունում իր ներկայացվածությամբ:
- 1991-ից մինչ օրս Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունը դե-ֆակտո կայացած, ինքնիշխան, ժողովրդավարության եվրոպական չափանիշներին բավարարող պետություն է, որ պայքարում է իր միջազգային ճանաչման համար:

Համառոտ՝ այսպիսիք են անցյալին ու ներկային վերաբերող այն անդրադարձները, որոնց դիմելն անխուսափելի կլինի, երբ կողմերը համաձայնության հասնեն հակամարտության կարգավորման ընդհանուր սկզբունքների շուրջ և ձեռնամուխ լինեն խնդրի հանգուցալուծման համաձայնեցված փաստաթղթերի մշակմանը: Բայց մինչ այդ հանգրվանին հասնելն էլ, ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, պատմությունն ուղղակի կամ անուղակի ձևով ներկա կլինի միջնորդների ու կողմերի հեղինակած փաստաթղթերում և մոտեցումներում:

Մայիս, 2017թ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՏՄԱՐԿՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ալեքսանդր Մանասյան

Ամփոփագիր

ԵԱՀԿ-ն, որը ստացել է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մանդատը, միջնորդական իր առաքելության մեջ կառուցողական չի համարում կողմերի պատմական փաստարկների ներգրավումը բանակցային գործընթաց: Դրանով պիտի բացատրել այն իրողությունը, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներն իրենց առաջարկություններում ուղղակի հղումներ չեն անում հակամարտության պատմությանը: Բայց պատմությունը, ինչպես ցույց են տալիս փաստերը, բացահայտ ու ոչ բացահայտ ձևերով թափանցում է բանակցային դիսկուրս և երևակվում կոնֆլիկտի կարգավորման միջնորդների նախագծերում և հակամարտ կողմերի ընդունած փաստաթղթերում: Վերլուծությունը հաստատում է, որ սկզբունքորեն հնարավոր չէ շրջանցել կոնֆլիկտի սեփական պատմության փաստերը, եթե ընտրված է հակամարտության կարգավորման ռազմավարություն, որը բացառում է ուժի կամ նրա սպառնալիքի կիրառումը: Իրականում պատմությանը դիմելու արգելքը միջնորդները նախատեսում են միայն հակամարտ կողմերի համար: Նրանք իրենց են թողնում պատմությունը բանակցային գործընթաց ներբերելու արտոնությունը: Եվ դա նրանք անում են ընտրողաբար, քաղաքական նպատակահարմարության իրենց չափանիշներով: Ընդ որում, դա սովորաբար արվում է քողարկված ձևերով, առանց պատմությանն ուղղակի հղումներ անելու: Եթե 1990-ական թթ. Մինսկի խմբի համանախագահները պատմությունը բանակցային գործընթաց են բերել *ընդհանուր պետության* մասին իրենց առաջարկության մեջ, ապա մեր

օրերում դա արվում է փոխզիջումների կամ ստատուս-քվոյի վերանայման քողի տակ: Պարզվում է նաև, որ ոչ միայն միջնորդները, այլև հակամարտող կողմերը ևս չեն կարող իրենց ընդունած փաստաթղթերում և հոետորաբանության մեջ դրները փակել պատմության առջև:

ИСТОРИЧЕСКИЕ ДОВОДЫ В ПЕРЕГОВОРНОМ ПРОЦЕССЕ ПО КАРАБАХСКОМУ УРЕГУЛИРОВАНИЮ

Александр Манасян

Резюме

ОБСЕ, под эгидой которой идет урегулирование Карабахского конфликта, в своей посреднической миссии не считает конструктивным привлечение исторических аргументов сторон в переговорный процесс. Этим объясняется тот факт, что страны-сопредседатели Минской группы ОБСЕ в своих предложениях напрямую не ссылаются на историю. Но, как показывает анализ, история проникает в переговорный процесс и проявляется в предложениях посредников по урегулированию конфликта и в принятых конфликтующими сторонами документах.

Выясняется, что переговорный дискурс в принципе не может обойти собственную историю конфликта, если принята такая стратегия ее урегулирования, которая отвергает применение силы или угрозу силой. В действительности запрет на обращение к историческим аргументам посредниками предусмотрен только для сторон конфликта. Сами посредники оставили право привлечения истории в переговорный процесс исключительно за собой. Они это делают выборочно, по своим критериям политической целесообразности. Причем в завуалированной форме, без прямых ссылок на историю. Если в 90-ых годах сопредседатели Минской группы ОБСЕ привлекли историю в конфликт в контексте предложенного ими проекта *общего государства*, то в наши дни это делается под покровом предложений о взаимных уступках и пересмотре сложившегося *статус-кво*. Однако выясняется, что не только посредники, но и стороны конфликта не могут закрыть двери перед историей в риторике вокруг конфликта и принятых ими документах.

HISTORY ARGUMENTS IN THE NEGOTIATION PROCESS OF KARABAKH CONFLICT RESOLUTION

Alexander Manasyan

Resume

The OSCE, which has received the mandate for the Karabakh conflict resolution as a mediator, does not consider the involvement of the historical arguments of the parties in the negotiation process to be constructive. This explains the fact that the co-chair countries of OSCE Minsk Group do not make direct references to the history of the conflict in their proposals. However, the history, as the facts show, penetrates into the negotiation discourse in explicit and implicit ways and it is being manifested in conflict resolution projects suggested by the mediators and in the documents accepted by all the sides of the conflict. It turns out that the negotiating discourse cannot bypass the history of the conflict in principle, if it adopts a strategy for its resolution that rejects the use of force or the threat of force. In fact, the mediators prohibit using historical facts during the negotiation process only if the latter are being provided by the sides of the conflict. They keep the privilege of inserting the history into the negotiation process exceptionally for themselves. And they do it selectively, according to their criteria of political expediency. Moreover, it is usually done in a covert manner, without direct references to the history. If in 1990s, the Minsk Group co-chairs' brought the history into the negotiation process in their proposal about the Common state of Azerbaijan and Nagorno-Karabakh, nowadays the same is being done under the guise of compromise or revision of the status-quo. It also turns out that not only the mediators, but also the parties of the conflict cannot close the doors in front of history in their rhetoric and adopted documents.

ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

*Գազիկ Հարությունյան**

Բանալի բառեր՝ կրիտիկական ենթակառուցվածքներ, գաղափարախոսություն, տեղեկատվական անվտանգություն, «գաղափարախոսական տրիադա», Հայկական հանրություն:

Տեղեկատվական պատերազմներում անվտանգության խնդիրներն ակտուալացել են այդ պատերազմների ռազմավարության մշակմանը զուգահեռ: Դեռևս 1996թ. ԱՄՆ նախագահին կից ձևավորվեց հատուկ հանձնաժողով, որը պետք է զբաղվեր տեղեկատվական հատվածի կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության խնդիրներով: Հանձնաժողովի երկամյա աշխատանքի արդյունքները թույլ տվեցին ի հայտ բերել ԱՄՆ տեղեկատվական անվտանգության խոցելի կառույցները և հիմք ծառայեցին, որպեսզի մշակվի այդ ոլորտում համապատասխան քաղաքականություն: Վերջինս ամրագրվեց նախագահական հրամանագրով, համաձայն որի՝ ստեղծվեցին մի շարք ծրագրեր, որոնց նպատակն էր բարձրացնել տեղեկատվական անվտանգության մակարդակը քաղաքացիական և ռազմական կառավարման, կոմունիկացիոն-տեղեկատվական, ֆինանսական, էներգա- և ջրամատակարարման, ոստիկանական-փրկարարական և այլ համակարգերում: Իր հերթին, վերոնշյալ «կրիտիկական» ոլորտներում որոշվեցին այն «կրիտիկական ենթակառուցվածքները», որոնց խոցումը կամ վնասումն էապես կխաթարեր նրանց գործառնությունները: Ներկայացված ոլորտների խնդիրները գլխավորապես վերաբերում են տեխնիկական-էլեկտրոնային-համակարգչային սարքերի անխափան գործունեության ապահովմանը:

Մինևույն ժամանակ, ինչպես հետևում է «երկրորդ և երրորդ սերնդի» տեղեկատվական պատերազմների, «գունավոր հեղափոխությունների», «կառավարելի քառսի» և ընդհանրապես տոտալ հիբրիդային հակամարտությունների դոկտրիններից, ինֆոզեն մարտահրավերներն ուղղված են ոչ

* «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

միայն տեխնիկական-տեխնոլոգիական սարքերի, այլև անհատի, ազգի և հասարակության հոգևորի, մտավորի և հոգեկանի դեմ: Այդ առումով տրամաբանական է, որպեսզի պաշտպանության մեխանիզմներ մշակվեն նաև այն ոլորտների և կառույցների համար, որոնք ապահովում են մարդկային գործունեության անվտանգությունը և հոգեմտավոր բնականոն զարգացումը: Այստեղ նույնպես պետք է որոշվեն, թե որ ոլորտները և կառույցներն են կարևորագույնը, որպեսզի ստանան «կրիտիկականի» կարգավիճակ: Դա դյուրին խնդիր չէ, քանի որ եթե տեխնիկական համակարգերը ենթարկվում են որոշակի օրենքների կամ բանաձևերի, ապա այս պարագայում պետք է հաշվի առնել ինչպես հասարակության առանձին ներկայացուցիչների, այնպես էլ ողջ հասարակության ազգային-քաղաքակրթական առանձնահատկությունները, արժեհամակարգը, հոգեկերտվածքը և խորքային յուրահատկությունները՝ միաժամանակ հաշվի առնելով այլ հասարակությունների հետ ունեցած ընդհանրությունները: Այս համատեքստում, թերևս, պատահական չէ, որ ամերիկյան փորձագետներն ազգային անվտանգության հիմնական խնդիրն են համարում ամերիկյան արժեքների պաշտպանությունը:

Այլ խոսքով՝ «մարդկային-հասարակական» ոլորտում չեն կարող լինել ընդհանրական դեղատոմսեր. ամեն մի հանրություն ինքը պետք է ձգտի իմանալ և որոշել, թե որոնք են իր կրիտիկական ենթակառուցվածքները և ինչպես պետք է ապահովել դրանց անվտանգությունը: Նման մոտեցումներն այսօր տարածում են գտնում. օրինակ, Իսրայելի ռազմական դոկտրինում որպես անվտանգության կրիտիկական ենթակառուցվածքներ են ընդունվել ազգային խորհրդանիշներ համարվող կառույցները, մասնավորապես՝ Հոլոքոստի թանգարանը՝ Յադ Վաշեմը, հոգևոր տաճարները և այլն¹:

Նկատենք, որ եթե վերոնշյալ հարցերի հստակեցումների անհրաժեշտությունը վերաբերում է հանրության պաշտպանական համակարգին, ապա պատերազմները ենթադրում են նաև հարձակողական գործողություններ: Այս դեպքում անհրաժեշտություն է ծագում բազմակողմանի գիտելիքներ և պատկերացումներ ունենալ նաև պայմանական հակառակորդի հասարակության անհրաժեշտ ցուցանիշների վերաբերյալ: Տեղին է վերհիշել չինացի ստրատեգ Մուն Յզիի հայտնի դրույթն այն մասին, թե հաղթանակի համար «պետք է իմանաս ինչպես քեզ, այնպես էլ թշնամուն»:

Միևնույն ժամանակ, կարևոր է այն հանգամանքը, որ բազմակենտրոն հակամարտությունների ներկա ժամանակաշրջանում տեղեկատվա-

¹ *Гриняев С.*, О взгляде на проблему безопасности критической инфраструктуры в государстве Израиль, <http://www.csef.ru/index.php/ru/component/csef/project/-/-/?id=3229>.

կան պատերազմներն ընդունել են շարունակական բնույթ, ինչը լրացուցիչ խնդիրներ է առաջացնում ինչպես պաշտպանվող, այնպես էլ հարձակվող կողմերի համար: Մասնավորապես, պաշտպանվող կողմից, նման պատերազմում արդյունավետ դիմակայելու համար, այսօր պահանջվում է վարել տեղեկատվական-հասարակական բնույթի մոբիլիզացիոն քաղաքականություն: Որպես նման քաղաքականության միջոց՝ որոշ հետազոտողներ տեսնում են հասարակությունում կուռ և միաժամանակ արդիական ու ճկուն գաղափարախոսական համակարգի ձևավորումը: Մասնավորապես, այս խնդրում որպես ելման կետ կարելի է ընդունել գաղափարախոսության արդի սահմանումը, համաձայն որի՝ այն «հրահանգների համալիր է, որն ապահովում է գործընթացների ամենաարդյունավետ ռեժիմը և փոխկապակցվածությունը»¹:

Վյաչեսլավ Յանկոյի խիստ դինամիկ, ալգորիթմ հանդիսացող այս սահմանումը, ըստ ամենայնի, կիրառելի է նաև ազգային և, մասնավորապես, տեղեկատվական անվտանգության խնդիրները դիտարկելիս: Վերոնշյալ հարցերն առավել հստակ քննարկելու համար անհրաժեշտ է համառոտ էքսկուրս կատարել, թե ինչ դերակատարում ունեն գաղափարախոսական հիմնադրույթները տարբեր երկրներում, և ինչպես են դրանք առնչվում տվյալ հանրությունների ազգային անվտանգության խնդիրներին:

Բազմագաղափարախոսության ձևավորում. Գաղափարախոսություն եզրը 19-րդ դարի սկզբին շրջանառության մեջ է դրել փարիզյան էլիտար գիտական կենտրոնին՝ *Բնաստիտուտի*² անդամակցող Անտուան Դեստյուտ դը Տրասին: Ըստ դասական պատկերացումների՝ գաղափարախոսությունը սահմանվում է որպես «հասարակությանը, անձին և մեզ շրջապատող աշխարհին ուղղված հայացքների համակարգ»: Նման ձևակերպումը կարելի է համարել տեսական հենք վերը նշված Վ.Յանկոյի գործողություններ ենթադրող ալգորիթմի համար՝ «հրահանգների համալիր, որն ապահովում է գործընթացների ամենաարդյունավետ ռեժիմը և փոխկապակցվածությունը»:

Ընդունված է համարել, որ գոյություն ունեն հիմնարար երկու ունիվերսալ գաղափարախոսություններ՝ սոցիալիստական (գլխավոր դրույթը հասարակությունում սոցիալական հավասարության սկզբունքների գերակայությունն է) և ազատական (հենքում ընկած է անձի ազատության գե-

¹ Янко В.А., <http://yanko.lib.ru>

² *Բնաստիտուտ* եզրն առաջացել է նշված ժամանակաշրջանում: Ի դեպ, փարիզյան *Բնաստիտուտի* անդամ էր նաև Նապոլեոն Բոնապարտը:

րակայությունը): Նման դասակարգումը պայմանավորված է նրանով, որ այդ երկու գաղափարախոսությունների բովանդակությունը կազմող սկզբունքներն այս կամ այն չափով կարող են օգտագործվել գրեթե բոլոր հանրությունների կողմից, անկախ նրանց էթնիկական, կրոնադավանական կամ, եթե ավելի ընդհանրական՝ քաղաքակրթական պատկանելությունից: Ի տարբերություն նշված երկուսի, ազգային-պահպանողական բնույթի գաղափարախոսությունները հենվում են կոնկրետ հանրությանը բնորոշ ազգային-քաղաքակրթական արժեքային համակարգի, ինքնության վերաբերյալ պատկերացումների և ավանդույթների վրա: Նկատենք, որ առաջանում են նաև այսպես կոչված «հիբրիդային» գաղափարախոսություններ, որի օրինակն էր գերմանական նացիոնալ-սոցիալիզմը, որը կարելի է համարել ծայրահեղականացված ազգային-պահպանողական և սոցիալիստական մոտեցումների միաձուլում:

Ժամանակի ընթացքում գաղափարախոսությունները, չնայած դրանց հիմնարար դրույթների հարաբերական անփոփոխությանը, որոշակի զարգացումների են ենթարկվում: Երբեմն դա տալիս է դրական արդյունքներ, երբեմն՝ ոչ այնքան: Սակայն ամենամեծ փորձությունները սկիզբ են առնում այն ժամանակ, երբ հանրությունում որևէ գաղափարախոսություն երկարատև մենաշնորհ և բացարձակ գերակայություն է ձեռք բերում: Որպես կանոն, դա ծանր հետևանքներ է ունենում տվյալ երկրի համար: Այդ երևույթի դասական օրինակներն են նացիոնալ-սոցիալիզմի բացարձակ գերիշխումը Երրորդ ռեյխում կամ սոցիալիզմի մենատիրական-բյուրոկրատական մոդիֆիկացիայի հաստատումը Խորհրդային Միությունում: Մինչդեռ պատմական փորձը վկայում է, որ այն հանրությունները, որոնք կարողանում են մտածված չափաբաժիններով համատեղ կիրառել ազատական, սոցիալիստական և ազգային-պահպանողական բնույթի գաղափարախոսությունները, զգալի զարգացում և առաջընթաց են ցուցաբերում: Այս օրինաչափությանը ենթարկվող «բազմազաղափարախոսական» համակարգը ստացել է «գաղափարախոսական տրիադա» անվանումը [1]: Նման տրիադան մեծացնում է հանրության տարաբնույթ և առաջին հերթին հոգևոր և մտավոր ռեսուրսները, իսկ քաղաքական համակարգը դարձնում է ավելի ճկուն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հարաբերություններում: Բնականաբար, այս հանգամանքները բարձրացնում են ազգային և տեղեկատվական անվտանգության մակարդակը: Հայտնի է նաև, որ գաղափարների վերածումը քաղաքական գաղափարախոսությունների գրեթե անհնար է առանց տեղեկատվական համալիր գործողությունների: Իրենց հերթին, գաղափարախոսական դրույթ-

ները զգալիորեն պայմանավորում են հանրությունների տեղեկատվական տարածքի բովանդակությունը և այդպիսով իսկ՝ նրա պաշտպանվածությունն արտաքին տեղեկատվական միջամտություններից:

Վերոնշյալի համատեքստում փորձենք համառոտակի համեմատել ու գնահատել որոշ հանրությունների գործունեության արդյունավետությունը՝ կախված այդ հանրությունների գաղափարախոսական - տեղեկատվական դաշտի բնութագրերից:

Անզուտ-ամերիկյան տեխնոլոգիաներ. Արդյունավետ և մրցունակ «բազմագաղափարախոսական» համակարգի դասական արտահայտություն է բրիտանական մոդելը, որն այս կամ այն ձևաչափով ներդրվել է նաև մնացյալ անգլիախոս երկրներում: Այդ երկրների հանրություններին բնորոշ է գաղափարախոսական լայնախոհություն. կոնսերվատիվ (ազգային-պահպանողական) և լեյբորիստական (սոցիալիստական ուղղվածություն) գաղափարների կրողները մշակել են միմյանց փոխլրացնող մեխանիզմներ և համատեղ գործում են ազատական գաղափարախոսական դաշտում, որը հարազատ է անզուսաքսոնյան հոգեկերտվածքին: Այս գործնով է, որ պետք է պայմանավորել Բրիտանական կայսրության (ընդունված է համարել, որ Միացյալ Նահանգները Բրիտանական կայսրության իրավահաջորդն է) ռազմավարական ձեռքբերումները և այն փաստը, որ վերջին մի քանի հարյուր տարում այդ հանրությունը կարողանում է պահպանել առաջատարի կարգավիճակը:

Հատկանշական է, որ ԱՄՆ-ը, փոխառելով բրիտանական քաղաքական տրամաբանությունը, թերևս իր պատմական զարգացման յուրահատկության պատճառով անտեսել է սոցիալիստական տիպի գաղափարախոսություն ունեցող քաղաքական ուժի կարևորությունը: Արդյունքում՝ այդ երկրում ազատականության և սպառողականության բացարձակացումը լուրջ խնդիրներ է առաջացրել, որի հետևանքով էլ ԱՄՆ-ը սկսել է զիջել համաշխարհային առաջատարի դիրքերը: Գաղափարախոսական թերացումների առկայությունը կարծես թե ընկալվել է ամերիկյան ընտրանուկողմից, և դրանով պետք է պայմանավորել, օրինակ, 2016թ. նախագահական ընտրությունների նախնական փուլում սոցիալիստական կողմնորոշումներ ունեցող Բերնի Սանդերսի մասնակցությունը: Ավելին, տպավորություն է ձևավորվում, որ այդ ընտրություններում հաղթած Դոնալդ Թրամփը սկսել է պայքարել ազատականության ծայրահեղականացված դրույթների դեմ և այդ համատեքստում փոքր-ինչ հիշեցնում է խորհրդային առաջնորդ

Ն.Խրուշչովին, որն էապես բարեփոխեց տոտալիտար բնույթ ընդունած կոմունիստական համակարգը:

Չինական մոդել. Գաղափարախոսական տեսանկյունից հատուկ ուշադրության է արժանի «չինական հրաշքի» երևույթը: Ընդամենը երեք տասնամյակ առաջ միագաղափարախոսական կոմունիստական Չինաստանը բոլոր չափանիշներով հեռու էր առաջատար երկրներից: Իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ Մաո Ցզե Դունի նախկին համախոհ Դեն Սյաո Պինը, դառնալով ՉԺՀ փաստացի ղեկավարը, միակուսակցական համակարգում ներդրեց ազատականության և ազգային պահպանողական (կոնֆուցիոնիստական) գաղափարախոսությունների տարրերը: Հատկանշական է, որ այդ ամենին զուգահեռ՝ պահպանվեցին «ղեկավար» սոցիալիստական գաղափարախոսությունից բխող բոլոր առավելությունները: Սակայն անգամ այդ ունիվերսալ ուսմունքում օգտագործվում են մ.թ.ա. V դարի փիլիսոփա և մտածող Մո Ցզիի դրույթները, որը համարվում է չինական սոցիալիզմի հիմնադիրը: Այլ խոսքով՝ սոցիալիզմն ադապտացվեց չինական ավանդույթներին և հոգեկերտվածքին: Արդյունքում՝ Չինաստանը դարձավ գերտերություն և առաջատար ինչպես տնտեսական, ռազմական, այնպես էլ տեխնոլոգիաների ոլորտներում: ՉԺՀ ձեռքբերումները պայմանավորված են նաև նրանով, որ վարչաքաղաքական համակարգում գործում են *մերիտոկրատիայի*¹ սկզբունքները, համաձայն որոնց՝ ղեկավար պաշտոնները պետք է զբաղեցնեն առավել ընդունակ և պատրաստված անձինք:

Իսլամ և ազատականություն. Իսլամական աշխարհում նկատվում է կրոնական պահպանողական գաղափարների զարգացման միտում, որի ծայրահեղականացված արտահայտությունը հանդիսացավ *Իսլամական պետությունը*: Հատկանշական է, որ այն երկրները, որոնք կարողացել են համատեղել կրոնական ավանդականությունը (որը պարունակում է նաև սոցիալական արդարության վերաբերյալ պատկերացումներ) և ազատական ու զուտ ազգային մոտեցումները, էապես բարելավել են իրենց կարգավիճակը միջազգային հանրությունում: Նման պետությունների շարքում առանձնահատուկ ուշադրության է արժանի Իրանը, որտեղ հաջողվել է որոշակի համամասնությամբ ինտեգրել արմատական իսլամը, պարսկական ազգային-քաղաքակրթական ավանդույթները և ժողովրդավարության ու տնտեսական ազատականության տարրերը: Արդյունքում՝ Իրանը վե-

¹ *Մերիտոկրատիա* (լատ. *meritus*՝ արժանապատիվ) – արժանապատիվների իշխանություն:

րածվել է տարածաշրջանային առաջատարի և համակողմանի զարգացող երկրներից մեկն է միջազգային ասպարեզում: Նկատենք, որ իսլամական որոշ երկրների անբավարար մրցունակությունը պայմանավորում են մտավոր (ինտելեկտուալ) ռեսուրսների որոշակի պակասով: Մինչդեռ Իրանն իրականացնում է սեփական տիեզերական և միջուկային ծրագրերը, իսկ նանոտեխնոլոգիաների ոլորտում հասել է տպավորիչ արդյունքների: Այս երկրում նույնպես փոքր-ինչ յուրովի կիրառվում են *մերիտոկրատիկ* սկզբունքները: Մասնավորապես, պետական համակարգում կարևոր դերակատարում ունեն Փորձագետների խորհուրդը և Քաղաքական նպատակահարմարությունը որոշող խորհուրդը: Նման բազմազաղափարախոսական համակարգը թույլ տվեց Իրանին դիմակայել տասնյակ տարիներ տևած արևմտյան պատժամիջոցներին (որոնք միայն 2015թ. փոքր-ինչ մեղմվեցին) և «գունավոր հեղափոխություն» իրագործելու փորձերին:

Մայրցամաքային Եվրոպա. Այստեղ ավանդաբար կարևորվում են ազատական և սոցիալիստական կուսակցությունները: Վերջինների թիվն անցնում է մի քանի տասնյակից, և նրանց հաջողվել է հասնել սոցիալական բարեկեցության տպավորիչ արդյունքների: Միննույն ժամանակ, *ԵՄ*-ում, հասկանալի պատճառներով, դեռևս սակավ դերակատարում ունեն համաեվրոպական ազգային-պահպանողական մոտեցումները: Ավելին, եվրոպական երկրների ազգայնական կուսակցությունները, հատկապես միգրանտների խնդրի հետ կապված ճգնաժամի պայմաններում, հաճախ հանդես են գալիս *ԵՄ* ինտեգրացիոն նախագծերի դեմ: Այդ հանգամանքով է պայմանավորված, որ *ԵՄ*-ը, ունենալով նույնքան տնտեսական ներուժ, որքան և ԱՄՆ-ը, իր ռազմաքաղաքական հզորությամբ և աշխարհաքաղաքական ազդեցությամբ զգալի զիջում է վերջինիս:

Գաղափարախոսական հեղափոխություններ Ռուսաստանում. Ազգայնական և ազատական գաղափարներ կրողների հետ միասին՝ ռուսական հանրության մի զգալի հատվածի հոգեկերտվածքին հարազատ են սոցիալիստական պատկերացումները, որի հենքն ընդունված է համարել ռուսական գյուղական համայնքների ավանդական կացութաձևը: Ինչպես հայտնի է, ռուսաստանյան իրականությունում գաղափարական հակասությունները հանգեցրել են հեղափոխությունների (1917թ.՝ սոցիալիստական, 1991թ.՝ ազատական), դրանցից բխող հետևանքներով և հաղթած գաղափարախոսության գերակայության հաստատումով: Արդյունքում՝ համաշխար-

հային առաջատար լինելու նախապայմաններ և հավակնություններ ունեցող Ռուսաստանը վերջին հարյուրամյակում պարբերաբար հայտնվում է բարդ իրավիճակներում: Ելնելով այդ նկատառումներից՝ ՌԴ արդի իշխանությունները փորձում են համատեղել տարբեր գաղափարական հոսանքները: Այդ երկրում, բացի պահպանված կոմունիստական կուսակցությունից, գործում է նաև սոցիալիստական կողմնորոշումներ ունեցող «Արդարացի Ռուսաստան» (*Справедливая Россия*) կուսակցությունը, իսկ «Միասնական Ռուսաստան» (*Единая Россия*) կուսակցությունն իրեն համարում է պահպանողական:

Բոլոր պարագաներում, պետք է փաստել, որ գաղափարախոսական ոլորտի անբարենպաստ իրողություններն էական ազդեցություն են թողել ռուսական և այդ համատեքստում՝ անգամ ողջ սլավոնական հանրության զարգացման վրա:

Իսրայելյան փորձը. «Գաղափարախոսական տրիադան» արդյունավետ է գործում ոչ միայն խոշոր պետություններում: Օրինակ, մշտական հակամարտության իրադրությունում գտնվող Իսրայելը, որի քաղաքական համակարգում «գաղափարախոսական տրիադան» ներկայացված է մտածված համամասնությամբ, իր ստեղծման առաջին տարիներին սահմանամերձ շրջաններում հիմնել է մոտ 200 *կիբուց*, որոնք գործում են առ այսօր: Դրանք գյուղատնտեսական կոմունաներ են, որոնք կատարում են նաև մարտական սահմանապահ գորքերի գործառույթներ: Միննույն ժամանակ, կիբուցներում ունեցվածքն ընդհանուր է, կոլեկտիվ աշխատանքի արդյունքները բաշխվում են հավասարաչափ, ինչը հիշեցնում է խորհրդային ժամանակաշրջանի կոլտնտեսությունները: Կիբուցները ստեղծվել են ազգային պահպանողական (երբեմն՝ օրթոդոքսալ բնույթի) և սոցիալիստական ուղղվածություն ունեցող գաղափարախոսությունների յուրատեսակ միասնության արդյունքում: Նման սիմբիոզն ապահովում է սահմանների պաշտպանների հայրենասիրական բարձր ոգին, որին մեծ չափով նպաստում է բոլորի հավասարության (այդ թվում՝ նյութական) սոցիալիստական սկզբունքը, որն, ի լրումն, պարունակում է նաև կազմակերպչական-մոբիլիզացիոն գործոն:

Վերը բերված օրինակներից հետևում է, որ գաղափարախոսական դաշտի հնարավորինս ներդաշնակությունը և համաչափությունը կանխորոշում են հանրության ազգային ռազմավարության արդյունավետությունը:

Դա հիմք է տալիս համարելու, որ տվյալ երկրի գաղափարախոսական դաշտը և նրա ցուցանիշներն ազգային և տեղեկատվական անվտանգության համատեքստում անհրաժեշտ է ընդունել որպես առաջնային կրիտիկական ոլորտ:

Սակայն անվտանգությունը, ինչպես գիտենք, ստատիկ պաշտպանություն չէ, այլ ենթադրում է կառուցողական գործողությունների ռազմավարություն: Հետևաբար, եթե այս կամ այն հանրության գաղափարախոսական դաշտը չի համապատասխանում անվտանգության պահանջներին և այդպիսով չի խթանում հասարակության հոգևոր-մտավոր և սոցիալ-տնտեսական զարգացումը, ապա պաշտպանության միակ ճանապարհը տեղեկատվական-հասարակական տեխնոլոգիաների միջոցով լիարժեք գաղափարախոսական դաշտի ձևավորումն է:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ունիվերսալ գաղափարախոսությունների տեսական և գործնական կոնցեպտները զարգանում են միջազգային հանրության մի լայն հատվածում, ինչը թույլ է տալիս դրանց արդյունքներից օգտվել անգամ համապատասխան ռեսուրսներ չունեցող հասարակություններին: Մինչդեռ իրադրությունն ազգային-պահպանողական գաղափարախոսության ոլորտում փոքր-ինչ այլ է, քանի որ տեսական և բովանդակային հարցերի լուծումը հիմնականում կոնկրետ հասարակության խնդիրն է:

Ինչպես նշել ենք, ազգային-պահպանողական բնույթի գաղափարախոսությունը (այսուհետ՝ *ԱՊԳ*) հենվում է կոնկրետ հանրությանը բնորոշ ազգային-քաղաքակրթական-կրոնական արժեքային համակարգի, ինքնության վերաբերյալ պատկերացումների և պատմական ավանդույթների վրա: *ԱՊԳ-ն*, ինչպես և մնացյալ գաղափարախոսական ուղղությունները, վերածվում է ազդեցիկ գործոնի, երբ դառնում է հանրային գիտակցության բաղադրամաս, իսկ դա հնարավոր է իրագործել միայն տեղեկատվական միջոցներով: Անշուշտ, այս հարցում առաջնային խնդիրը նման գաղափարախոսության հիմնական դրույթների մշակումն է: Սակայն դա չի նշանակում, թե համապատասխան համակարգի ձևավորումը պետք է իրագործվի միայն *ԱՊԳ* հիմնադրույթների վերջնական հստակեցումից հետո. նման հիմնադրույթների ձևավորումը և զարգացումը ենթադրում են մշտական կատարելագործում և գործնականում դրանց արդյունավետության փորձարկում: Այդպիսի մոտեցման պարագայում ներքին դաշտում տեղեկատվական-հոգեբանական գործողությունների հիմնական խնդիրները կարող են լինել.

- *ԱՊԳ* առանձին դրույթների ներդրումը հասարակության տեղեկատվական տարածքում:
- *ԱՊԳ* հիմնադրույթների պաշտպանությունն արտաքին և ներքին խեղաթյուրումներից:
- Ազգային շահերի համատեքստում *ԱՊԳ* կոնցեպտների տարածումն արտաքին տեղեկատվական դաշտում:

Մինևույն ժամանակ, *ԱՊԳ-ն*, լինելով *SU* կրիտիկական ոլորտ հանդիսացող «գաղափարախոսական տրիադայի» բաղադրիչ, իր հերթին պետք է ընկալվի որպես «կրիտիկական ենթակառուցվածք», քանի որ իրականացնում է ազգային ինքնության և արժեքային համակարգի զարգացման ու պահպանման գործառույթներ:

Սակայն, ինչպես արդեն նշել ենք, հանրության արժեքային համակարգը ստատիկ կատեգորիա չէ. այն փոփոխվում է՝ կախված պատմառազմաքաղաքական, ինչպես նաև հասարակության էվոլյուցիոն կամ հեղափոխական զարգացումներից: Այսօր ցանկացած հասարակության արժեհամակարգի վրա էսպես ներգործում են տեղեկատվական ինչպես նպատակաուղղված, այնպես էլ քառտիկ տեղեկատվական հոսքերը, որոնք նկատելի չափով ձևավորում են գլոբալ հանրության մտածելակերպը, հոգեկերտվածքը և այդպիսով նաև՝ արժեքային համակարգը: Այդ իրողությունները բնորոշ են նաև Հայկական հանրությանը:

Գաղափարախոսական խնդիրները Հայկական հանրությունում. Ակնհայտ է, որ ուրույն քաղաքակրթական հատկանիշներով օժտված հայկական արժեհամակարգն այն հիմնասյուներից է, որոնց շնորհիվ պահպանվել է մեր ազգային-պատմական շարունակականությունը: Մինևույն ժամանակ, վերջին երկու հարյուրամյակում տեղի ունեցած աշխարհաքաղաքական և հեղափոխական գործընթացների հետևանքով Հայկական հանրությունը մի քանի անգամ փոխել է իր կեցության հասարակական-գաղափարախոսական միջավայրը. բավական է հիշատակել պարսկական տիրապետությունը, Ռուսական կայսրությունը, Առաջին, Երկրորդ և վերջապես Երրորդ հանրապետությունները: Արդյունքում՝ հանրության արժեհամակարգում կատարվել են զգալի, երբեմն՝ հակասական, բովանդակային փոխակերպումներ:

Մինևույն ժամանակ, նախորդ դարի 20-30-ական թվականների Երկրորդ հանրապետության հանրությանը պարտադրված կոմունիստական հիմնադրույթները նկատելիորեն փոխակերպվեցին և որքան հնարա-

վոր է համատեղվեցին ազգային արժեհամակարգին հատուկ պատկերացումների հետ: Մակայն ներկայում դրանց մի զգալի մասը հակասության մեջ է գտնվում մեր իրողություններում նկատելի վուլգարացված և պարզունակացված ազատական գաղափարախոսության դրույթների հետ:

Նկատենք, որ հանրության արժեհամակարգի ուսումնասիրությունը համարվում է հրատապ խնդիր: Այդ համատեքստում միջազգային որոշ կազմակերպություններ լայնածավալ հետազոտություններ են իրականացնում ողջ աշխարհում: Օրինակ, Աշխարհի արժեքների ուսումնասիրություն (*World Values Survey*)¹ կազմակերպության իրագործած ուսումնասիրությունների համաձայն՝ ՀՀ բնակչությունը գտնվում է Հարավային Ասիայի և հետխորհրդային երկրների մշակութային տիրույթում, որտեղ գերակայում են ավանդական և գոյապահպանական տիպի արժեքները: Եվ այնուամենայնիվ, պետք է փաստել, որ Հայաստանի և Սփյուռքի բնակչության արժեհամակարգի վերաբերյալ պատկերացումները փոքր-ինչ ընդհանրական-զգացական բնույթ են կրում և միշտ չեն գիտականորեն հիմնավորված:

Մեկ անգամ ևս շեշտենք, որ *ԱԳՊ* և քաղաքականության առնչությունների սերտացումն ու դրանք կիրառական հարթություն փոխադրելն անհնար է պատկերացնել առանց համապատասխան տեղեկատվական քաղաքականության, և սա վերաբերում է ոչ միայն արժեհամակարգի հետ կապված խնդիրներին: Մասնավորապես, եթե *ՏԱ* տեսանկյունից դիտարկենք, թե ինչպես է լուսաբանվում հայրենական տեղեկատվական տարածքում մեր պատմության խորհրդային շրջանը, ապա կհամոզվենք, որ այստեղ առկա են հիմնախնդիրներ, որոնք կապված են տեղեկատվական անվտանգության հենասյուներից մեկի՝ պատմական հիշողության պահպանման հետ: Մինչդեռ այն հանրությունները, որոնք կորցնում են պատմական հենքը, առավել շատ են ենթակա տեղեկատվա-հոգեբանական ազդեցություններին, և այս առիթով տեղին է հիշել չինական ասացվածքը, թե «պատմությունը մոռանալը դավաճանություն է»:

Տեղեկատվական տարածքում Երկրորդ հանրապետությանը վերաբերող մոտեցումները հիմնականում կրում են «ողբերգական» կամ «հեզնական» երանգ և հիշեցնում են բոլշևիկյան ոճը, երբ պախարակվում էր այն ամենը, ինչ կապված էր Առաջին հանրապետության հետ: Թերևս, ճիշտ էր փիլիսոփա Կառլ Շմիդտը, երբ պնդում էր, թե «Մարքսիստական և ազատական գաղափարախոսական/տնտեսական դիվականացման (դեմոնիզմի) փիլիսոփայական պարադիգմերը նույնն են»:

¹ Տե՛ս worldvaluessurvey.org

Մինչդեռ Երկրորդ հանրապետության գնահատականի հարցում նման մոտեցումն օբյեկտիվ պատմության խեղաթյուրում է, քանի որ, ողբերգական իրողություններից բացի, այդ ժամանակահատվածում ստեղծվել է հզոր գիտատեխնոլոգիական-արդյունաբերական համակարգ, իսկ ժողովրդագրական աճի պայմաններում ձևավորվել է բարձր կրթական և բարոյական ցենզ ունեցող ստեղծագործ հանրություն:

Պետք է, թերևս, հստակ գիտակցել, որ ցանկացած երկրի պատմությունն ոչ միայն նրա քաղաքական վարչակարգի, այլև, առաջին հերթին, այդ երկրի հասարակության և ժողովրդի պատմությունն է: Այդ համատեքստում մենք պարտավոր ենք արձանագրել, որ հայաստանյան հանրությունն ավելի քան արժանապատիվ կերպով է տարել իրեն բաժին հասած քաղաքական-ռազմական և հեղափոխական փորձությունները: Խորհրդային շրջանի ականավոր այլախոհ մտավորական Բորիս Կազարլիցկին, որն, ի դեպ, անցել է բռնաճշմունքների բովով, բավական դիպուկ է նկատել, որ խորհրդային պատմության թերագնահատումն առաջին հերթին դավաճանություն է խորհրդային համակարգի զոհերի հանդեպ [2]:

Մենք խնդիր չենք դնում իդեալականացնել մեր ոչ վաղ անցյալը, ինչպես և չի կարելի իդեալականացնել կամ դիվականացնել ցանկացած պատմական դարաշրջան: Միննույն ժամանակ, պետք է ամրագրել, որ Առաջին հանրապետությունը Երկրորդ հանրապետության, իսկ վերջինս էլ՝ Երրորդ հանրապետության հենքն է, և այս շարունակականությունը պետք է համապատասխան կերպով մեկնաբանվի ու լուսաբանվի:

Ապրիլ, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Арутюнян Г.*, Распад «системы» и формирование будущего, НОФ «Нораванк», Ереван, 2011.
2. *Кагарлицкий Б.*, Политология революции, Москва, Алгоритм, 2007.

**ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ
ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

Գագիկ Հարությունյան

Ամփոփագիր

Հոդվածում հիմնավորվում է այն դրույթը, որ հանրության անվտանգությունն էապես պայմանավորված է տիրող գաղափարախոսական համակարգով, որն

այդպիսով պետք է ընդունել որպես կրիտիկական ոլորտ, իսկ այդ համակարգի բաղկացուցիչ մասերը՝ որպես կրիտիկական ենթակառուցվածքներ: Տարբեր երկրների քաղաքական փորձի համեմատական համառոտ վերլուծությունից հետևում է, որ ռազմաքաղաքական և տնտեսական առումով մրցունակ են այն հանրությունները, որոնք կարողացել են ազատական, սոցիալիստական և ազգային-պահպանողական գաղափարախոսությունների մտածված համադրման միջոցով ձևավորել «գաղափարախոսական տրիադա»:

КРИТИЧЕСКИЕ ИНФРАСТРУКТУРЫ И ИДЕОЛОГИЯ

Գագիկ Արությունյան

Резюме

В статье обосновывается постулат о том, что безопасность общества существенно обусловлена господствующей идеологической системой, которую, таким образом, нужно признать критической сферой, а компоненты этой системы – критическими инфраструктурами. Из краткого сопоставительного анализа политического опыта разных стран следует, что в военно-политическом и экономическом плане конкурентоспособны те общества, которые сумели с помощью продуманного сочетания либеральной, социалистической и национально-консервативной идеологий сформировать «идеологическую триаду».

CRITICAL INFRASTRUCTURES AND IDEOLOGY

Gagik Harutyunyan

Resume

The article corroborates the concept that public safety is significantly determined by the prevalent ideological system, which should be considered as a critical area, while its components as critical infrastructures. A brief comparative analysis of various countries' experience shows that the military-political and economic competitiveness is achieved by the countries that are able to form an “ideological triad” through combination of liberal, socialist and national-conservative ideologies.

**ԲԱՌԵՐԻ ՏԻԵԶԵՐՔ. ՀԱՃԱԽԱԿԻՈՒԹՅԱՆ
ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ GOOGLE N-GRAMS ԳՈՐԾԻՔԸ¹**

*Արա Հ. Մարջանյան**

Ալեքսանդր (Ալիս) Մարջանյանի հիշատակին

En archē ēn ho Lógos, kai ho Lógos ēn pròs tôn Theón, kai Theòs ēn ho Lógos.

Ակզբից էր Բանը, եւ Բանը Աստծու մօտ էր, եւ Բանը Աստուած էր:

In principio erat Verbum, et Verbum erat apud Deum, et Deus erat Verbum.

In the beginning was the Word, and the Word was with God, and the Word was God.

Au commencement était la Parole, et la Parole était avec Dieu, et la Parole était Dieu.

В начале было Слово, и Слово было у Бога, и Слово было Бог.

Յովհաննէս, 1.1.

*Բանալի բառեր*¹ հաճախակիության բառարաններ, թարգմանություն, տեքստ, լեզվական կորպուս, հայերենի բառօգտագործում, վերլուծաբանական հանրություն:

1. Նախաբան

Արևմտյան կիսագնդում բառերի մասին խոսելիս գրեթե անհնար է սկսել առանց Հովհաննեսի Ավետարանի առաջին տողը ցիտելու²: Այսպես ենք վարվում և մենք՝ բնաբանում բերելով ոչ միայն այդ տողի հունարեն բնագիրը, այլև դրա հայերեն, լատիներեն, անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն կանոնակարգային թարգմանությունները: Անում ենք դա՝ ընդգծելու համար հետևյալ բազմանշանակ փաստը. հունարեն բնագրի *լոգոսը*, *հուրախու-*

¹ Հոդվածը հիմնված է 2011թ. համանուն ակնարկի վրա, որը 2016թ. նոյեմբերի 18-ին ներկայացվեց «Նորավանք» ԳԿՀ կոնսենտ անալիզի սեմինարին: Հեղինակը շոյված է, որ «Dasaran.am» կայքում 2014-ից մեկնարկած հայերեն բառապաշարի հարստացմանն ուղղված խաղը կոչվում է «Բառերի տիեզերք»:

^{*} ՄԱԿ ԶԾ էներգետիկայի ազգային փորձագետ, տ.գ.թ., «Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ:

² Բազմանշանակ գուգադիպությամբ իրադրությունը գրեթե նույնն է նաև Արևելյան կիսագնդում: Չինական աշխարհում կցիտվեր *Դաո Դե Ցզինի* 81-րդ *ջանը*՝ *Դաո* հիերոգլիֆի եռակի օգտագործումով: Հնդկաստանում՝ *Չխանդոգյա ուպանիշադի* առաջին տողերը՝ *Աում* վանկի եռակի ընկալմամբ: Ճիշտ ինչպես Յովհաննէսի, ավելի ճիշտ՝ Հերակլիտեսի *լոգոսի* պարագայում:

թյուն Հերակլիտեսի, մեր հայրերը թարգմանել են որպես *բան*, այլ ոչ թե *բառ* կամ *խոսք*: Ինչպես որ դա արված է բազմաթիվ այլ լեզուներում¹:

Բանն այն է, որ ի սկզբանե հայերեն լեզվամտածողությունում *բան* բառը չափազանց բազմիմաստ էր: Եվ այն լիովին պահպանել է իր ողջ բազմիմաստությունը մինչ օրս՝ նշանակելով և՛ խոսք, և՛ բառ, և՛ իր, և՛ գործ: Կարճ ասած՝ հայերենը պահպանել է մարդկության հինավուրց գաղտնիքը՝ բառը դառնում է բան, գործ և իրականություն: Եվ հակառակը՝ բանը, իրականությունը դառնում են բառ և խոսք: Համաձայն Հր. Աճառյանի, *Բառ* և *Բան* բառերը գոյացել են բուն հայերեն *Բալ* բայից ([1], հ.1, էջ 383, 403, 413): Պարզ արմատն է բնաձայն *Բա*-ն՝ խոսել, բարբաջել, բլբլալ իմաստով: Այս բայից են ավանդված եզակի երեք դեմքերը՝ *Բամ*, *Բաս*, *Բա*, որոնք ներկայում անկախ չեն գործածվում: Թեև ունենք *Բամբասանք* բառը, ինչպես նաև *Բա* և *Բաս* բառերը՝ հաստատում արտահայտելու համար: Օրինակ՝ «Բա որ ասում էի»: Ավագ գործընկերներս կհիշեն. 1964թ. հոկտեմբերին պաշտոնանկ արվեց ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար, ԽՍՀՄ Մի-նիստրների խորհրդի նախագահ Ն.Ս. Խրուշչովը: Նրանք հավանաբար կհիշեն նաև, որ, համաձայն այդ ժամանակվա «*Հայկական ռադիո*»-ի, այս կապակցությամբ Խրուշչովին հղված ամենակարճ հեռագիրը Լենինականից էր: Այն կազմված էր միայն մեկ բառից՝ «*Չբը՛*»:

Պահանջվեցին ԽՍՀՄ փլուզումը 1991-ին և ԱՄՆ-ում տեղեկատվության ազատության մասին օրենքի (*FOIA*) ընդունումը՝ 1997-ին, որպեսզի մեզ հայտնի դառնա այն ուշիմությունը, որով ԱՄՆ ԿՀՎ-ն հետևում ու վերլուծում էր «*Հայկական ռադիո*»-ի կատակները, այդ թվում և վերը բերվածը [2]: Ցավոք, համանման օրենք չընդունվեց ոչ ԽՍՀՄ-ում ու ՌԴ-ում, ոչ էլ Հայաստանում, և մենք այդպես էլ չտեսանք այն փաստաթղթերը, որոնք ցույց կտային ՊԱԿ և ԽՄԿԿ ԿԿ գաղափարական բաժնի բանուկ գործունեությունը «*Հայկական ռադիո*»-ի որոշ կատակների ու տարատեսակ բամբասանքների տարածման գործում: Ասում ենք սա՝ ընդգծելու համար բազմաթիվ, հաճախ՝ անսպասելի կապերը, որոնք առկա են լեզվի ու լեզվամտածողության և քաղաքականության ու աշխարհաքաղաքականության միջև²:

¹ Անգլերեն *Word*-ը մեզ համար այլևս ոչ միայն բառ է նշանակում, այլև բոլորիս հայտնի ծրագիր: Ու դեռ հարց է, թե ոչ այնքան հեռու ապագայում այն ինչ կնշանակի մեր թոռներին համար առաջին հերթին:

² Մեկ այլ հետաքրքիր օրինակ. 1956-ին ԽՍՀՄ-ից վերադարձած գերմանացի դարբին ռազմագերին իր արևմտյան քննիչներին էր հաղորդել տեղացիների մոտ ընդունված «*ЭТО не Томск, а Атомск*» բառակատակը: Դա օգնեց ներառել այս տեղավայրը Ս-2 լրտես օդանավի թռիչքային առաջադրանքում և 1957թ. ամռան վերջին տեղորոշել ԽՍՀՄ «Ատոմային արշիպելագի» ուրանի հարստացման հույժ գաղտնի արդյունաբերական օբյեկտները [3]:

2. Հաճախակիության բառարանները՝ մինչ 2010թ. դեկտեմբեր

Մարդկային տարատեսակ ձեռնարկումների շարքում բառարանների կազմումը, թերևս, ամենագարմանալին է: Իրոք, ինչպես կարելի է հուսալ տեղավորել բառերի ողջ բազմությունը մի գրքում¹, որքան էլ մեծ ու ծավալուն լինի այն: Չէ՞ որ այն ծիծաղելիորեն վերջավոր է բառերի անծայրածիր ու հարափոփոխ օվկիանոսի համեմատ: Այնուամենայնիվ, ահա դրանք, զրված ամենատարբեր լեզուներով՝ բացատրական, ստուգաբանական, արմատական և բազում այլ բառարաններ: Նվիրված մարդկային գործունեության ամենատարբեր ոլորտներին՝ հեքիաթների սյուժեներից մինչև բանտային *արգոյի* բառարաններ, մարդկության սիմվոլներից և այլասերումներից մինչև ազգերի ժեստերի բառարաններ: Անգամ խորհրդավոր՝ թվերի բառարաններ:

Առանց այդ էլ տարօրինակ այս աշխարհում կա նույնիսկ ավելի զարմանալի մի բան: Խոսքս բառերի հաճախակիության բառարանների մասին է: Դրանք ցույց են տալիս, թե տվյալ լեզուն կիրառող մարդիկ որքան հաճախ են օգտագործում այս կամ այն բառը (վանկը կամ բառակապակցությունը) խոսակցական կամ տպագիր լեզվում: Կրկնակի դժվար մի բան, քանի որ այսպիսի բառարանը գործ ունի միաժամանակ երկու (համարյա) անվերջությունների հետ. նախ՝ հենց բուն բառերի տիեզերքի, իսկ այնուհետև՝ այդ տիեզերքը կազմող յուրաքանչյուր բառի, ավելին՝ բառակապակցությունների օգտագործման քանակական ասպեկտների հետ: Չարմանալի չէ, որ հաճախակիության բառարաններն ի հայտ են գալիս միայն XIX դարի վերջին, երբ մարդկությունը դառնում է բավարար հասուն այսպիսի ձեռնարկման համար: Երբ կապիտալիզմը թևակոխում էր իմպերիալիզմի դարաշրջանը, մարդկությունն ինքնավստահ էր ու գործունյա, իսկ աշխատանքի արդյունավետ կազմակերպման և վիճակագրա-հաշվողական մեթոդները հասան նախկինում նախադեպը չունեցող մակարդակի:

Ինչպես և գրեթե միշտ նորագույն պատմությունում, առաջինը գերմանացիներն էին: Խոսքս ժամանակյին լեզենդար, իսկ այսօր՝ հիմնովին մոռացված Ֆ.Վ. Քայդինգի մասին է (*Kaeding*), որը 1891-ից գերմանական *Ռայխի* տարբեր վայրերում իր մոտ 100 բյուրոներում աշխատեցնելով մինչև 5000 հոգի՝ 6 տարում կազմեց և 1897/98-ին հրատարակեց գերմաներենի հաճախա-

¹ Եթե, իհարկե, այն, Բորխեսի մղձավանջային «Ավագե գրքի» (1975թ) նման, չունի անվերջ թվով էջեր, որոնք շարունակ շերտվում են գրքի կազմից:


կիրության իր մոնումենտալ բառարանը [4]: Այն ներառում էր մոտ 20 մլն վանկերի ու հնչյունների և մոտ 11 մլն բառօգտագործման բազմություն (կորպուս՝ ինչպես ասում են լեզվաբանները): Այն վերցված էր ավելի քան 300 գրավոր և բազմաթիվ բանավոր լեզվական աղբյուրներից: Առաջին այս մոնումենտալ փորձը տևական ժամանակ մնաց անգերազանցելի: Հետաքրքրական է, որ XX դարի առաջին կեսին առավել պահանջված էին Քայդինգի ոչ թե զուտ լեզվաբանական արդյունքները, այլ նրա աշխատանքի կազմակերպման փորձը: Այն մանրակրկիտ ուսումնասիրվեց Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում, օգտագործվեց այդ երկրների վիճակագրական բյուրոների աշխատանքների կազմակերպման համար, ներդրվեց մի շարք խոշոր կորպորացիաներում (*Hughes Aircraft Co, IBM* և այլն) ու նույնիսկ օգտագործվեց ԱՄՆ և ՄԲ ատոմային զենքի ստեղծման ծրագրերում:

Լեզվական առումով Քայդինգի արդյունքներն օգնեցին ձևակերպել լեզվի վիճակագրական և հաճախակիության մի շարք կարևոր հասկացություններ (Յիպֆի օրենք, Յիպֆ-Մանդելբրոթի սկզբունք, Պարետոյի սկզբունք, Սվոդեշի ցուցակներ և այլն). զուտ լեզվաբանական, համեմատական լեզվաբանության, լեզվի և քերականության էվոլյուցիային նվիրված ուսումնասիրություններում ներմուծել քանակական գնահատականներ, ինչը հող նախապատրաստեց ապագայի «կորպուսային լեզվաբանության» համար (տես՝ ստորև): Քայդինգի արդյունքներն օգնեցին ձևակերպել նաև տեքստերի (հիմնականում՝ անգլերեն) ընթեռնելիության (Ռ.Ֆլեշ) և ընկալունակության (Ֆլեշ-Քինքելդի թեստ և այլն) չափանիշները, ցույց տալ եզրերի (տերմինների) օգտագործման դյուրինության, տարածվածության և օգտագործման հաճախակիության կապը տվյալ եզրի կարճության հետ: Մի փոքր շեղվելով շարադրանքից՝ դիտարկենք հարցն ավելի հանգամանալի և սկսենք ուշագրավ մի փաստից:

FOIA շրջանակներում հասանելի են աղբյուրներ, որոնցում, հիմնված Երկրորդ աշխարհամարտի փորձի վրա, իրականացվում է մարտի դաշտում օգտագործվող ճապոներեն և անգլերեն հրամանների ու արտահայտությունների համեմատական վերլուծությունը: Եզրակացությունը՝ անգլերեն հրամանների և եզրերի կարճությունը, ի շարք այլ գործոնների, խթանում էր մարտի դաշտում ավելի նախաձեռնող և արդյունավետ վարքը: Անգլերենի և անգլերեն եզրերի տարածվածությունն աշխարհում ունի, անշուշտ, շատ պատճառներ՝ գաղափարախոսական, տեխնոլոգիական, սոցիալական, լեզվահոգեբանական ու պատմական: Սակայն կարևոր նշանակություն ունեն նաև անգլերենի հակիրճությունը և անգլերեն եզրերի կարճությունը:

Նկար 1

Ռուսերեն (վերևում), գերմաներեն (մեջտեղում) և անգլերեն (ներքևում) տեքստերում բառերի հաճախակիության (%) կախվածությունը բառերի երկարությունից (հատ տառ) [5]



Նկար 1-ում բերում ենք սովորական, ոչ տեխնիկական, ռուսերեն, գերմաներեն և անգլերեն տեքստերում բառերի հաճախակիության (%-երի առանցք) կախվածությունը դրանց երկարությունից, այսինքն՝ նրանցում տառերի քանակից (X-երի առանցք) [5]: Ինչպես տեսնում ենք, ռուսերենում եռատառ բառերի հաճախակիությունն ունի այդ լեզվին բնորոշ միևնիմուս: 4 ու 5 տառ երկարությամբ բառերի համար հաճախակիությունը գրեթե հավասար է միմյանց (մոտ 12% յուրաքանչյուրը), իսկ 6 տառից հետո այն մոնոտոն նվազում է: Ընդհանուր առմամբ, ռուսերենի հաճախակիության կորն ունի 2 մաքսիմումի և 3 շրջման կետ (*inflection point*): Ռուսերեն

բառերի միջին երկարությունը կազմել է 5.13 բառ: Իսկ կարճ՝ մինչև 4 տառ երկարությամբ, բառերը կազմում են սովորական ռուսերեն տեքստի մոտ 45%-ը: Գերմաներեն բառերի միջին երկարությունը կազմել է 5.07 բառ, իսկ հաճախակիության կորն ունի երկու շրջման կետ: Հակառակ ռուսերենի, այստեղ նկատելի է եռատառ բառերի հաճախակիության պիկ՝ մոտ 30%: Ինչպես և ռուսերենում, 4 ու 5 տառ երկարությամբ բառերի հաճախակիությունը գրեթե հավասար է: Բայց այն ավելին է, քան ռուսերենում (մոտ 15%): Արդյունքում՝ գերմաներենում կարճ բառերը նույնպես կազմում են տեքստի մոտ 45%-ը:

Միանգամայն այլ է պատկերն անգլերենում: Այստեղ հաճախակիության կորը ողորկ է ու չի տարբերվում դասական, երկպարամետր ասիմետրիկ բաշխման կորից (Վեյբուլի բաշխում), որը բնորոշ է բնական ամենատարբեր երևույթներին¹: Այն ունի միայն մեկ պիկ՝ եռատառ բառերի համար, որին հետևում է մոնոտոն անկում՝ շրջման միայն մեկ կետով (տես՝ Նկ. 1): Անգլերեն բառերի միջին երկարությունը կազմել է 4.24 բառ, այսինքն՝ 19.6% և 21%-ով ավելի քիչ, քան գերմաներենում և ռուսերենում համապատասխանաբար: Իսկ ամենակարևորն այն է, որ անգլերենում կարճ՝ մինչև 4 տառ երկարությամբ, բառերը կազմում են սովորական տեքստի կեսից ավելին՝ 67%-ը: Այսինքն՝ մոտ 22% ավելին, քան գերմաներենում և ռուսերենում: Հետևաբար, սովորական անգլերեն տեքստը առնվազն 22%-ով ավելի կարճ է գերմաներենից և ռուսերենից: Ի դեպ, ցիտվող ուսումնասիրությունում այս եզրահանգումը զարմանալիորեն բացակայում է:

Բերենք մի խոսուս փաստ ևս՝ ծովակալ Ջ.Ֆիշերի հայտնի *«hit first, hit hard, keep hitting»* ասույթի օրինակով: Ինչպես տեսնում ենք, այն պարունակում է 26 տառ, չհաշված ստորակետները: Ռուսերեն թարգմանությունը՝ *«Бей первым, бей сильно, продолжай бить»*, պարունակում է 31 տառ՝ բնագրից մոտ 20% ավելի: Դե, իսկ հայերենը՝ «Հարվածիք առաջինը, հարվածիք ուժեղ, շարունակիր հարվածել»՝ 44 տառ, բնագրից գրեթե 40% ավելի: Անգլոսաքսոնյան աշխարհաբառաբանության այս հակիրճ բանաձևը բնութագրում է ոչ միայն XIX-XXI դարերի բրիտանա-ամերիկյան ծովային էքսպանսիան, այլև աշխարհում անգլերեն տեխնիկական եզրերի ներկայիս լայն տարածումը:

Բանն այն է, որ սովորական անգլերենի հակիրճությունն էլ ավելի բնորոշ է անգլերեն տեխնիկական և բնագիտական լեզվին: Անգլերեն եզրե-

¹ Օրինակ՝ հողմահոսանքի արագության հաճախակիության բաշխումը [6]:

րի կարճությունը, դրանց օգտագործման դյուրինությունը, կրկնենք՝ ի շարս այլ կարևոր գործոնների, ապահովում են դրանց համատարած գործածությունն ու տարածումն աշխարհում: Հակառակը, հայերեն մասնագիտական լեզվօգտագործման ներկայիս անմիփթար վիճակը, ի շարս այլ գործոնների, պայմանավորված է նաև հայալեզու տեխնիկական և գիտական եզրերի ներկա անձոռնի ձևով, դրանց անբնական, հաճախ՝ արհեստածին երկարությամբ ու ապակողմնորոշող բնությամբ:

Վերադառնանք, սակայն, հաճախակիության բառարաններին: XX դարի 2-րդ կեսի գլոբալ հակամարտության և Սառը պատերազմի իրողությունները պայմանավորեցին հեռահաղորդակցության, հաշվիչ տեխնիկայի, կողավորման, գաղտնավերլուծության (*cryptanalysis*) աննախադեպ զարգացումը՝ շեշտակի բարձրացնելով լեզվի հաճախակիության հարցերի նկատմամբ ուշադրությունը: 50-70-ականների ընթացքում կազմվեցին անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն, գերմաներեն, պորտուգալերեն, ճապոներեն և իտալերեն լեզուների հաճախակիության առաջին բառարանները: Ուշագրավ է, որ ռուսերեն լեզվի առաջին այդպիսի բառարանը կազմվեց 1952-53-ին ԱՄՆ-ում [7]¹, իսկ ԽՍՀՄ-ում առաջինը հրատարակվեց միայն 10 տարի անց [9]: 1.0 մլն բառօգտագործման կորպուսի վրա հիմնված ռուսերենի առաջին հաճախային բառարանը հրատարակվեց միայն 1977-ին [10], այն դիտարկում էր մոտ 39 հազ. բառ: Հայոց լեզվի հաճախակիության բառարանի կազմման հարցն առաջին անգամ դրվեց դեռ 1967-68թթ. Բ.Կ. Ղազարյանի կողմից [11]: *Բսկ 1982-ին հրատարակվեց նրա «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության² բառարանը»* [12], որը բերում էր մոտ 36 հազ. բառ:

¹ ԽՍՀՄ հայտնի լրտես Ռ.Աբելի (Վ.Ֆիշերի) անձնական շիֆրի «СЕРГОПА(д)» գաղտնաբառի ընդամենը 7 տառերը փակում են սովորական ռուսերենում օգտագործվող տառերի հաճախակիության մոտ 40%-ը: Այս հանգամանքը հնարավորություն էր տալիս նույնքան չափով կրճատել թե՛ գաղտնագրված տեքստի երկարությունը, թե՛ դրա հաղորդման տևողությունը, ինչը գրեթե անհնար էր դարձնում հաղորդչի տեղորոշումը: Աբելի ձեռքբերումը 1957-ին հնարավոր դարձավ միայն կապավորի մատնության հետևանքով: Նրանից էլ հայտնի դարձան Աբելի անձնական շիֆրի մասին բերված մանրամասները [8]:

² Հայտնի մաթեմատիկոս Հ.Վեյլի հետ ստիպված ենք անել հետևյալ գանգատը: «Հաճախություն» (*frequency, частота*) բառը շատ լեզուներում ունի երկու միանգամայն տարբեր իմաստ. 1) Տատանողական, հետևաբար կանոնակարգված, պրոցեսների հատկանիշ (չափման միավորը՝ տատանում վայրկյանում); 2) վիճակագրա-ստոխաստիկ հատկանիշ, այսինքն՝ որևէ պարտադիր չէ կանոնակարգված, պրոցեսում կամ բազմությունում որևէ առանձնյակի (*specimen*) հայտնվելու քանակական ցուցանիշ (%): Առաջին իմաստով հայերենում ընդունված է «հաճախություն» եզրը: Բայց այն սովորաբար, և միանգամայն անհիմն, դառնում է «հաճախականություն» (14 տառ): Ուստի, ամենայն հարգանքով [12] բառարանի հանդեպ, մենք այստեղ խոսում ենք բառի օգտագործման *հաճախակիության*, այլ ոչ թե ցանկալի *հաճախության* կամ արհեստածին *հաճախականության* մասին:

Փաստենք հետևյալը. չնայած բազմաթիվ խոչընդոտներին ու դժվարություններին, այս առումով 60-70-ական թթ. ՀԽՍՀ-ն գրեթե չէր զիջում միջազգային միտումներին, համահունչ էր դրանց, եթե ոչ որակական, ապա գոնե քանակական առումներով: Մինչդեռ, անցած 25 տարիների ընթացքում Հայաստանի 3-րդ Հանրապետությունում չի իրականացվել արդի հայերենի բառօգտագործման հաճախակիության ասպեկտների որևէ համալիր ուսումնասիրություն: Չեն մշակվել հայերեն բնագիտական և տեխնիկական եզրերի օգտագործման դյուրինության և յուրացման չափանիշները: Չի ուսումնասիրվել եզրերի օգտագործման հաճախակիության կախվածությունը դրանց երկարությունից: Չեն նկարագրվել այս կախվածության առանձնահատկություններն ըստ կիրառման տարբեր ոլորտների և այլն: Այսօր *Նկ. 1*-ում մենք նույնիսկ չենք կարող հայերենի կորն ավելացնել: Քայդինգի և Ցիպֆի աշխատություններից մեկ դար անց այն դեռևս կառուցված չէ: Մնում է միայն ավստուել, որ դեռ XX դարի 70-ականների սկզբին Ա.Ս. Մարջանյանի նախաձեռությունը՝ կազմել և հրատարակել հայերեն տեխնիկական կարճ եզրերի բառարան, մնաց անավարտ՝ հանդիպելով բազում արգելքների:

3. Կորպուսային լեզվաբանություն

Մինչ 2010թ. կազմված հաճախակիության բոլոր բառարաններին բնորոշ էին էական սահմանափակումներ: Պարզաբանենք դրանք [10]-ի օրինակով: Այս բառարանը բերում է 39 268 առանձին բառերի և նշանակություն ունեցող մասնիկների օգտագործման հաճախակիության նկարագիրը՝ հիմնված մոտ 1.1 մլն միավոր բառօգտագործման կորպուսի վրա: Կորպուսը կազմված էր ռուսալեզու 13 հրապարախոսական, 11 գեղարվեստական, 1952-1966թթ. ընթացքում հրապարակված 14 դրամատիկ ստեղծագործությունների, ինչպես նաև 1968թ. հունվարի 5-ին լույս տեսած մի շարք թերթերի (*Водный транспорт, Известия, Комсомольская правда, Правда, Труд* և այլն) տեքստերից¹:

¹ Աշխարհի մեկ օրվա ստատիկ կտրվածք ստանալու, այն ֆիքսելու և պատկերելու յուրօրինակ ձեռնարկում էր «Աշխարհի մեկ օրը» գրքերի հրատարակումը ԽՍՀՄ-ում: Այն Մ. Գորկու 1934թ. նախաձեռությունն էր: Առաջին այսպիսի գիրքը հրատարակվեց 1937-ին՝ Գորկու սպանությունից մեկ տարի անց: Այն պատկերում էր ողջ աշխարհում 1935թ. սեպտեմբերի 27-ին տեղի ունեցածը՝ եղանակից մինչև պատերազմներ, այդ օրը մարդկանց կողմից ուղարկված հեռագրերից մինչև քաղաքական իրադարձություններ: Գիրքը կրում էր վառ արտահայտված քարոզչական բնույթ: Հմմտ. Ս.Լեմի «Մարդկության մեկ րոպեն» սքանչելի *այդ-կրիֆի* հետ (*Jedna Minuta*, 1984):

Առավելագույն հաճախակիությունը փաստված է «В(во)» մասնիկի համար՝ 42854 անգամ (մոտ $4 \times 10^{-20}\%$): «Если» բառն օգտագործված է 1929 անգամ (մոտ $1.8 \times 10^{-30}\%$): Ընդ որում, գեղարվեստական և դրամատիկ աղբյուրներում այն օգտագործվել է շոշափելիորեն ավելի հաճախ, քան հրապարակախոսական աղբյուրներում և մամուլում: «Хаос» բառն օգտագործված է ընդամենը 18 անգամ: Մինչդեռ «космос» բառը՝ 35 անգամ, իսկ «космический» բառը՝ 114 անգամ: Ազգային-աշխարհագրական երանգ ունեցող առավել հաճախ օգտագործվող բառերի ցանկում առաջինը «Советский» բառն է (1137 անգամ), որին հաջորդում են «американский» (618 անգամ) և «русский» (514 անգամ) բառերը: Այս ցանկում են նաև «украинский» (24 անգամ), «армянский» (19 անգամ), «белорусский» (13 անգամ), «грузинский» (11 անգամ) բառերը: Բառարանում հատկանշականորեն բացակայում է «геноцид» բառը¹: Ընդհանրապես, 10 և ավելի անգամ օգտագործված բառերի ընդհանուր քանակը կազմում է 9044 միավոր, այսինքն՝ բոլոր դիտարկված բառերի 23%-ը: Բայց դրանք կազմում են դիտարկված 1.1 մլն միավոր բառօգտագործման կորպուսի ծավալի 92.4%-ը:

Այսպիսով, [10] բառարանը տալիս է, այսպես ասած՝ «միջին կշռված» ռուսերեն լեզվի հաճախակիության հատույթը, այն էլ միայն XX դարի մոտավորապես 60-ականների կեսերի դրությամբ: Հասկանալի է, որ [10]-ի արդյունքների համարժեքությունն ամբողջապես պայմանավորված է բառօգտագործման կորպուսի «ռեպրեզենտատիվությամբ»: Այսինքն՝ հեղինակների կողմից տեքստերի աղբյուրների կատարված ընտրությամբ, լեզվի նկատմամբ նրանց զգայունությամբ ու տակտով: Այս առումով կորպուսն անխուսափելիորեն սուրբեկտիվ է, ենթակա տվյալ ժամանակին բնորոշ գաղափարախոսական, քարոզչական ներագրմանը և հեղինակների անձնական նախապաշարումներին: Բացի այդ, կորպուսը ստատիկ է՝ կապված օգտագործված աղբյուրների տպագրման ժամանակային բավական նեղ սփռվածության հետ: Հետևաբար, այն ունակ չէ նկարագրել տվյալ բառի օգտագործման հաճախակիության փոփոխությունը քիչ թե շատ տևական ժամանակի ընթացքում: Հաջորդը, կորպուսը դիտարկում էր հիմնականում միայն մեկ բառ (կամ մասնիկ)՝ մթության մեջ թողնելով այս կամ այն բառակապակցության (քերականական արտահայտության) օգտագործման հաճախակիության հարցը: Վերջապես, կորպուսը և նրա մետադատան դժվարահաս էին հետագա ընդլայնման ու վերլուծությունների համար: Դրանք հանրայնացված չէին, իսկ հետազոտությունների արդյունքներ-

¹ Եթե այն լիներ, ապա տեղ կգրադեցներ «геноссе» և «генштаб» բառերի միջև ([10, стр. 135]):

րի վիզուալիզացիայի հնարավորությունները խիստ սահմանափակ էին: Այս ամենը, իհարկե, վերաբերում է ոչ միայն [10]-ին, այլև մինչ 2010թ. դեկտեմբեր բոլոր լեզուներով հրատարակված հաճախակիության բոլոր բառարաններին:

Նշված սահմանափակումները մասնակիորեն հաղթահարվեցին 1985-2000-ականներին, մի շարք լեզուների ազգային կորպուսների ստեղծման ընթացքում: Հաշվիչ տեխնիկայի զարգացումը, համացանցի ստեղծումն ու տարածումը մեծապես օժանդակեցին այս գործընթացին: Այդ ժամանակ ստեղծված լեզվի ազգային կորպուսները նախորդներից ավելի ծավալուն էին՝ 1.0-5.0 մլն բառօգտագործում: Ունեին ավելի տարբերակված ու հատուկ բնույթ, օրինակ՝ ավստրալերեն կամ բրիտանական անգլերենի կորպուսներ, խոսակցական լեզվի կորպուսներ և այլն: Դրանք հիմնվում էին ժամանակի մեջ ավելի սփռված աղբյուրների վրա՝ մինչև մի քանի տասնյակ տարի: Իսկ նոր լավագույն կորպուսների յուրաքանչյուր միավոր արդեն ուներ իրեն բնորոշ թագերի¹ (*tag*) բազմություն և զարգացած մետադատա, ինչը հնարավոր էր դարձնում կորպուսներում այս կամ այն չափանիշով որոնումների, գտումների, ներքին խմբավորումների կազմակերպումը, ինչն, իր հերթին, շոշափելիորեն ընդլայնում է ուսումնասիրությունների տիրույթը և ճկունությունը: Որոշակիորեն դյուրինացավ նաև դրանց հասանելիությունը՝ այնուամենայնիվ մնալով սահմանափակ իրապես լայն լսարանի համար: Ըստ էության, լեզվի ազգային կորպուսները դարձան արդի իմաստով՝ տվյալների մեծ շտեմարաններ (*Big data base*): Այս ժամանակ թվայնացվեց դեռ 60-ականներին ստեղծված անգլերենի Բրաունի համալսարանի լեզվական կորպուսը (*Brown Corpus*): Ստեղծվեցին ավելի մեծ ու ստրուկտուրացված կորպուսներ՝ անգլերենի բանկը (*Bank of English*)՝ Բիրմինգհեմի համալսարանում, բրիտանական անգլերենի կորպուսը (*BNC*) և այլն: Կազմվեցին իսպաներենի, գերմաներենի և ֆրանսերենի ազգային կորպուսները: ԽՍՀՄ-ում այս մասշտաբի առաջին ձեռնարկումը ակադ. Ա.Պ.Երշովի կողմից 1983-85թթ. նախաձեռնված Ռուսերենի մեքենայական ֆոնդի (*Машинный фонд русского языка, МФРЯ*) ստեղծման ծրագիրն էր, որը ԽՍՀՄ փլուզման հետևանքով մնաց անավարտ: Աշխատանք-

¹ Չափազանց կիրառելի անգլերեն *tag* եզրը ուսերեն մասնագիտական գրականությունում առանց որևէ բարդույթի բերվում է ֆոնետիկ թարգմանությամբ՝ «*ter*»: Հայերեն մասնագիտական գրականությունը առաջարկում է «հատկորոշիչ» (10 տառ) կամ «զլխարառ» (7 տառ) բառերը: Այնինչ, իրանա-հայկական «թագ» բառը ([1, հ. 2, էջ 135]) ոչ միայն *tag-ի ֆոնետիկ պատկերն է, այլև tag եզրի ճշգրիտ համարժեքը*: Ի վերջո, չէ՞ որ թագադրումը՝ դա հատկորոշում է, պիտակավորում *par excellence*.

ները վերակավեցին միայն 2004-ից՝ Ռուսերենի ազգային կորպուսի (ՀԿՔԿ) ստեղծման ծրագրի շրջանակներում: Եվ սա զուտ պատահականություն չէ, որ ռուսերենի ազգային կորպուսի կազմման ծրագրի վերակենդանացումը զուգահեյում է ՌԴ-ի կողմից ինքնուրույն աշխարհաքաղաքականություն մշակելու և վարելու, պետական ու ազգային սուվերենության վերիմաստավորման նոր ժամանակաշրջանի հետ [13]: Դե, իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, ապա թե՛ ՀԽՍՀ-ն՝ իր գոյության վերջին տարիներին, թե՛ նորաստեղծ 3-րդ Հանրապետությունը՝ մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, ամբողջությամբ դուրս մնացին 1985-2000-ականներին ծավալված այս գործընթացներից:

4. 2010թ. դեկտեմբերյան մեծ հեղափոխությունը

Ամեն ինչ փոխվեց 2010թ. դեկտեմբերի 16-ին, երբ *Science* պարբերականի ինտերնետ կայքում հայտնվեց «Կուլտուրայի՝ քանակական վերլուծություն՝ հիմնված թվայնացված միլիոնավոր գրքերի վրա» հոդվածի ազդագիրը: Հոդվածն ամբողջությամբ տպագրվեց պարբերականի 2011թ. հունվարյան հատորում [14]: Հեղինակները՝ Հարվարդի համալսարանի էվոլյուցիոն դինամիկայի, մաթեմատիկայի, հոգեբանության և քանակական սոցիոլոգիայի ամբիոններից, Հարվարդի ճարտարագիտական և կիրառական գիտությունների դպրոցից, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի արհեստական բանականության լաբորատորիայից, Բոստոնի բժշկական դպրոցից, *Google Inc.* և *Encyclopaedia Britannica, Inc.* ընկերություններից, ազդարարեցին մի քանի կարևորագույն բան:

Նախ, 2008թ. վերջին *Google Books* թիմի կողմից սքանավորվել է աշխարհի բոլոր գրադարաններում պահվող մոտ 129 մլն անուն գրքից մոտ 15 մլն-ը, տպագրված 1500-2008թթ. ժամանակահատվածում: Այսինքն՝ սքանավորվել է Գուտենբերգի տպագրության գյուտից մինչև 2008թ. աշխարհում երբևէ տպագրված գրքերի մոտ 12%-ը: Այս բազմությունից ընտրվել է 7 լեզվով մոտ 5.1 մլն գիրք՝ աշխարհում երբևէ տպագրված գրքերի մոտ 4.0%, որոնց սքանավորման որակը (*optical character recognition*) թույլ է տվել ամբողջությամբ թվայնացնել դրանք: Արդյունքում՝ կազմվել է դրանցում

¹ Հետևելով Էզրա Փաունդի պատվիրանին՝ մենք *Culture* բառի (և հասկացության) համար օգտագործում ենք «կուլտուրա» եզրը, խուսափելով «մշակույթ» ոչ համարժեք և ապակողմնորոշող բառի օգտագործումից: Հոդվածում չի օգտագործվում նաև «համակարգիչ» ապակողմնորոշող բառը: Համակարգում են միայն կամքը, մարդը կամ գաղափարը, բայց ոչ *կոմպյուտերը*: Փոխարենը կիրառվում է միանգամայն համարժեք «հաշվիչ» եզրը:

առկա բառօգտագործման կորպուսը, մոտ 500 մլրդ բառօգտագործման միավոր գլխապատույտ առաջացնող ծավալով:


Հասկանանք տեղի ունեցածը թվերով: Նախ՝ 4.0%-ը քիչ է, թե՛ շատ: Եթե հարցին մոտենանք առօրեական տրամաբանությամբ, դա առանձնապես տպավորիչ չէ: Դե, դժվար թե մենք գոհ լինեինք, եթե մեզ վերադարձնեին պարտքի միայն 4.0%-ը: Սակայն եթե գործին նայենք իրական բնագիտությանը բնորոշ ավելի խոնարհ տեսանկյունից, ապա դա այնքան էլ քիչ չէ: Իրոք, ներկայիս հպարտ ֆիզիկական պատկերացում ունի Տիեզերքի միայն 4%-ի մասին: Դա, այսպես կոչված՝ սովորական, *բարիոնային* նյութն է: Մնացյալը, այսինքն՝ Տիեզերքի 96%-ը, այսպես կոչված «մութ նյութն» է, որը տակավին անհայտ է այսօրվա գիտությանը¹: Այնպես որ, սա չափազանց տպավորիչ արդյունք է, համադրելի արդի բնագիտության հետ: Առավել ևս, եթե հիշենք, որ մինչև 2010թ. կազմված լեզվի լավագույն կորպուսները հիմնվում էին միայն մոտ մի երկու-երեք հարյուր անուն տպագիր աղբյուրների տեքստերի վրա: Այսինքն՝ երբևէ տպագրված գրքերի ընդամենը մոտ 0.0004%-ի վրա:

Տեղի ունեցածն էլ ավելի տպավորիչ է ուղիղ թվերով: Մինչ 2010թ. կազմված լեզվի լավագույն ազգային կորպուսների ծավալը չէր գերազանցում 5 մլն բառօգտագործումը՝ չհաշված Քայդինգի անգերազանցելի ռեկորդը: Այսինքն՝ մոտ հարյուր հազար անգամ փոքր, քան *Google Books* կորպուսի ծավալը: Այլ խոսքերով, *Google Books* կորպուսի ռեպրեզենտատիվությունը դրանց համեմատ աճել է 100 000 անգամ: Թո՛ղիչք, որն անհնարին է պատկերացնել ավանդական եղանակով զարգացման համար, և որը գերազանցում է վերջին 20 տարիներին հաշվիչ տեխնիկայում արձանագրված առաջընթացը:

Հաջորդը. *Google Books* կորպուսում առկա են 7 լեզուներ: Ինչպես և պետք էր սպասել, ամենածավալունը անգլերենի կորպուսն է՝ մոտ 361 մլրդ բառօգտագործման միավոր (67%): Ընդ որում, կորպուսը տարբերակում է ամերիկյան անգլերենը բրիտանականից: Կորպուսում առկա են նաև իսպաներենն ու ֆրանսերենը՝ մոտ 45 մլրդ միավոր յուրաքանչյուրը, գերմաներենը՝ 37 մլրդ միավոր, ռուսերենը՝ 35 մլրդ, չինարենը՝ 13 մլրդ և եբրայերենը՝ 2 մլրդ (տե՛ս լուսամուտում): Վերջինիս առկայությունն այստեղ չափազանց ուշագրավ է, մանավանդ որ այստեղ բացակայում է ոչ միայն

¹ Ուշագրավ զուգահիշությամբ այդպիսին է նաև համացանցում «մութ ցանցի» (*dark web*) մասնաբաժինը, որը տեսանելի չէ սովորական օգտատիրոջ որոնողական համակարգերի համար:

համեստ հայերենը, այլև, օրինակ, հինդին, բենգալերենը, տամիլերենը, ճապոներենը կամ արաբերենը, որոնցով առկա տպագիր գրականությունը հսկայական է: Այս երևույթի մակերեսային բացատրությունը դժվար չէ գտնել [14]: Հեղինակային թիմի 13 անդամից առնվազն երեքը հրեա է: Իսկ ավելի խորքային բացատրությունների փնտրտուքը մեզ հեռուն կտանի:



Փաստենք միայն հետևյալը, աշխարհում առկա մոտ 2.5 հազար լեզուներից *Google Books* լեզվական կորպուսում տեղ է գտել միայն 7-ը (0.3%): Այս երևույթը, իր խորքային պատճառներից մեկով, համարժեք է նրան, որ, օրինակ, XX դարասկզբին աշխարհում ինքնաթիռներ էր արտադրում ավելի քան երկու տասնյակ երկիր: XX դարի կեսերին ավիացիոն ռեակտիվ շարժիչներ ունակ էր արտադրել արդեն միայն 7-ը: Իսկ այսօր լայնաֆյուզելյաժ ինքնաթիռներ կարող է արտադրել միայն ԱՄՆ-ը: Եվ Եվրամիությունը, այն էլ՝ մասամբ¹:

Google Books կորպուսի մյուս կարևոր ձեռքբերումը *Goole N-grams* հասկացության ներմուծումն է: Բանն այն է, որ ավանդական հաճախակիության բառարանները և լեզվական կորպուսները կազմված էին հիմնականում

¹ *Բրեքսիթից* հետո բրիտանական «*Տոլարոյս*» ավիացիոն շարժիչները ֆորմալ առումով դուրս են եՄ տիրույթից: ՌԴ-ն լքեց այս ցանկը վաղ 90-ականներին:

մեկ միավոր բառից (իմաստային նիշից): Մա հավասարագոր է *Google Books* կորպուսների *1-gram* հասկացությանը: Այն է՝ մեկ առանձին բառ, օրինակ՝ «*if*» (եթե) բառը: Կամ մեկ իմաստային նիշ, օրինակ՝ «1915»: Մակայն *Google Books* կորպուսներում դիտարկվում են նաև *2-gram*, *3-gram*, *4-gram* և *5-gram* հասկացությունները, ինչը համարժեք է 2, 3, 4 և 5 բառից կազմված բառակապակցություններին: Այսպես, *Google Books* ռուսերեն կորպուսում առանձին-առանձին դիտարկվում են նաև «*СССР*»-ը (*1-gram*) և «*Союз Советских Социалистических Республик*» բառակապակցությունը (*4-gram*):

Հաջորդ կարևորագույն ձեռքբերումն այն է, որ *Google Books* կորպուսներն ըստ էության ներկայացնում են ավանդական լեզվական կորպուսների, լավ դասակարգված տվյալների շտեմարանների, որոնումներ, գտումներ ու ենթադասակարգումներ կատարելու և արդյունքներն արտապատկերելու գործիքների մի համալիր միասնություն: Այս ամենը կոչվեց *Goole N-grams* գործիք¹: Մա արդեն ոչ միայն քանակական, այլև որակական առաջխաղացում է: Քանի որ մարդկային կուլտուրայի պատմության մեջ առաջին անգամ հնարավորություն ստեղծվեց դիտարկել առանձին բառի կամ բառակապակցությունների հաճախակիության դինամիկան՝ նախկինում նախադեպը չունեցող ռեպրեզենտատիվությամբ և մոտ 2 դար տևողությամբ ժամանակային տիրույթում: Բացի դա, գործիքը հնարավորություն է տալիս ակնառու պատկերել այս դինամիկան հաճախակիության բաշխման գրաֆիկների տեսքով:

Վերջապես, *Goole N-grams* գործիքը հանրայնացվեց նախկինում նախադեպը չունեցող մակարդակով: Մկսած 2011թ. հունվարից՝ յուրաքանչյուր ոք աշխարհում, ով ունի հաշվիչ և միացում համացանցին, կարող է օգտվել դրանից²: Ավելին, նա կարող է ներբեռնել *Google Books* լեզվական բոլոր 7 կորպուսները կամ նրանցից յուրաքանչյուրում առկա *Goole N-grams* բոլոր հինգ ենթաբազմությունները: Այլ հարց է, թե ինչ ենք անելու, ինչ ենք ունակ անել՝ ներբեռնելով, օրինակ, 361 մլրդ միավոր անգլերեն *Goole 1-grams* բազմությունը: Առավել ևս, որ օգտատերերի համար հասանելի են միայն զուտ բազմությունները, բայց ոչ դրանց թագերը, ներքին կապերը և մետադատան: Այստեղ մենք նորից հանդիպում ենք արդեն ծանոթ իրադրությանը. մեզ (անսպասելիորեն) հասանելի է դառնում տվյալների հսկայական բազմություն՝ լինեն ԱՄՆ Պետդեպի մոտ կես մլն գաղտնի հաղոր-

¹ <https://books.google.com/ngrams>

² <http://storage.googleapis.com/books/ngrams/books/datasetsv2.html>

դագրությունները, օֆշորային գոտիներում միլիոնավոր գործարքների մասին տվյալները, FOIA շրջանակներում գաղտնագրված տասնյակ միլիոնավոր էջ փաստաթղթերը, թե *Goole N-grams* միլիարդավոր բառերի բազմությունը: Ի՞նչ անել դրանց հետ, որքանո՞վ են հնարավոր դրանց իմաստալից և արդյունավետ յուրացումն ու վերլուծությունը՝ ամբողջությամբ պայմանավորված է մեր պատկերացումներով, մղումներով, հնարավորություններով և ունակություններով:

Goole N-grams գործիքի հանրայնացումը նպաստեց բառօգտագործման նկատմամբ հետաքրքրության աննախադեպ աճին: Անցած 6 տարիների ընթացքում հրատարակվեցին հարյուրավոր ուսումնասիրություններ՝ նվիրված լեզվի էվոլյուցիային և բառօգտագործման առանձնահատկություններին և հիմնված քանակական գնահատականների վրա [14]: Հեղինակները խոսում են նույնիսկ գիտության մի նոր ճյուղի՝ կուլտուրոմիկայի (*Culturomics*) մասին: [14]-ի հեղինակներն այն բնութագրում են իբրև հաշվիչ բառագիտության (*computational lexicology*) մի տարատեսակ, որը թվայնացված տեքստերի քանակական վերլուծության հիման վրա ուսումնասիրում է մարդու վարքը, մարդկային կուլտուրայի զարգացման միտումներն ու օրինաչափությունները: Ստորև ներկայացնենք դրա օրինակները՝ վերցված թե՛ [14]-ից, թե՛ պատրաստված հատուկ սույն հոդվածի համար:

Այստեղ անդրադառնանք կուլտուրոմիկայի ծիրում 2011թ. հրապարակված ևս մի աշխատության: Այն վերնագրված է «*Կուլտուրոմիկա - 2.0. մարդկանց մեծ խմբերի վարքի կանխատեսում՝ հիմնված գլոբալ լուրերի տոնայնության և տարածական տեղորոշման վրա*» [15]: Եվ ի մի է բերում ԱՄՆ մի շարք համալսարաններում ու գիտական կենտրոններում զլոբալ լուրերի հոսքի տարիներ ստող կոնտենտ-վերլուծությունների արդյունքները: Որպես աղբյուր [15]-ում վերցված են ԱՄՆ *Open Source Center*¹ և բրիտանական *Summary of World Broadcasts (SWB)*² կազմակերպությունների կողմից կանոնավոր հավաքված գլոբալ օրական լուրերի շտեմարանները, ինչպես նաև սոցցանցերից հավաքագրված տեղեկատվությունը: Կոնտենտ-վերլուծության համար [15]-ում կիրառվել է տեքստերի «լեռնահանման» (*text mi-*

¹Նախկինում՝ *Foreign Broadcast Monitoring Service*. հիմնվել է 1941թ. փետրվարին՝ ԱՄՆ Հեռահաղորդակցության դաշնային խորհրդի կազմում: 1947-ից այն վերանվանվում է *Foreign Broadcast Information Service* ու փոխանցվում ԱՄՆ ԿԶԿ-ին՝ որպես հետախուզական բաց աղբյուրների հավաքագրման և վերլուծության կենտրոն:


²Հիմնվել է 1939թ. ամռանը՝ Բրիտանական հեռարձակման կորպորացիայի (*BBC*) կազմում: 1947-ից կազմում է զլոբալ լուրերի օրական հաշվետվությունները՝ *Summary of World Broadcasts*.

ning) երկու գործիք. «զգացմունքների լեռնահանում» (*sentiment mining*, 2004)¹ և տեքստերի տեղավայրային կոդավորում (*full-text geocoding*, 2007)²:

Ստացված արդյունքները, ի շարք ալոց, հնարավորություն տվեցին նկարագրել «Արաբական գարնան» իրադարձությունների դինամիկան, դրանց ուժգնությունը Թունիսում և Եգիպտոսում (ինչը հանգեցրեց այստեղ ռեժիմների փոփոխության) և թուլությունը Մաուրյան Արաբիայում (իշխանափոխության ցածր հավանականություն), ինչպես նաև տեղորոշել առանձին անհատների գտնվելու վայրը: Մասնավորապես, 1979թ. հունվար - 2011թ. ապրիլ ժամանակահատվածում *SWB* բազմության հիման վրա կառուցված օրական լուրերի տոնայնա-տեղորոշման (*geocoded tone*) գլոբալ գրաֆը (տե՛ս Նկ. 2) թույլ տվեց տեղորոշել Օսամա բին Լադենի գտնվելու հավանական վայրը՝ 200 կմ շառավղով տարածք Հյուսիսային Պակիստանում, որը ներառում էր Աբոթաբադ քաղաքը: 2011թ. մայիսին այստեղ հայտնաբերվեց ու ոչնչացվեց Օ. բին Լադենը:

Նկար 2

«Bin Laden» բառակապակցության տոնայնա-տեղորոշման (geocoded tone) գլոբալ գրաֆը՝ կառուցված 1979թ. հունվար - 2011թ. ապրիլ ժամանակահատվածի նորությունների բազմության համար [15]



¹ Հիմնվել է տեքստերում զգացմունք արտահայտող բառերի հաճախակիության վերլուծության վրա:

² Հիմնվել է տեքստերում տեղանունների հաճախակիության վերլուծության վրա:

5. Մենք և դեկտեմբերյան մեծ հեղափոխությունը

Ինչպիսի՞ն է վիճակը Հայաստանում «բառերի տիեզերքի» ուսումնասիրության տեսանկյունից: Բերենք որոշ թվեր: Համաձայն ՀՀ Ազգային գրադարանի տվյալների [16], Հակոբ Մեղապարտից՝ 1512 թվականից մինչև մեր օրերը ողջ աշխարհում տպագրվել է մոտ 126 հազ. անուն հայերեն գիրք: Ըստ նույն աղբյուրի, «առայժմ թվայնացվել է դրա 7%-ը՝ 6700 անուն գիրք»: Առաջին հայացքից սա կարծես թե վատ չէ: Տոկոսային առումով նույնիսկ ավելին է, քան *Goole N-grams*-ի 4% ցուցանիշը: Բացի այդ, համաձայն նույն աղբյուրի, «սկսած «Ազդարարի» տպագրությունից, հայ մամուլն աշխարհում պարունակում է 5784 անուն օրաթերթ, ամսագիր և պարբերական: 2016թ. դրությամբ թվայնացվել է մոտ 2 մլն էջ հայկական մամուլ» [16]: Թե դեռ որքան է մնացել թվայնացնել՝ աղբյուրը չի նշում: Բայց դա չէ կարևորը:

Կարևորն այն է, որ մեզանում «թվայնացում» եզրն օգտագործվում է ոչ համարժեք կերպով: Դրա տակ հաճախ նկատի ունեն պարզապես տեքստերի հասարակ *սքանավորում*¹: Սքանավորման արդյունքում տեքստը, այո՛, կարող է հասանելի դառնալ համացանցում, ինչն ինքնին շատ լավ է: Բայց այն հասանելի է ոչ որպես «թվայնացված», առավել ևս՝ դասակարգված բազմություն, այլ որպես պարզունակ նկար: Հետևաբար, այն պիտանի չէ լեզվական, լեզվահոգեբանական, բառօգտագործման հաճախակիության, լեզվական էվոլյուցիայի և նմանատիպ այլ հետազոտությունների կամ լեզվական ազգային կորպուսի ստեղծման համար: Իրական թվայնացումը ենթադրում է տեքստի յուրաքանչյուր միավորի (տառ, մասնիկ, կետադրական նշան, բառ, բառակապակցություն) առանձին-առանձին ճանաչում և կոդավորում, թվայնացված տվյալների թագերի ստեղծում (բառի քերականական, աղբյուրաբանական, ժամանակագրական, տոնայնության, տեղորոշման և այլ հատկանիշներ), ներքին կապերի հաստատում, թվայնացված տվյալների դասակարգում և այլն: Սա է տեքստերի թվայնացման էությունը և դրա ամենաարժեքավոր² մասը: Հայկական համացանցի անգամ թռուցիկ ուսումնասիրությունը վկայում է, որ [16] աղբյուրն իրականում նկատի ունի գրքերի և մամուլի սքանավորում, այլ ոչ թե թվայնացում: Այսօր թվայնացված է հայերեն գրքերի և մամուլի միայն չնչին տոկոսը:

¹ Եզրերի այսչափ անբռնազբոս, հետևանքներով՝ կործանարար օգտագործումը, ցավոք, եզակի երևույթ չէ հայերենում: Հիշենք միայն «բարձր տեխնոլոգիաներ» եզրը, որը մեզանում նույնացվում է հաշվիչից օգտվելու կամ ինտերնետին միացված լինելու, կամ *լեզո* կոնստրուկտորից այսպես ասած «ռոբոտներ» հավաքելու հետ:

² Չուր չէ, որ անգլերեն *classify* բառը նշանակում է ն՝ դասակարգել, և՛ գաղտնագրել: Իսկ գաղտնագրում են սովորաբար ամենաարժեքավոր, հիմնարար կարևորության բաները:

Այնուամենայնիվ, կան և լավատեսության նշույլներ: Այսպես, 2010թ. դեկտեմբերի 19-ին՝ *Goole N-grams* գործիքի թողարկմանը համընթաց, հայկական համացանցում նորամուտը նշեց «Հայկական գիտական համագործակցություն» կայքը¹, որի հիմնադիրները երեք երիտասարդներ էին (Ա.Մարտիրոսյան, Խ.Հարությունյան, Ս.Հովհաննիսյան): Այստեղ առկա են իրոք թվայնացված գրքեր և բառարաններ: Մյուս կարևոր ձեռքբերումը 2005-ից գործող «ՆԱԻԸԻ» հայերեն էլեկտրոնային բառարանների առցանց գրադարանն է (հիմնադիր՝ Ս.Ուրիշեան, ԱՄՆ)², ուր առկա են (մասնակիորեն) թվայնացված արևմտահայերեն բառարաններ: Կարևոր է նաև այն, որ ՀՀ Ազգային գրադարանը³ համագործակցում է այս և այլ նմանատիպ նախաձեռնությունների հետ: Վերջապես, հուսադրող է նաև հայալեզու *WEB*-ի համեմատաբար բարձր հազեցածությունը, գոնե՝ քանակական առումով: Դա հասկապես վերաբերում է հայալեզու *Wikipedia*-ին⁴:

Սակայն այս ամենը բավարար չի կարելի համարել: Այսօր մենք ականատեսն ենք աշխարհում ընթացող երկու կարևորագույն, որոշ առումներով՝ հակադիր միտումների: Մի կողմից՝ գիտատեխնոլոգիական սրընթաց զարգացում, տվյալների մեծ շտեմարանների ստեղծում (տե՛ս հաջորդ բաժնում), հեռահաղորդակցության միջոցների զարգացում և դրանց հանրայնացում: Մյուս կողմից՝ հիմնարար նշանակության տեխնոլոգիաների, գիտելիքների ու հմտությունների կենտրոնացում քիչ թվով պետությունների ու ֆինանսատեխնոլոգիական խմբերի ձեռքում, դրանց օտարում մարդկության և երկրների մեծամասնությունից: Ավելին, գլոբալ առումով անկում են ապրում հանրային կրթական համակարգը, գիտական մտածելակերպը, քննադատական մտածողությունը: Հակադիր այս միտումներն օրեցօր դառնում են ավելի հուժկու՝ վկայելով նոր մարտահրավերների գալուստը:

* * *

Այսօր, երբ այլևս գոյություն չունի աշխարհի երկբևեռ համակարգը, ուսանելի է կարդալ Ու.Օրթմանի 1978-ին արած դառը գանգատներն առ այն, որ Քայդինգի հսկայական արխիվը պահպանվել էր միայն ԳԴՀ-ում [16]: Իսկ պահպանվել է և արդյոք ՀԽՍՀ օրոք ստեղծված Ա.Մ. Մարջանյանի կամ Բ.Կ.

¹ Armenian Scientific Cooperation. <http://armscoop.com>

² <http://www.nayiri.com/>

³ <http://www.nla.am/arm/?q=hy>

⁴ Այս հարցին կանոնադառնանք «Հայալեզու WEB-ը որպես կորպուս. լեզվական ու քանակային» հոդվածում, «Նորվանք» ԳԿՀ «Գլոբուս» ամսագրի առաջիկա համարում:

Ղազարյանի բառարանների արխիվը, թվայնացվել է արդոք [10] բառարանը: Կազմվել է արդոք հայոց լեզվի հաճախակիության կորպուսը, համեմատվել է արդոք այն [10]-ի հետ: Չէ՞ որ այսպիսի համեմատական վերլուծությունը չափազանց ուսանելի կլիներ: Եվ ընդհանրապես, գիտե՞նք արդոք, թե ինչ երկրում ենք ապրում: Ի՞նչ սոցիալ-հոգեբանական, սոցիալ-տնտեսական պրոցեսներ են ընթանում մեզանում այսօր: Ի՞նչ ապագա են ձևավորելու դրանք վաղը: Արդոք՞ մենք պատկերացում ունենք, թե ինչ պրոցեսներ են ընթանում արդի հայերենում, հայերեն լեզվամտածողությունում, հայերեն եզրերի ստեղծման ու կիրառման գործում:

Չէ՞ որ այսպիսի իմացությունը՝ հիմնված քանակական գնահատականների վրա, վեր կհաներ արդի հայերենի դինամիկայի կարևոր առանձնահատկությունները և օրինաչափությունները: Եվ գուցե հնարավոր լիներ վաղօրոք, թվերով ու քանակական գնահատականներով ցույց տալ Հայաստանում «հասարակական պայմանագրի» խախտման հասունացումը 2012-15թթ.: Կամ, վերլուծելով աղբբեջանական և թուրքական լուրերի տեքստերը, իրականացնելով դրանց «զգացմունքային լեռնահանումն» ու տոնային-ստեղծողությունը, գնահատել հակամարտության գոտում ակտիվ գործողությունների վերսկսման վտանգը 2016-ին: Կամ քանակական գնահատականների հիման վրա բացահայտել, թե ինչու, ինչպես և ինչ տրամաբանությամբ XX դարում Ստանիսլավ Լեմի իմաստուն պատմաբան (և կոմունիստ) Տեր հորը, քաջարի աստղանավիգատոր Տեր-Ակոնյանին, ականավոր կենսաբան Չաքաջանյանին¹, Ստրուգացկի եղբայրների անվախ տիեզերագնաց-փորձարկու Աշոտ Պետրոսյանին, գծային երջանկության բաժնի ավագ գիտաշխատող Էդիկ Ամպերյանին² XXI դարում փոխարինելու եկավ Վիկտոր Պելինի Էդիկ Դեբիրայանը, նույն ինքը՝ Սաշա Բլոն³: Ու միգուցե նոր լույս սփռվեր այն ահասարսուռ փաստի վրա, որ երևակայական «Դատապարտված քաղաքում» շարքային Թևոսյանին գիշերով քնի մեջ մորթած Պերմյակին⁴ մեր, Ա.Ազիմովի բառերով՝ «ընթացիկ» իրականությունում⁵ փոխարինելու եկավ տխրահռչակ Պերմյակովը:

¹ Ստանիսլավ Լեմ, «*Oblok Magellana*», 1954թ., «Магеланово облоко», 1960թ.: Ս.Լեմի և հայրության «միստիկ» կապի մասին տե՛ս Գենետիկա *E.Coli* и *Эрунтика* Станислава Лема, «Мост», 24 Апрель, 2014:

² Ստրուգացկի եղբայրներ, «Страна багровых туч», 1959թ., «Понедельник начинается в субботу», 1965թ.:

³ Վիկտոր Պելին, *Generation «П»*, 1999թ.:

⁴ Ստրուգացկի եղբայրներ, «*Град обреченный*», 1972թ., հրատարակված է 1988-89թթ.:

⁵ Ա.Ազիմով, «*Հավերժության վերջը*» (*End of Eternity*, 1955թ.):

Արդյո՞ք մենք ունակ ենք բանն ու բառը դարձնել գործ: Իսկ գործը՝ բառ ու եզր:

(Շարունակելի)
Նոյեմբեր-դեկտեմբեր, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Աճառյան Հր.*, Հայերեն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1971-79թթ.: Մեր ապագան՝ ՆԻԸ աչքերով, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ դար», թիվ 2 (24), 2009թ., էջ 26-63, http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=5869 :
2. *Lowenhaupt, Henry S.*, Mission to Birch Woods. *Studies in Intelligence*. Vol.12.4-1-12, Fall 1968. SECRET, NOFORN. Declassified and Released under FOIA, Sept 1994.
3. *Kaeding, F.W.*, Häufigkeitwörterbuch der deutschen Sprache. Festgestellt durch einen Arbeitsausschuß der deutschen Stenographie-Systeme. Vol 1, Wort- und Silbenzählungen. Vol 2, Buchstabenzählungen. Selbstverlag des Herausgebers, Steglitz bei Berlin: 1897, 1898.
4. *Бойков, В.В., Жукова, Н.А., Романова, Л.А.*, Распределение длины слов в русских, английских и немецких текстах, Мир лингвистики и коммуникации, т. 1, No 1, 2005.
5. *Խաչատրյան Վ.Ս., Մարջանյան Ա.Հ.*, Արդի հոդվածներգետիկա, Երևան, 1987թ.
6. *Josselson, H. H.*, The Russian Word Count and Frequency Analysis of Gramatical Categories of Standard Literary Russian. Detroit, Wane Univ. Press, 1953.
7. *Kahn, David*, Number One From Moscow. *Studies in Intelligence*. Vol 5.4-A15-A28. Fall 1961. SECRET, NOFORN. Declassified and Released under FOIA Sept, 1993.
8. *Штейнфельдт Э.А.*, Частотный словарь современного русского литературного языка, Таллин, 1963.
9. Частотный словарь русского ЯЗЫКА, под ред. Л.Н. Засориной, М., “Русский язык”, 1977.
10. *Ղազարյան Բ.Կ.*, Հայոց լեզվի հաճախականության թեմատիկ բառարանի կազմումը, Պատմաբանասիրական հանդես, 1968թ, № 4, էջ 225-232:
11. *Ղազարյան Բ.Կ.*, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1982:
12. *Մարջանյան Ա.Հ.*, Էներգետիկա և աշխարհաքաղաքականություն, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ դար», թիվ 1 (1), 2003, <http://cyberleninka.ru/article/n/ehnergetik%D0%B0-i-geopolitik%D0%B0-66> :
13. *Michel, J-B., et all*, Quantitative Analysis of Culture Using Millions of Digitized Books. *Science*, Vol, 331, 14 Jan 2011, pp. 176-182.
14. *Leetaru, K.H.*, Culturomics 2.0: Forecasting Large-Scale Human Behavior Using Global News Media Tone In Time And Space”. *First Monday*, No 16 (9), 5 September 2011.
15. Ազգային գրադարանի տնօրենն ամփոփեց ավարտվող տարվա արդյունքները, *Ազատություն ՌԿ*, 20/12/2016, <http://www.azatutyun.am/a/28186942.html>

16. *Ortmann, W.D.*, Hochfrequente deutsche Wortformen IV. 7695/9566 Wortformen der KAEDING-Zählung, rechner-sortiert nach Textsorten-Distribution. Herausgegeben vom Goethe-Institut, Arbeitsstelle für wissenschaftliche Didaktik, Projekt Phonothek. Goethe-Institut, München, 1978.

ԲԱՌԵՐԻ ՏԻԵԶԵՐՔ.

ՀԱՃԱԽԱԿԻՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ GOOGLE N-GRAMS ԳՈՐԾԻՔԸ

Արա Հ. Մարջանյան

Ամփոփագիր

Հոդվածում դիտարկվել է հաճախակիության բառարանների, ազգային լեզվական կորպուսների և մեծ տվյալների շտեմարանների ստեղծման պատմությունը: Նկարագրված են Google N-grams գործիքի տրամադրած հեղափոխական հնարավորությունները: Բերվել են որոշ բառերի և բառակապակցությունների հաճախական օգտագործման վերլուծության օրինակներ երկարատև ժամանակի համար: Ձևակերպվել են Հայաստանի վերլուծաբանական հանրության առջև կանգնած մարտահրավերները և խնդիրները հայերենի բառօգտագործման կորպուսների և դրանց վերլուծության գործիքների ստեղծման ուղղությամբ: Ընդգծվել է հայերենի ազգային հաճախական կորպուսի ստեղծման խնդրի և հայալեզու WEB-ի դերի կարևորությունը դրանում:

.

ВСЕЛЕННАЯ СЛОВ:

GOOGLE N-GRAMS И ЧАСТОТА ИСПОЛЬЗОВАНИЯ СЛОВ

Արա Մարջանյան

Резюме

В статье рассмотрена история создания частотных словарей, национальных языковых корпусов и больших баз данных. Описаны революционные возможности, предоставляемые инструментом *Google N-grams* и др. Приведены примеры анализа частотного употребления некоторых слов и словосочетаний за длительный период. Сформулированы стоящие перед аналитическим сообществом Армении вызовы и задачи по созданию корпусов словоупотребления армянского языка и инструментов их анализа. Подчеркнута важность задачи по созданию национального частотного корпуса армянского языка и роли армяноязычного WEB-а в этом.

**UNIVERSE OF WORDS:
FREQUENTLY USED WORDS DICTIONARIES AND GOOGLE N-GRAMS**

Ara H. Marjanyan

Resume

The article reviews the creation history of frequently used words dictionaries, national language text corpora and Big Data. The revolutionary opportunities offered by Google N-grams are described. Long-term period analysis of some frequently used words and phrases is presented. The challenges and problems that Armenian analysts community faces are defined in terms of Armenian language text corpora and tools for the analysis thereof. The importance of creation of Armenian national frequently used text corpus and role of Armenian-language web in it are highlighted.

ԳՆԱՃԻ, ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈՒՍԱՐԺԵՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱՄ

Աշոտ Թավադյան

Բանալի բառեր՝ գնաճ, ազգային արժույթի փոխարժեք, տնտեսական աճ, ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, ԵԱՏՄ:

Գնաճի և ազգային արժույթի փոխարժեքի կարգավորման գործընթացն ունի էական ազդեցություն ՀՆԱ-ի, արտահանման աճի և ՀՀ պետական բյուջեի կատարման վրա: ՀՀ նախագահի՝ Սահմանադրության փոփոխությունների կենսագործմանը նվիրված 12.02.2016թ. ծրագրային ելույթում ընդգծվեց, որ «խիստ կարևորվում է հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների խելամիտ և էլ ավելի կոորդինացված իրականացումը»²: Վեցերորդ գումարման Ազգային ժողովին ՀՀ նախագահի 18.05.2017թ. ուղերձում ևս նշվեց, որ համադրված դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները պետք է ստեղծեն այնպիսի դինամիկ ու կայուն մակրոտնտեսական միջավայր, որը հնարավորություն կտա հասնելու ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջին և երկարաժամկետ կայուն տնտեսական աճի³: Հոդվածում ներկայացված են եզրակացություններ և առաջարկություններ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացման վերաբերյալ:

Տնտեսական աճի և բյուջեի կատարման համար չափազանց կարևոր են համակարգային մոտեցումը, տնտեսական ցուցանիշների փոխկապվա-

¹ Հոդվածը գրվել է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների և ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցության համատեքստում:

² Տ.գ.դ., պրոֆեսոր:

³ Նախագահ Սերժ Սարգսյանը Սահմանադրության փոփոխությունների կենսագործման վերաբերյալ, 12.02.2016, <http://www.president.am/hy/press-release/item/2016/02/12/President-Serzh-Sargsyan-meeting-Constitution/>

⁴ Նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը վեցերորդ գումարման Ազգային ժողովին, 18.05.2017, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2017/05/18/President-Serzh-Sargsyan-statement-on-the-occasion-of-the-sixth-convocation-of-the-RA-National-Assembly/>

ծությունների հստակ գնահատումը: Սակայն առկա են օրինակներ, երբ այդ փոխկապվածությունները հաշվի չեն առնվում: Գների կայունության կարևորագույն նպատակի կատարման ժամանակ բավարար ուշադրություն չի դարձվում հակադարձ կապի վրա, թե ինչպես է գների կայունությունը կոնկրետ անդրադառնում տնտեսական աճի, արտահանման մեծացման և բյուջեի կատարման վրա:

1967թ. Գերմանիայում ընդունվեց օրենք տնտեսության կայունության և աճին նպաստելու մասին, որտեղ սուբյեկտիվ մոտեցումից խուսափելու համար ձևակերպված են տնտեսական քաղաքականության սկզբունքային նպատակները, այսպես կոչված «մոզական քառակուսին» [1]: Դրանք այն առանցքային նպատակներն են, որոնք պահանջվում է առաջին հերթին հաշվի առնել բյուջեի, պետական ծրագրերի նախապատրաստման ժամանակ: Այդ չորս նպատակները հետևյալն են՝ կայուն տնտեսական աճ, հավասարակշռված արտաքին առևտուր, զբաղվածության բարձր մակարդակ, գների կայունություն: Այդ նպատակները դիտվում են որպես միասնական համակարգ: Մի նպատակի առանձնացման փորձը, առանց հաշվի առնելու նրա փոխկապվածությունն այլ առանցքային նպատակների հետ, չի տալիս դրական արդյունք, հատկապես երկարաժամկետ կտրվածքով:

Անվիճելի է, որ գների կայունությունը չափազանց կարևոր նպատակ է: Սակայն ինչպես դա ապահովել՝ հաշվի չառնելով տնտեսական համակարգի փոխկախվածությունները, թե՞ գնաճն օպտիմալ ձևով համաձայնեցնելով առանցքային տնտեսական ցուցանիշների հետ: Չափազանց կարևոր է գնահատել գնաճի փոխազդեցությունը տնտեսության այլ առանցքային ցուցանիշների հետ:

Չպետք է ամեն գնով ձգտել պահել գնաճը նվազագույն սահմաններում՝ հաշվի չառնելով նրա փոխկապվածությունը փոխարժեքի, իրական վերաֆինանսավորման տոկոսադրույթի, փողայնացման մակարդակի, ՀՆԱ-ի, առևտրային և վճարային հաշվեկշռի հետ: Արդյունքում՝ փաստացի զոհաբերվում են այդ փոխկապվածությունները, և գների սեզոնային ու կառուցվածքային աճի հավանականությունը բարձրանում է: Հենց այստեղ էլ ստեղծվում է ակնհայտ ոչ բարենպաստ պատճառահետևանքային շղթան: Ներմուծվող ապրանքների գների աճին հակազդելու համար առաջին հայացքից կարծես թե աննպատակահարմար է ազգային արժույթի փոխարժեքի նույնիսկ սահուն նվազումը: Սակայն դա իրականում չի նպաստում արտադրության աճին ուղղված ներքին պահանջարկի բավարարմանը, արտահանմանը և առևտրային հաշվեկշռի իրավիճակի լավարկմանը:

Ի վերջո, գնաճի կախվածությունը ներմուծվող ապրանքների գների ազդակից մնում է առանցքային գործոն, և գնաճի անկանխատեսելիության աստիճանը չի նվազում:

Ակնհայտ է ընտրությունը երկու տարբերակների միջև՝ կամ առաջին հայացքից նվազագույն գների աճ՝ ուղղակի կախված ներմուծումից, որն ունի սեզոնային և կառուցվածքային տատանումների մեծ հավանականություն, ու չփոխկապակցված այլ առանցքային ցուցանիշների հետ, կամ նվազագույն տատանումներով որոշակի ընդունելի սահմանը չզերագանցող գնաճ՝ փոխկապակցված այլ առանցքային ցուցանիշների հետ:

Դրամավարկային քաղաքականությունն ուղղակի անհրաժեշտ է իրականացնել համակարգված: Ցածր իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը կնպաստի դրամավարկային քաղաքականության ճշգրտմանը, այդ թվում փողայնացման մակարդակի փուլային մեծացմանը՝ մոտ տրանսֆորմացվող երկրների օպտիմալ մակարդակին: Հիմնախնդիրն այն չէ, որ բոլոր միջոցներով ապահովվի հնարավորինս նվազագույն գնաճ, այլ այն, որ ունենանք իրականությանը համապատասխանող գնաճ, որն առավելագույնս նպաստավոր է տնտեսության, արտահանման աճին և, դրա հետ մեկտեղ, դրական է անդրադառնում փողայնացման մակարդակի վրա՝ մոտեցնելով այն իր զգայունության շեմին [2]: Դա թույլ կտա որոշակի փուլերով անցում կատարել ավելի ցածր և, ընդգծեմ, կայուն գնաճի: Միայն այն ռազմավարությունն է նպաստավոր տնտեսության դրական փոփոխությունների համար, որը հաշվի է առնում իրական փոխկապակցվածությունները:

Հայաստանում վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերությունը (իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը) էապես բարձր է, քան ԵՄ-ում, ԵԱՀԿ-ում¹ և տարածաշրջանի այլ երկրներում: Վարվում է թանկ փողերի քաղաքականություն, և արդյունքում՝ ներդրումների, բիզնեսի համար Հայաստանում իրական տոկոսադրույքները նպաստավոր չեն: Փաստացի, այդ առումով Հայաստանը զիջում է իր բոլոր հիմնական գործընկերներին:

Այս պայմաններում ունենք փողայնացման ցածր մակարդակ (մոտ 35%)², իսկ ցածր փողայնացման և բարձր իրական տոկոսադրույքների պարագայում առաջանում է փողի սով, դոլարիզացիայի մակարդակի կրճատման հնարավորություններն էապես նվազում են: Նշենք, որ Ռուսաստան

¹ Հայաստանում և Բելառուսում իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը գրեթե հավասար է:

² <http://data.worldbank.org/indicator/FM.LBL.MQMY.GD.ZS>

նում փողայնացման մակարդակը 50%-ի, իսկ Եվրամիության առաջատար երկրներում՝ 100%-ի շրջանակներում է, Չինաստանում և Ասիայի արագ զարգացող երկրներում այն էապես գերազանցում է 100%-ը: Մակայն նշենք, որ փողայնացման մակարդակի աճն ինքնանպատակ չէ, և այս դեպքում նույնպես պետք է հաշվի առնել նրա փոխկապվածությունները. դա կարող է լինել տնտեսական աճի հետևանք, ինչպես նաև արտահանման համար նպաստավոր կայուն գնաճի, ազգային արժույթի փոխարժեքի և իրական բանկային տոկոսադրույքների դեպքում:

Հիմնախնդիրը հետևյալն է՝ ՀՀ տնտեսության զարգացմանը նպաստում է հնարավորինս նվազագույն գնաճը, թե՛ որոշակի ցուցանիշը չգերազանցող ոչ բարձր գնաճը: Պատասխանն ակնհայտ է՝ ոչ ավելի, քան 5.5%, ինչը և պահանջում է «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքի չորրորդ հոդվածը. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին 2017 թվականի ընթացքում օրենքով վերապահված իրավասությունների սահմաններում դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումներ ընդունելիս առաջնորդվել 12-ամսյա գնաճի 4+/-1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում նպատակային ցուցանիշով» [3]: Ի դեպ, օրենքում փաստացի նվազագույն թույլատրելի ցուցանիշ է նշված 2.5% գնաճը: Նույն տեսքով 4-րդ հոդվածը ներկայացված է 2016թ. [4], սակայն 12-ամսյա կտրվածքով գնաճը կազմել է -1.1%: Նշենք, որ Հայաստանում արդեն մեկ տարուց ավելի արձանագրվել է գնանկում¹:

Հնարավորինս նվազագույն գնաճի քաղաքականությունն անվերապահորեն ընդունելի է միայն այն դեպքում, երբ առևտրային հաշվեկշիռը հիմնականում հավասարակշռված է, իսկ փողայնացման մակարդակն ակնհայտ ցածր չէ: Դա է ցույց տալիս նաև զարգացած երկրների փորձը: Հետաքրքիր է, որ Գերմանիայում, որտեղ գնաճն այժմ 1%-ի շրջանակներում է, 1970-1974թթ. տնտեսական աճի ժամանակ եղել է մոտ 6%, իսկ 1973թ.՝ նույնիսկ 7.9%²: Այդ տարի տնտեսական աճը կազմել է մոտ 5%:

Ճիշտ չէ, որ բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքը միշտ զսպում է գնաճը, իսկ ցածրը՝ հակառակը: Բարձր տոկոսադրույքի ժամանակ հաճախ աշխատում է հետևյալ շղթան՝ բարձր իրական վերաֆինանսավորման տոկոսադրույք – ավելի բարձր բանկային տոկոսադրույքներ – սուղ սեփական միջոցների պարագայում ինքնարժեքի աճ – ծախսերի

¹ <http://www.tradingeconomics.com/armenia/inflation-cpi>

² Historic inflation Germany CPI inflation,

<http://www.inflation.eu/inflation-rates/germany/historic-inflation/cpi-inflation-germany.aspx>

գնաճ: Հետևաբար, այդ գործիքը կարելի է կիրառել միայն ճգնաժամային իրավիճակում, կարճաժամկետ հատվածում:

Հատկապես տնտեսական աճի տեմպի մեծացման ծայրահեղ անհրաժեշտության դեպքում է նպատակահարմար իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ինչպես նաև պահուստավորման նորմը: Հաշվի առնելով գնաճը՝ պետք է գնահատել, թե ինչպես է վերաֆինանսավորման տոկոսադրույքն անդրադառնում ՀՆԱ-ի, նրա կառուցվածքի, առևտրային հաշվեկշռի վրա: Գրեթե անհնար է արդիականացնել արտադրությունը, երբ տնտեսվարող սուբյեկտների եկամուտներն էապես իջնում են, գնաճի և փոխարժեքի տատանումները բարձր են, դրա հետ մեկտեղ՝ բանկային տոկոսադրույքները փաստացի վարկերը դարձնում են անհասանելի: Վերաֆինանսավորման տոկոսադրույքն ունի իր միջակայքը, որի վերին սահմանի համար առանցքային նշանակություն ունի շահութաբերությունը՝ հանած բանկային մարժան այն ոլորտներում, որոնք ապահովում են գիտատեխնիկական առաջընթացը: Այդ սահմանի գերազանցումը, հատկապես ցածր փողայնացման մակարդակի պայմաններում, արդարացի է միայն կրիտիկական վիճակներում, ընդ որում՝ նվազագույն կարճաժամկետում, քանզի հակառակ դեպքում կարելի է մեծ վնաս հասցնել երկրի գիտատեխնիկական ներուժին:

Ընդհանուր առմամբ, տրանսֆորմացվող տնտեսություն ունեցող երկրի համար օպտիմալ դրամավարկային քաղաքականությունը, որը փոխկապակցված է հարկաբյուջետային քաղաքականության հետ, կարելի է ներկայացնել հետևյալ ձևով. անցում վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերության ոչ ավելի, քան 2-3 տոկոսային կետի, որն առաջին հերթին հնարավորինս համապատասխանում է ՀՆԱ-ի և արտահանման, հատկապես պատրաստի արտադրանքի արտահանման աճին և համապատասխանում է ազգային արժույթի փոխարժեքի դինամիկայի փոփոխությանը, գնաճին ու, որպես հետևանք, նպաստավոր է փողայնացման մակարդակի մեծացմանը: Այս պայմաններում անհրաժեշտ է ապահովել գնաճի մակարդակը ոչ ավելի, քան 5,5%-ը: Ինչն, ի դեպ, պետական բյուջեի մասին օրենքի պահանջն է: Եթե վերը նշված պահանջների դեպքում չի ապահովվում գնաճը ոչ ավելի, քան 5,5%, ապա առանցքային տնտեսական նպատակների օպտիմալ արժեքներին հասնելու տեմպը նպատակահարմար է ճշգրտել: Ընդգծենք՝ այս կարևորագույն առանցքային հիմնախնդիրը պահանջում է համալիր լուծում:

Հայաստանի զարգացման համար անհրաժեշտ է վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերության էական կրճատում, տարբերությունը՝ ոչ ավելի, քան 2-3 տոկոսային կետ: Ջարգացած կամ զարգացման էական աճի տեմպ ունեցող ոչ մի երկիր չունի նշված ցուցանիշների ավելի մեծ տարբերություն: Իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքն այդ երկրներում չի գերազանցում 2-3%-ը¹: Բարձր իրական տոկոսադրույքը շահույթ հետապնդող կազմակերպության վարքագիծ է, իսկ երկիրը չի ունենում զարգացման բարձր տեմպ, եթե վճարում է ավելի մեծ գին նվազագույն գնաճի համար: Ինչպես ցույց է տալիս փորձը, այլապես ստիպված են լինում ունենալ ներդրումների, արտահանման, միջազգային պահուստների տեսանկյունից զարգացման համար ոչ նպաստավոր իրավիճակ:

Փոխարժեքի սահուն նվազումը նպաստավոր է ՀՀ տնտեսության համար²: ՀՀ նախագահն ընդգծել է. «Դրամի շատ դանդաղ ու կայուն արժեզրկում՝ առանց որևէ նկատելի թռիչքների ողջ տարվա ընթացքում... շատ նորմալ էմ համարում և բարենպաստ մեր տնտեսվարողների և, առաջին հերթին, արտահանողների համար»³: Եթե առաջին հայացքից կայուն փոխարժեքը չի համապատասխանում տնտեսության աճին, ապա չափազանց բարձր է փոխարժեքի կտրուկ փոփոխության հավանականությունը:

Նպատակահարմար չէ առանձնացված վարել գների կայունության քաղաքականություն: Տվյալ քաղաքականությունը պետք է լինի տնտեսական աճը խթանող և ֆինանսական կայունությունն ապահովող քաղաքականություն, ինչը փաստացի պահանջում է ՀՀ Սահմանադրությունը [5]: Կենտրոնական բանկն իր գործառույթներն իրականացնելիս անկախ է, սակայն իր կողմից վարվող դրամավարկային քաղաքականությունը, սերտորեն փոխկապված լինելով հարկաբյուջետային քաղաքականության հետ, ակնհայտ է, որ գտնվում է ընդհանուր տնտեսական քաղաքականության համակարգում:

ՀՀ տնտեսության վերափոխման տարիների ընթացքում և ՀՀ Սահմանադրության փոփոխությունների համատեքստում առաջացել է ՀՀ կենտրո-

¹ Եվրոգոտում առանցքային վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0% է, իսկ գնաճը 0.2% է, տարբերությունը՝ -0.2: Ռուսաստանում այդ ցուցանիշները հետևյալն են՝ 10%, 5.4%, տարբերությունը՝ 4.6: ԱՄՆ-ում՝ 0.5%, 0.8%, տարբերությունը՝ -0.3: Հայաստանում վերաֆինանսավորման տոկոսադրույքը 2016թ. վերջին կազմել է 6.25% է (լումբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 7.75%), 12-ամսյա գնաճը կազմել է -1.1%, տարբերությունը՝ 7.35: <http://www.cbrates.com/>; <http://www.tradingeconomics.com/country-list/inflation-rate>

² Նշենք, որ 2015թ. դրամն արժեզրկվել է դոլարի նկատմամբ 1.5%-ով, իսկ եվրոն՝ 11.3%, <http://bankir.ru/kurs>

³ <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2011/03/11/news-88/>

նական բանկի մասին օրենքի [6] ճշգրտման անհրաժեշտություն, ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցման կարիք: Գնաճի ու փոխարժեքի կարգավորման սկզբունքների ճշգրտումը պետք է միտված լինի իր հիմնական նպատակների, ընդգծել՝ համակարգված (ոչ իրավիճակային) իրականացմանը և դրամավարկային ու հարկաբյուջետային քաղաքականության կոորդինացմանը:

Հայաստանը, դառնալով ԵԱՏՄ անդամ, համաձայն ԵԱՏՄ պայմանագրի՝ պարտավոր է կատարել նաև որոշակի պայմաններ դրամավարկային քաղաքականության վերաբերյալ, որոնք սահմանված են ԵԱՏՄ պայմանագրի 63 և 64 հոդվածներում [7]: Եվրասիական տնտեսական միության պայմանագրում որոշ բաժիններ ունեն առանցքային նշանակություն, դա են ցույց տալիս նաև Եվրամիության Մասաթրիխտյան պայմանագրով սահմանված առանցքային ցուցանիշների վերաբերյալ պայմանները:

Մասնավորապես, ԵԱՏՄ պայմանագրի «Մակրոտնտեսական քաղաքականություն» XIII և «Արժույթային քաղաքականություն» XIV բաժինները, ինչպես նաև «Համաձայնեցված արժույթային քաղաքականության վարման վերաբերյալ ուղղված միջոցների մասին» հավելված 15-ը ունեն առանցքային նշանակություն: Տվյալ բաժինների կոնկրետացումը չափազանց կարևոր և առաջնային խնդիր է: Նշենք, որ XIII բաժնի 63 հոդվածում («Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք որոշում են տնտեսական զարգացումը») նշված է, որ գնաճի մակարդակը չի կարող գերազանցել ավելի քան 5 տոկոսային կետով գնաճի մակարդակը ԵԱՏՄ այն երկրում, որտեղ գնաճի ցուցանիշը նվազագույնն է: Սակայն տվյալ պայմանը չի կատարվում (*Աղյուսակ 1*):

ԵԱՏՄ պայմանագրի առանցքային հոդվածների հստակ կատարման դեպքում նպատակահարմար է ԵԱՏՄ երկրներում հաշվարկները, հատկապես ռազմավարական ապրանքների մասով, կատարել ազգային արժույթով և հրաժարվել այդ հաշվարկներում դոլարից, ինչը հնարավորություն կտա ավելի արդյունավետ իրականացնել փոխհաշվարկները և կրճատել դոլարի-զանցիայի մակարդակը: Տվյալ առաջարկն ուղղակի հետևում է ԵԱՏՄ պայմանագրից: Այդ տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն է ստանում 64-րդ հոդվածը, որտեղ ներկայացված են ԵԱՏՄ երկրների համաձայնեցված արժույթային քաղաքականության նպատակները և խնդիրները: Ինտեգրացիայի էֆեկտները մեծացնելու տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շահերից է բխում համագործակցության զարգացումը արժույթաֆինանսական ասպարեզում, ազգային արժույթի դերի բարձրացումն առևտրային ու ներդրումային

գործընթացներում և, իհարկե, ազգային արժույթների փոխարկելիության գործում: Դրա համար, համաձայն ԵԱՏՄ պայմանագրի՝ անդամ երկրները պետք է իրականացնեն համաձայնեցված արժույթային քաղաքականություն: Տվյալ հոդվածի հավելվածում ուղղակի նշված է ազգային արժույթների փոխարժեքի կոորդինացման անհրաժեշտության մասին, ինչը կապահովի ԵԱՏՄ-ում փոխհաշվարկների իրականացումն ազգային արժույթով:

Աղյուսակ 1

ԵԱՏՄ երկրների գնաճը, ԿԲ տոկոսադրույքը, փոխարժեքի փոփոխությունը ԱՄՆ դոլարի նկատմամբ

Երկիր	Տարի	Գնաճ	ԿԲ տոկոսադրույք	Փոխարժեքի փոփոխությունը ԱՄՆ դոլարի նկատմամբ
Ռուսաստան	2014	11.4 %	10.5 %	- 95.6 %
	2015	12.9 %	11.0 %	- 9.1 %
	2016	5.4 %	10.0 %	+ 22.5 %
Ղազախստան	2014	7.4 %	5.5 %	- 18.6 %
	2015	13.6 %	5.5 %	- 96.9 %
	2016	16 %	12.0 %	+ 7.2 %
Բելառուս	2014	17.1 %	20 %	- 62.3 %
	2015	11.4 %	25 %	- 33.2 %
	2016	10.6 %	18 %	+ 6.7 %
Հայաստան	2014	3.0 %	8.50 %	- 16.5 %
	2015	-0.1 %	8.75 %	- 2.7 %
	2016	-1.1 %	6.25 %	- 0.0 %
Ղրղզստան	2014	10.5 %	10.5 %	- 17.8 %
	2015	3.4 %	10.0 %	- 26.9 %
	2016	-0.5 %	5.0 %	+ 8.9 %

Անհրաժեշտ է նշել հետևյալ գործոնը. եթե գործնականում չեն իրականացվում գործարքներ ազգային արժույթով, գոնե ռազմավարական ապրանքների զծով, ապա ԵԱՏՄ երկրների կենտրոնական բանկերը չեն ունենա հստակ ազդակ ԵԱՏՄ պայմանագրի պահանջները կատարելու համար, նաև համապատասխան նորմատիվների և փաստաթղթերի համաձայնեցման ու ընդունման համար: Նշենք, որ փոխհաշվարկներն ազգային արժույթով ուղղակի նպաստում են լողացող փոխարժեքի քաղաքականության համաձայնեցված և ավելի ռացիոնալ իրականացմանը: ԵԱՏՄ բոլոր երկր-

ների համար նպատակահարմար է իջեցնել դոլարիզացիայի մակարդակը: Նվազում է ոչ միայն պահանջարկը դոլարի նկատմամբ, այլ նաև ծախսերը փաստացի կրկնակի կոնվերտացիայի վրա: Գազի համար Հայաստանը վճարում է «Գազպրոմ» կազմակերպությանը տարեկան մոտ \$270 մլն, իսկ գազը վաճառվում է Հայաստանում դրամով: 2016թ. ընթացքում Ռուսաստանից Հայաստան տրանսֆերտները կազմել են մոտ \$960 մլն, որն ընդհանուր տրանսֆերտների՝ 1.5 մլրդի 60%-ն է¹: Տրանսֆերտները փոխանցվում են հիմնականում ռուսական ռուբլով: Տվյալ փոխհաշվարկների մեխանիզմի դեպքում գումարի հիմնական մասը բանկերի միջոցով ուղարկվում է Ռուսաստան և Ռուսաստանի բորսաներում կոնվերտացվում է ԱՄՆ դոլարի: Այս դեպքում գազի վճարման համար փաստացի անհրաժեշտ է լինում երկու անգամ կոնվերտացնել արժույթը՝ կատարելով համապատասխան ծախսեր: Ռուսաստանի համար անցումը փոխհաշվարկներում ռուսական ռուբլու ռազմավարական ապրանքների գծով, մասնավորապես՝ էներգակիրների մասով, համապատասխան ձևով կնվազեցնի ռուսական բորսաներում պահանջարկը դոլարի նկատմամբ: Փոխհաշվարկներն ազգային արժույթով ոչ միայն նպաստավոր են ազգային արժույթների կայունության համար, այլ նաև համապատասխանում են ԵԱՏՄ պայմանագրի պահանջների կատարմանը: Հետագայում դա հիմք է ստեղծում անցում կատարել ազգային արժույթով փոխհաշվարկներին՝ ռազմավարական ապրանքներից ապրանքաշրջանառության ամբողջ դաշտին:

Դա անհրաժեշտ է առաջին հերթին տնտեսությունը դոլարի նկատմամբ ազգային արժույթի տատանումից ապահովագրելու համար, նվազեցնել դոլարիզացիայի մակարդակը ԵԱՏՄ երկրներում, ինչպես նաև ծախսերը կոնվերտացիայի վրա: Որպեսզի որևէ ԵԱՏՄ անդամ երկիր չստանա առավելություն ազգային արժույթների տարբեր մակարդակի տատանումներից, ուղղակի անհրաժեշտ է կատարել ԵԱՏՄ պայմանագրի պայմաններն արժութային քաղաքականության վերաբերյալ և առաջին հերթին հստակեցնել ու կոնկրետացնել դրանք: ԵԱՏՄ երկրներն այդ քայլով կնպաստեն նաև պայմանագրի 4-րդ՝ «Միության նպատակները» հոդվածում սահմանված ԵԱՏՄ նպատակների կատարմանը՝ ազգային տնտեսությունների արդիականացմանը, կոռպորացմանը և մրցունակության բարձրացմանը: Ակնհայտ է, որ առանց համաձայնեցված դրամավարկային և հատկապես արժութային քաղաքականության կոորդինացման՝ սահմանված նպատակներին հասնել հնարավոր չէ:

¹ <http://www.armbanks.am/en/2017/02/09/105652/>

Անհրաժեշտ է նշել, որ տվյալ քայլը նպաստում է նաև ԵԱՏՄ երկրների տնտեսական անվտանգության ամրացմանը: ԵԱՏՄ երկրներում ավելի բարձր գնաճի պարագայում, քան զարգացած երկրներում ազգային արժույթների համաձայնեցման համար նրանց փոխարժեքը փոխարկելի արժույթների նկատմամբ, նպատակահարմար է, որ այն սահուն, քայլ առ քայլ նվազի, և դա պետք է կատարվի համաձայնեցված: Հակառակ դեպքում, եթե փոխարժեքը մնում է փաստացի անփոփոխ, հատկապես էապես ավելի բարձր գնաճի դեպքում, դա նշանակում է, որ երկրում խթանվում է ներմուծումը, փաստացի նրան ցուցաբերվում է աջակցություն: Միևնույն ժամանակ, տրամաբանական է նպաստել հակառակ գործընթացին, քանզի ազգային արժույթի գերագնահատված փոխարժեքը փաստացի կարող է արհեստականորեն նվազեցնել երկրի մրցունակությունը՝ բացասաբար ազդելով վճարային ու առևտրային հաշվեկշռի և բյուջեի կատարման վրա:

Գնաճին համապատասխանող փոխարժեքի սահուն նվազումը նպաստավոր է տնտեսության հատկապես արտահանման համար: Իհարկե, ԵԱՏՄ երկրներում դա պետք է տեղի ունենա սահուն և համաձայնեցված, քանզի կամայական տատանումները վնասում են տնտեսությանը: Եթե տրանսֆորմացվող երկրում նպաստավոր գնաճը 4-5% է, իսկ ԱՄՆ-ում և Եվրամիությունում գնաճը կազմում է մոտ 1%, ապա աննպատակահարմար է ազգային արժույթի կարծր կայունությունը: Անհրաժեշտ է նպաստել փոխարժեքի ձևավորմանը 3-4 տոկոսային կետով ավելի ցածր՝ հաշվի առնելով այն ապրանքների գների փոփոխությունը, որոնք ներկայացված են առևտրային հաշվեկշռում: Գերագնահատված ազգային արժույթը տրանսֆորմացվող երկրում հիմք է ստեղծում փոխարժեքի կտրուկ փոփոխման համար, հատկապես ճգնաժամային պայմաններում: Տվյալ դեպքում ազգային արժույթի փոխարժեքի «սեղմված զսպանակը» կարող է կտրուկ բացվել: Բացի դրանից, եթե տվյալ փոխարժեքի դեպքում էապես նվազում են երկրի միջազգային պահուստները, ապա դա առանցքային ազդակ է այն մասին, որ ազգային արժույթը գերագնահատված է: Փոխարժեքի և միջազգային պահուստների կտրուկ նվազումը վտանգ է ներկայացնում երկրի տնտեսական անվտանգության համար:

Ցածր փողայնացման մակարդակի դեպքում պարբերաբար առաջանում են դժվարություններ տնտեսության կայուն աճի և նրա դիվերսիֆիկացման համար, ինչպես նաև կարող են առաջանալ հիմնախնդիրներ ազգային արժույթով փոխհաշվարկների դեպքում: Նշենք, որ փողայնացման մակարդակի աճի համար նպաստավոր են ԵԱՏՄ երկրների ազգային

արժույթների փոխարկելիությունը և փոխհաշվարկներում անցումն ազգային արժույթներին:

ԵԱՏՄ երկրներում դրամավարկային քաղաքականության համաձայնեցման համար անհրաժեշտ է, հաշվի առնելով գնաճի փոխկապվածությունները դրամավարկային քաղաքականության այլ առանցքային ցուցանիշների հետ, հասնել նրան, որ ԵԱՏՄ երկրներում գնաճը չգերազանցի 5.5%-ը: Այդ պարագայում ազգային արժույթի փոխարժեքի նվազումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ պետք է համապատասխանի գնաճին, դրա հետ մեկտեղ՝ պետք է ունենալ համաձայնեցված վերաֆինանսավորման տոկոսադրույք և, որպես հետևանք, փողայնացման մակարդակի համապատասխանեցում երկրի զարգացման տեմպին: ՀՀ տնտեսական աճի տեսանկյունից չափազանց կարևոր է նաև ԵԱՏՄ պայմանագրի դրույթների հստակ կատարումը, հատկապես գնաճի և արժույթային քաղաքականության մասով: Եթե հնարավոր չէ օբյեկտիվ պատճառներից ելնելով այս կամ այն հոդվածը կատարել, ապա դա անհրաժեշտ է ճշգրտել:

ՀՀ տնտեսական քաղաքականության առանցքային կետերի իրականացման համար, որոնք վճռական նշանակություն ունեն ՀՀ տնտեսության կայուն աճի համար, պետք է իրականացնել համակարգված և համաձայնեցված քայլեր: Հատկապես անհրաժեշտ է համաձայնեցված հարկաբյուջետային և դրամավարկային, մասնավորապես արժույթային քաղաքականության իրականացում: Միայն համաձայնեցված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունն է նպաստում ՀՀ տնտեսության զարգացման սցենարի լավարկմանը: Այստեղ մեծ դեր ունի նաև տվյալ քաղաքականությունների կոորդինացումը սոցիալական քաղաքականության և ՀՀ տնտեսական քաղաքականության կոորդինացումը ԵԱՏՄ այլ երկրների հետ՝ համաձայն ԵԱՏՄ պայմանագրի:

Եզրակացություններ և առաջարկություններ

- Տրանսֆորմացվող երկրում տնտեսական աճի նպաստավոր պայմաններ ձևավորելու համար ուղեցույցը հետևյալն է՝ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետ համաձայնեցման համար անհրաժեշտ է վերաֆինանսավորման տոկոսադրույքը և պահուստավորման նորմը նվազեցնել այնպես, որ դրամավարկային քաղաքականությունը, նպաստելով տնտեսության զարգացմանը, դրա հետ մեկտեղ թույլ չտա, որ գնաճը գերազանցի ՀՀ պետական բյուջեի մասին

օրենքով հաստատված 5.5%-ը: Սա է դրամավարկային քաղաքականության իրականացման առանցքային արվեստը:

- Եթե տրանսֆորմացվող երկրում նպաստավոր գնաճը 4-5% է, իսկ ԱՄՆ-ում և Եվրամիությունում գնաճը կազմում է մոտ 1%, ապա առևտրային հաշվեկշռում ներկայացվող ապրանքների գների փոփոխությանը համապատասխանող ազգային արժույթի փոխարժեքի դանդաղ և կայուն արժեզրկումը բարենպաստ է տնտեսության համար:
- Ճշգրտման կարիք ունի ոչ միայն դրամավարկային, հատկապես վերաֆինանսավորման տոկոսադրույքի քաղաքականությունը, այլ նաև ՀՀ ԿԲ օրենքը, մասնավորապես 4-րդ, 14-րդ, 16-րդ, 26-րդ հոդվածները՝ հաշվի առնելով փոփոխված Սահմանադրության 200-րդ հոդվածը:
- «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի 4-րդ հոդվածում նշված է, որ Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է: Այդ դրույթը նպատակահարմար է հնարավորինս արագ համապատասխանեցնել փոփոխված Սահմանադրության 200-րդ հոդվածին, որտեղ նշված է, որ Կենտրոնական բանկի հիմնական նպատակն է գների և ֆինանսական կայունության ապահովումը:
- Կենտրոնական բանկի օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետը՝ «Եթե Կենտրոնական բանկի մյուս խնդիրները հակասում են իր հիմնական խնդրին, Կենտրոնական բանկն առաջնություն է տալիս հիմնական խնդրին և ղեկավարվում է դրա իրագործման անհրաժեշտությամբ», պետք է հանել: Եթե լուծված չեն Կենտրոնական բանկի այլ խնդիրներ, ապա նպատակահարմար է, որ Ազգային ժողովը գնահատի, թե որքանով է դա արդարացված:
- ՀՀ ԿԲ-ի մասին օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետում նշված է. «Կենտրոնական բանկի նախագահի, նրա տեղակալների և խորհրդի մյուս անդամների վարձատրության չափը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը»: Անարդյունավետ է, որ խորհրդի անդամների աշխատավարձը սահմանեն հենց իրենք՝ խորհրդի անդամները:
- 16-րդ հոդվածում նշվում է, որ արտաքին աուդիտորական կազմակերպությունը կամ կազմակերպությունները մինչև երեք տարի ժամկետով ընտրվում են Կենտրոնական բանկի խորհրդի կողմից: Փաստացի փոքր տնտեսություն ունեցող երկրի Կենտրոնական բանկն ինքն է ընտրում իր վերահսկողին: Այդ կարգի երկրներում արդյունավետ է, երբ անկախ արտաքին աուդիտորի ընտրությանը մասնակցում է կամ կառավարությունը, կամ Ազգային ժողովը: Հայաստանում Կենտրոնական բանկի ան-

կախ արտաքին աուդիտորի՝ կառավարության ընտրությունը նպատակահարմար է, քանզի այն ԿԲ առանցքային գործընկերն է:

- ԵԱՏՄ պայմանագրի 63-րդ և 64-րդ հոդվածներից հստակ հետևում է Հայաստանի համար ԵԱՏՄ երկրներում հաշվարկները, հատկապես ռազմավարական ապրանքների մասով, ազգային արժույթով կատարելու նպատակահարմարությունը: Անհրաժեշտ է հաշվարկները հատկապես գազի վճարման համար իրականացնել ռուսական ռուբլով: Դա ոչ միայն նպաստավոր է ՀՀ տնտեսության համար, այլ նաև համապատասխանում է ԵԱՏՄ պայմանագրի պահանջների կատարմանը:
- ԵԱՏՄ երկրներում դրամավարկային քաղաքականության համաձայնեցման համար անհրաժեշտ է, հաշվի առնելով գնաճի փոխկապվածությունները դրամավարկային քաղաքականության այլ առանցքային ցուցանիշների հետ, հասնել նրան, որ ԵԱՏՄ երկրներում գնաճը չգերազանցի 5.5%-ը: Դրան փուլային տարբերակով հասնելու պայմանով դրույթը պետք է ընդգրկվի ԵԱՏՄ պայմանագրում:
- ՀՀ տնտեսական աճի տեսանկյունից չափազանց կարևոր է ԵԱՏՄ պայմանագրի դրույթների հստակ կատարումը, հատկապես գնաճի և արժույթային քաղաքականության մասով: Անհրաժեշտ է ոչ միայն հետևել միջազգային կարգավիճակ ունեցող ԵԱՏՄ պայմանագրի դրույթներին, մասնավորապես 64-րդ հոդվածին՝ «Համաձայնեցված արժույթային քաղաքականության նպատակները և սկզբունքները», այլ նաև կոնկրետացնել այդ դրույթները՝ ելնելով տնտեսության զարգացման համար ավելի մեծ հնարավորություններ ապահովելուց: Հայաստանը պետք է նախաձեռնող լինի ԵԱՏՄ պայմանագրի 63-րդ հոդվածի գնաճի վերաբերյալ կետի ճշգրտման ու կատարման և 64-րդ հոդվածի փոխարժեքի վերաբերյալ կետի կոնկրետացման հարցերում:

Հունիս, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Facts about Germany, Chief editor: Dr. Arno Kappler, German Federal Press and Information Bureau, 2000, ISBN 3-7973-0752-7.
2. *Ашот Тавадян*, Пороги чувствительности постсоветской экономики // Мир перемен, 2013, № 2.
3. «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք:
4. «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ:
6. «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենք:
7. Договор о Евразийском экономическом союзе.

ԳՆԱՃԻ, ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ

Աշոտ Թավադյան

Ամփոփագիր

Կայուն տնտեսական աճ, հավասարակշռված արտաքին առևտուր, զբաղվածության բարձր մակարդակ, գների կայունություն սկզբունքային նպատակները միասնական համակարգ են ներկայացնում: Գների կայունությունը չափազանց կարևոր նպատակ է: Սակայն դա պետք է ապահովել հաշվի առնելով տնտեսական համակարգի փոխկախվածությունները, գնաճը օպտիմալ ձևով համաձայնեցնելով առանցքային տնտեսական ցուցանիշների հետ:

Դրամավարկային քաղաքականության հիմնախնդիրն այն չէ, որ բոլոր միջոցներով ապահովվի հնարավորինս նվազագույն գնաճ, այլ այն, որ ունենանք իրականությանը համապատասխանող վերաֆինանսավորման տոկոսադրույք, գնաճ, որն առավելագույնս նպաստավոր է տնտեսության, արտահանման աճին:

ԵԱՏՄ երկրներում դրամավարկային քաղաքականության համաձայնեցման համար անհրաժեշտ է, հաշվի առնելով գնաճի փոխկապվածություններն այլ առանցքային ցուցանիշների հետ, հասնել նրան, որ ԵԱՏՄ երկրներում գնաճը չգերազանցի 5.5%-ը: Դրա հետ մեկտեղ, պետք է ունենալ համաձայնեցված վերաֆինանսավորման տոկոսադրույք: Տնտեսական աճի տեսանկյունից չափազանց կարևոր է նաև ԵԱՏՄ պայմանագրի դրույթների հստակ կատարումը, հատկապես գնաճի և արժույթային քաղաքականության մասով:

ВЛИЯНИЕ ИНФЛЯЦИИ, КУРСА НАЦИОНАЛЬНОЙ ВАЛЮТЫ НА ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ

Ашот Тавадян

Резюме

Ключевые цели – стабильный экономический рост, сбалансированная внешняя торговля, высокий уровень занятости, стабильность цен – представляют собой единую систему. Стабильность цен – чрезвычайно важная цель. Однако эту стабиль-

ность следует обеспечить с учетом взаимосвязей экономической системы, оптимально согласуя уровень инфляции с ключевыми экономическими показателями.

Основная задача денежно-кредитной политики заключается не в том, чтобы всеми возможными способами обеспечить минимальную инфляцию, а в том, чтобы иметь соответствующую реальности ставку рефинансирования, инфляцию, которая в наибольшей мере способствует росту экономики, экспорта.

Для согласования денежно-кредитной политики в странах ЕАЭС, с учетом взаимосвязей инфляции с другими ключевыми показателями, необходимо достичь того, чтобы инфляция в странах ЕАЭС не превышала 5.5%. Вместе с тем следует иметь согласованную ставку рефинансирования. С точки зрения экономического роста, чрезвычайно важно четкое выполнение положений Договора о ЕАЭС, в особенности относительно инфляции и валютной политики.

IMPACT OF INFLATION AND NATIONAL CURRENCY EXCHANGE RATE ON ECONOMIC GROWTH

Ashot Tavadyan

Resume

The following principal objectives – stable economic growth, balanced foreign trade, high level of employment and price stability – represent a unified system. Price stability is an extremely important objective. However, this stability should be ensured taking into account the interrelations of the economic system, optimally coordinating the rate of inflation with the key economic indicators.

The main task of monetary policy is not to insure minimum inflation at all costs, but to have a refinancing rate corresponding to reality and inflation, and most conducive to economic growth and exports.

In order to harmonize monetary policy in the EAEU countries, it is necessary to achieve that inflation rate in the EAEU countries does not exceed 5.5%, taking into account the interrelation of inflation with other key indicators, At the same time, an agreed refinancing rate should be adopted. From the point of view of economic growth, it is extremely important to strictly implement the requirements of the Treaty on the EAEU, especially regarding inflation and monetary policy.

**ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ.
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ**

Վահրամ Հովյան՝

Բանալի բառեր՝ Մերձավոր և Միջին Արևելք, Սփյուռք, Հայաստան, հայրենադարձություն, բարեգործական կազմակերպություններ, հիմնադրամ, տեղեկատվական աջակցություն, հայեցակարգ, օրենքի նախագիծ:

***Տարածաշրջանային գործընթացները և
Մերձավոր ու Միջին Արևելքի հայ համայնքները***

Որպես Մերձավոր և Միջին Արևելքի հայկական սփյուռքի հենասյուներ ներկայում հանդես են գալիս Լիբանանի, Սիրիայի, Իրանի և Թուրքիայի հայ համայնքները¹: Մյուս հայ համայնքները թե՛ թվաքանակով և թե՛ կազմակերպչական հաստատությունների քանակով էապես զիջում են վերջիններիս՝ դիտարկվելով հիմնականում որպես տեղական (լոկալ) նշանակության ընդհանրություններ:

Թվարկված չորս համայնքներն էլ ներկայում գտնվում են անկայունության հետևանքով սպառվելու վտանգի առջև: Չնայած սիրիական կառավարական բանակի կողմից Հալեպի ազատագրումից հետո ինչպես տեղի ազգային իշխանությունները, այնպես էլ տարածաշրջանային և համազգային հայկական կառույցները մեծ թափով ձեռնամուխ են եղել հայ համայնքի վերականգնմանը [տե՛ս 2; 3], այնուամենայնիվ, դեռևս լուծման կարոտ բազմաթիվ խնդիրներ կան: Նախ՝ համայնքն արդեն իսկ հսկայական կորուստներ է կրել սիրիական ճգնաժամի հետևանքով: Նախքան քաղաքի ազատագրումը նրա թվաքանակը ամենալավատեսական հաշվարկներով

^{*} «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ, Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար:

¹ Լիբանանի հայ համայնքի թվաքանակը կազմում է 70-80 հազ., Իրանինը՝ 80 հազ., Թուրքիայինը՝ 80 հազ.: Սիրիահայության թվաքանակը նախքան 2011թ. սիրիական ճգնաժամը կազմում էր մոտ 70 հազ. [1, էջ 290, 235, 175, 508]: Ներկայում, համաձայն ՀՀ Սփյուռքի նախարարության տվյալների՝ այն կազմում է մոտ 25 հազ.:

կազմում էր մոտ 10 հազ.: Բացի այդ, պատերազմը Սիրիայում դեռևս ավարտված չէ: ԻՊԽ խմբավորումները գտնվում են Բոլիբում՝ Հալեպից ընդամենը 60կմ հեռավորության վրա: Սիրիական կառավարական զորքերի կողմից ազատագրվել է Հալեպ քաղաքը, բայց ոչ Հալեպի նահանգը: Իսկ վերջնական խաղաղության հաստատման հեռանկարները դեռևս անորոշ են: Հետևաբար, Լիբանանի, Իրանի և Թուրքիայի հայ համայնքների կողքին Սիրիայի հայ համայնքը, որը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի բնորոշմամբ՝ «շնորհիլի իր քրիստոնեական հաւատքին, ամուր կամքին ու վառ յոյսին» [4] անասելի զրկանքների գնով կարողացավ պահպանել իր վերջին բեկորները կործանումից, ներկայում միայն վերապահումով կարելի է համարել Մերձավոր և Միջին Արևելքի հայկական սփյուռքի հենասյուն համայնք:

Մյուս երկրներում, թեև դրությունը համեմատաբար կայուն է (համենայն դեպս, համեմատելի չէ Սիրիայում տիրող իրավիճակի հետ), այնուամենայնիվ, հաշվի առնելով ինչպես անցյալի փորձը, այնպես էլ զարգացումների ընթացքն ու հնարավոր սցենարները, կարելի է ասել, որ ամենևին բացառված չէ ոչ հեռավոր ապագայում իրավիճակի ապակայունացումն այդ երկրներում նույնպես:

Ներկայում միայն փխրուն խաղաղություն է տիրում Լիբանանում: Վերջինս, լինելով փոքր երկիր, այնուամենայնիվ, բնորոշվում է էթնիկ և կրոնական բազմազանությամբ [մանրամասն տե՛ս 5, էջ 88-95]: Այստեղ բախվում են թե՛ տարածաշրջանային տերությունների, թե՛ գերտերությունների շահերը, ինչը, զուգակցվելով գրեթե մշտական անկայուն միջավայրի հետ, ցանկացած պահի կարող է պատերազմական իրավիճակի առաջացման պատճառ դառնալ [տե՛ս, օրինակ, 6]: Հետևաբար, նոր անհանգիստ իրավիճակի առաջացումը Լիբանանում լիովին հավանական է՝ կապված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններով պայմանավորված հնարավոր ճգնաժամի առաջացման հետ:

Իրանի պարագայում կարելի է ասել, որ թեև ԱՄՆ-ի հետ հարաբերություններում սառույցը նախագահ Բարաք Օբամայի օրոք զգալիորեն հալվեց՝ կապված Իրանի միջուկային ծրագրի շուրջ 2015թ. նոյեմբերի 24-ին Ժնևում ձեռք բերված պայմանավորվածությունների հետ, սակայն ճգնաժամն այդ երկու երկրների միջև դեռևս հեռու է հաղթահարված լինելուց: Չնոռանանք, որ 1979-ից մինչև այժմ չկան դիվանագիտական հարաբերություններ ԱՄՆ-ի և Իրանի միջև: Եվ ապագայում էլ չի բացառվում հարաբերությունների սրումն այդ երկու երկրների միջև, ինչի միտումները ներկայում երևում են: ԱՄՆ վերջին նախագահական ընտրություններից անմիջապես հետո Իրան-

ԱՄՆ հարաբերություններն արդեն իսկ կրկին սրվելու միտում են ցուցաբերում՝ պայմանավորված այս անգամ արդեն ԱՄՆ նոր վարչակազմի արտաքին քաղաքականության հետ: Նախ՝ նոր նախագահ Դոնալդ Թրամփի ընդգծված իսրայելամետ քաղաքականությունը չի կարող համապատասխան արձագանք չգտնել Իրանում, և երկրորդ՝ վերջինիս հրթիռային փորձարկումներից հետո ԱՄՆ նոր վարչակազմը գնաց Իրանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցները մեծացնելու ճանապարհով¹, իսկ նախագահ Դոնալդ Թրամփը չբացառեց Իրանի նկատմամբ ռազմական գործողությունները²: Այսպիսով, ԱՄՆ վերջին նախագահական ընտրություններից հետո ամերիկա-իրանյան հարաբերությունները միտում ունեն վերադառնալու Իրանում նախագահ Մահմուդ Ահմադինեժադի օրոք (2005-2013թթ.) եղած հարաբերությունների մակարդակին, երբ երկու երկրները երբեմն գտնվում էին պատերազմի (զինված բախման) շեմին: Իրանում նույնպես հերթական նախագահական ընտրություններից հետո կարող են կրկին իշխանության ղեկին չափավորներին կամ բարեփոխիչներին փոխարինել կոշտ գծի կողմնակից պահպանողականները և գնալ առձակատման ԱՄՆ-ի հետ:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այդ երկրում ավանդաբար առկա հայատյացությանն ու ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հալածանքներին վերջին տարիներին գումարվում են Թուրքիայի ներքին կյանքն ապակայունացնող այնպիսի գործոններ, ինչպիսիք են.

- Քրդական հարցի սրումը, որը բավական հրատապ է դարձել հատկապես սիրիական ճգնաժամի համատեքստում,
- պայքարն աշխարհիկության և իսլամիզմի միջև, որի ամենացայտուն դրսևորումը 2016թ. հուլիսի 15-ի ռազմական հեղաշրջման անհաջող փորձն էր,
- հաճախակիացած ահաբեկչական գործողությունները,
- Թուրքիայի ներգրավումը մերձավորարևելյան, մասնավորապես՝ սիրիական ճգնաժամում,
- Արևմուտքի հետ հարաբերությունների վատթարացումը և դրա հետևանքով տնտեսական անկումը,
- նախագահ Էրդողանի կողմից սահմանադրական փոփոխությունների միջոցով իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու ավտորիտար նկրտումները,

¹ Տե՛ս US slaps new sanctions on Iran over missile test,

<http://www.aljazeera.com/news/2017/02/slaps-sanctions-iran-missile-test-170203154253182.html>

² Իրանը խաղում է կրակի հետ. Դոնալդ Թրամփ,

<http://haydzayn.am/hy/աշխարհի-ձայն/2017/02/03/իրանը-խաղում-է-կրակի-հետ-դոնալդ-թրամ/>

- 2016թ. հուլիսյան հեղաշրջման փորձից հետո երկրում ծայր առած քաղաքական բռնաճնշումները՝ պետական պաշտոնյաների, ուժային կառույցների աշխատակիցների, ընդդիմադիր քաղաքական գործիչների¹, լրագրողների ձերբակալություններն ու բանտարկությունները, ընդդիմադիր «Զաման» պարբերականի փակումը:

Բացի վերոնշյալ հանգամանքներից, պատմությանը հայտնի է, որ թուրքական իշխանությունները սովորություն ունեն օգտագործել միջազգային անկայուն իրավիճակներն ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հաշվեհարդար տեսնելու համար: Դրա լավագույն օրինակը Հայոց ցեղասպանության իրագործումն էր Առաջին աշխարհամարտի տարիներին: Ներկայում էլ, եթե վերոհիշյալ գործոնների ազդեցությամբ Թուրքիայում և տարածաշրջանում ստեղծվի անկայուն իրավիճակ, չի բացառվում, որ թուրքական իշխանություններն առիթը բաց չեն թողնի հերթական անգամ հաշվեհարդար տեսնելու իրենց կողմից անբարեհույս համարվող հայկական տարրի հետ:

Հպանցիկ նշենք, որ, բացի ավանդական հայ համայնքից, Թուրքիայում են գտնվում նաև մեծ քանակությամբ աշխատանքային միգրանտներ Հայաստանի Հանրապետությունից, որոնք չունեն այդ երկրի քաղաքացիություն և որոնց կեցությունն այդ երկրում հաճախ անօրինական է: Անկայուն իրավիճակի առաջացման պարագայում հայության այս շերտը նույնպես կարող է դառնալ թուրքական իշխանությունների և ոչ իշխանական հետադեմ տարրերի բռնության և ցասման թիրախ, ինչի մասին սպառնալիք արդեն իսկ պաշտոնական մակարդակով հնչել է դեռևս 2010թ. Թուրքիայի այն ժամանակվա վարչապետ, ներկայում նախագահ Ռեջեփ Էրդողանի կողմից²: Հետագայում ևս թուրքական իշխանությունների կողմից հնչեցվել են նման սպառնալիքներ³:

Ֆորսմաժորային իրավիճակներից բխող՝ Լիբանանի, Իրանի և Թուրքիայի հայ համայնքներին հասցվելիք հարվածի դեպքում վերջիններս կամ

¹ Մասնավորապես, հիշատակելի է քրդամետ ժողովուրդների դեմոկրատական կուսակցության համանախագահներ Սելահադդին Դեմիրթաշի, Ֆիզեն Յուսեփդադի և 9 ակտիվ գործիչների (Միլի մեջլիսի պատգամավորներ) ձերբակալությունը [7]:

² Տե՛ս Էրդողանը սպառնում է արտաքսել հազարավոր հայերի. Հայաստանը դատապարտում է, <http://www.azatutyun.am/a/1986701.html>

³ Տե՛ս Էրդողանն ակնարկել է Թուրքիայից հայերին արտաքսելու հնարավոր սպառնալիքի մասին, <http://www.ermenihaber.am/am/news/2015/04/15/Էրդողանն-ակնարկել-է-Թուրքիայից-հայերին-արտաքսելու-հնարավոր-սպառնալիքի-մասին/55629>;

Էրդողանը կրկին սպառնացել է արտաքսել հայերին Թուրքիայից, <http://araratnews.am/erdoghaneh-krkin-sparnacel-e-artakhsel-hayerin-thurkhiayic/>

ամբողջությամբ կկազմալուծվեն, կամ այնքան կթուլանան, որ նրանց գոյությունը կկրի գրեթե խորհրդանշական բնույթ, ինչպես, օրինակ, Եգիպտոսի հայ համայնքի պարագայում, որը նախկինում լինելով հայկական սփյուռքի ծաղկուն համայնքներից մեկը՝ 20-րդ դարի կեսերից աստիճանաբար թուլացավ՝ կորցնելով իր երբեմնի դերը:

Մերձավոր և Միջին Արևելքի հայկական սփյուռքի գլխավոր համայնքներին հասցվելիք հնարավոր հարվածը և դրա հետևանքով վերջիններիս կազմալուծումն ընդհանրապես կարող են կասկածի տակ դնել այդ տարածաշրջանում հայկական սփյուռքի գոյությունը: Իսկ դա ծանր հարված կլինի նաև ողջ Սփյուռքի համար, քանի որ այդ տարածաշրջանի հայ համայնքները «...ոչ միայն արևմտահայության անմիջական ժառանգներն են, այլև արևմտահայ մշակույթի կրողները և տարածողները» [8, էջ 7]: Հետևաբար, նրանց կազմալուծումը մեծ կորուստ կլինի արևմտահայ քաղաքակրթության (քաղաքակրթական կողի կամ գենի) շարունակականության ապահովման տեսանկյունից: Եվ, բացի այդ, նրանք հանդիսանում են սփյուռքաստեղծ համայնքներ [տե՛ս, օրինակ, 9], քանի որ ներկայում Սփյուռքի շատ առաջնորդներ (համազգային կառույցների ղեկավարներ, խմբագիրներ և այլն) դուրս են եկել այդ տարածաշրջանից, այդ տարածաշրջանում են ժամանակին ստեղծվել Սփյուռքի համազգային շատ կազմակերպություններ¹, ներկայում էլ շատ համազգային կառույցներ գտնվում են այնտեղ²:

Ցավոք, ստեղծված իրավիճակում դժվար է քիչ թե շատ արդյունավետ դեղատոմս առաջարկել Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների փրկության համար: Մինչ օրս կիրառվել են այնպիսի ավանդական քայլեր, ինչպիսիք են.

- Հայ համայնքների տղամարդկանցից զինված խմբերի կազմավորումը և հայկական բնակավայրերի պաշտպանությունը նրանց հանձնելը (ինչպես լիբանանյան քաղաքացիական պատերազմի, այնպես էլ սիրիական և իրաքյան ճգնաժամերի ժամանակ [տե՛ս, օրինակ, 13]),
- Շտապ օգնության և վերականգնումի մարմնի գործունեությունը,

¹ ՀԲԸՄ-ն (1906թ.), Համազգային հայ կրթական և մշակութային միությունը (1928թ.) և այլն [10, էջ 103, 27]:

² Որպես այդպիսի ամենանշանավոր կառույց կարելի է վկայակոչել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, որի իրավասությունները տարածվում են Լիբանանի, Սիրիայի, Իրանի, Կիպրոսի, Հունաստանի, ԱՄՆ-ի, Կանադայի, Վենեսուելայի, Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների վրա [տե՛ս 11, էջ 466-469]: Առանձնակի հիշատակման արժանի է նաև Սփյուռքի միակ բուհը՝ Բեյրութի Հայկազյան համալսարանը: Այն, ըստ էության, ունի միջազգային բուհի կարգավիճակ, քանի որ այնտեղ «...ուսանում են Լիբանանի և Մերձավոր Արևելքի այլ երկրների բազմաթիվ հայ և օտարազգի ուսանողներ» [12, էջ 43]:

- Հայրենիքից և Սփյուռքի այլ համայնքներից ու համագրային կազմակերպություններից տրամադրված նյութական օժանդակությունը՝ սննդի, հագուստի, դեղորայքի և այլնի տեսքով:

Ավանդական այս եղանակները, կարևոր լինելով հանդերձ, այնուամենայնիվ, միայն մասնակիորեն են կարողացել փրկել իրավիճակը՝ ընդհանուր առմամբ ի գորու չլինելով կանխել համայնքների եթե ոչ կազմալուծումը, ապա էական թուլացումը:

Առանձնապես մեծ հույսեր չպետք է կապել նաև միջազգային խաղաղապահ առաքելությունների կազմում հայկական զինուժի ներգրավման հետ, քանի որ. ա) դրանք տեղակայված են ոչ բոլոր հայաշատ երկրներում (այսօր միայն Լիբանանում կան հայկական խաղաղապահ ուժեր) և բ) նրանց անմիջական գործառույթների մեջ չի մտնում հայ համայնքների պաշտպանությունը: Հայկական խաղաղապահ ուժերի ներկայությունը լավագույն դեպքում կարող է հոգեբանական նշանակություն ունենալ հայ համայնքների համար:

Հիշյալ հանգամանքներում լավագույնը, ինչ կարող են անել Հայաստանն ու Սփյուռքը, ճգնաժամային իրավիճակներում հայտնված հայության բեկորների՝ դեպի Հայաստան արագ և անվտանգ ուղղորդումն է՝ Արամ Ա կաթողիկոսի՝ «Եթե գաղթ, ապա միայն Հայաստան» ձևակերպման տրամաբանությանը համապատասխան: Այլ կերպ ասած՝ հայրենադարձությունը, ինչը ենթադրում է փոխկապակցված քայլերի հաջորդականություն՝ ճգնաժամային իրավիճակների կանխատեսումից մինչև հայրենադարձների ինտեգրացիա հայաստանյան հասարակության մեջ:

Հայրենադարձության խնդիրը

Հայրենադարձությունը, ըստ կազմակերպվածության աստիճանի, կարելի է բաժանել երկու տեսակի՝ ծրագրված և տարերային: Ծրագրված հայրենադարձությունը պետական մարմինների և սփյուռքյան կառույցների կողմից նախօրոք մշակված և իրականացվող հայրենադարձությունն է: Տարերայինը անհաղթահարելի ուժի (ֆորսմաժորային իրավիճակի) ազդեցությամբ, ինչպիսիք են պատերազմները, տվյալ խմբի նկատմամբ իրականացվող բռնությունների ալիքը, բնական կամ տեխնածին աղետները և այլն, Սփյուռքի համայնքներից հայրենակիցների զանգվածային ներհոսքն է հայրենիք: Այս դեպքում հայրենադարձները նույն փախստականներն են՝ միայն այն տարբերությամբ, որ գալիս են ոչ թե օտար, այլ հայրենի երկիր:

Ցավոք, Հայաստանը ներկայում չունի համարժեք հնարավորություններ ծրագրված հայրենադարձության քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար¹: Հետևաբար, այսօրվա դրությամբ այդպիսի հայրենադարձության մասին խոսելը, թերևս, ժամանակավրեպ է: Սակայն Հայաստանի նորագույն պատմության ընթացքում եղել են ոչ ծրագրված՝ տարերային հայրենադարձության ակիբներ, որոնցից որպես առավել խոշորներ կարելի է առանձնացնել երեքը.

1. 1989-91թթ. ադրբեջանահայության զանգվածային ներհոսքը Հայաստան՝ կապված Բաքվի, Սումգայիթի, Կիրովաբադի և Ադրբեջանի այլ բնակավայրերի հայկական կոտորածների հետ: Հայրենադարձության այս տարերային ակիբի հետևանքով Հայաստանում հայտնվեց ավելի քան 300 հազար ադրբեջանահայություն [14, էջ 63]:
2. 2003թ. իրաքահայության զգալի քանակության ներհոսքը Հայաստան՝ պայմանավորված իրաքա-ամերիկյան պատերազմով: Այս ակիբի ժամանակ մոտ 1000 իրաքահայեր հաստատվեցին Հայաստանում²:
3. 2011-ից առ այսօր շարունակվող սիրիահայության զգալի քանակությամբ ներհոսքը Հայաստան՝ պայմանավորված սիրիական ճգնաժամով, իսկ ավելի կոնկրետ՝ պատերազմով: Համաձայն ՀՀ Սփյուռքի նախարարության տվյալների՝ սիրիական ճգնաժամի հետևանքով Հայաստանում ապաստանել է մոտ 20 հազար սիրիահայ:

Այսպիսով, տարերային հայրենադարձության խնդրի հետ, անկախ ցանկությունից, Հայաստանը բախվել է, և, ինչպես հիմնավորվեց վերը, քիչ չէ հավանականությունը, որ ապագայում ևս կբախվի: Դա կարելի է համարել անխուսափելի աշխարհի թեժ կետերում ստվարաթիվ համայնքներ ունեցող երկրի համար:

Նկատի ունենալով, որ տարերային հայրենադարձության հավանականությունը ոչ հեռավոր ապագայում բավական մեծ է, կարծում ենք՝ նպատակահարմար կլինի, որ ինչպես պետությունը՝ ի դեմս ՀՀ-ի և ԼՂՀ-ի, այնպես էլ Սփյուռքի կառույցները որոշակիորեն պատրաստ լինեն դրան: Դա թույլ կտա, մի կողմից՝ սահուն և նվազագույն կորուստներով իրականացնել հայրենադարձությունը (օրինակ, հնարավոր ֆորսմաժորային իրավիճակները կանխատեսելու և ժամանակին հայ համայնքներին վտանգա-

¹ Չնայած անկախության հռչակումից ի վեր սփյուռքահայերի փոքրիկ խմբեր սեփական նախաձեռնությամբ աշխարհի տարբեր երկրներից հայրենադարձվել են Հայաստան:

² Փաշայան Ա., Իրաքահայ համայնքը՝ նոր մարտահրավերների առջև,

http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2385

վոր շրջաններից դեպի հայրենիք փոխադրելու ճանապարհով), իսկ մյուս կողմից՝ հնարավորինս արագ և արդյունավետ լուծելու հայրենադարձների խնդիրները Հայաստանում: Խոսքը վերաբերում է ինչպես սկզբնական շրջանում հայրենադարձների կենսական պահանջները բավարարելու, այնպես էլ ավելի լայն՝ հայ հասարակության մեջ նրանց լիարժեք ինտեգրման խնդիրներին:

Հարկ է նկատել, որ հատկապես Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից հայրենադարձության հետ կապված քաղաքակրթական, հոգևոր-մշակութային խնդիրներ մեծ հաշվով չկան: Որքան էլ տարբեր, այնուամենայնիվ, թե՛ տեղի հայությունը և թե՛ հայրենադարձները միևնույն՝ հայկական քաղաքակրթության կրողներն են, ունեն միևնույն հոգևոր-մշակութային կերտվածքն ու արժեհամակարգը: Խնդիրներն ունեն հիմնականում նույնական, այն է՝ սոցիալ-տնտեսական և սկզբնական շրջանում՝ որոշակիորեն կենցաղային բնույթ, որոնց հաղթահարման նպատակով, կարծում ենք, ՀՀ և սփյուռքյան կառույցների կողմից նպատակահարմար կլինի իրականացնել հետևյալ մի շարք գործնական միջոցառումները.

Հայրենադարձության հիմնադրամի ստեղծում. Այսօր թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում գործում են բազմաթիվ հիմնադրամներ: Դրանցից ոչ մեկը, սակայն, չունի անմիջականորեն հայրենադարձության խնդիրներով զբաղվելու գործառույթ: Կարծում ենք, նպատակահարմար կլինի համահայկական այդպիսի մի կառույցի ստեղծումը, որտեղ հավաքված միջոցները կծախսվեն հենց այդ նպատակով՝ սկսած սփյուռքյան համայնքներում ֆորսմաժորային իրավիճակների առաջացման դեպքում հայրենադարձության արագ և սահուն (հնարավորինս քիչ կորուստներով) կազմակերպման միջև հայրենիքում հայրենադարձների սոցիալ-կենցաղային խնդիրների լուծումը և նրանց ինտեգրացիան հայաստանյան հասարակության մեջ: Այդպիսի կառույցի գործունեության դեպքում տարերային հայրենադարձության ալիքների ժամանակ ոչ թե այլ հիմնադրամները կամ բարեգործական և այլ կառույցները կսկսեն հանպատրաստից գումարներ տրամադրել հայրենադարձներին օգնելու նպատակով, ինչի արդյունքում իրականացված ծախսերը կլինեն նվազ արդյունավետ, այլ նախօրոք մշակված ռազմավարության և ծրագրերի համապատասխան՝ հատուկ հայրենադարձության նպատակով ստեղծված հիմնադրամը կբավարարի դրա հետ կապված ծախսերը՝ նպատակային գումարներ հատկացնելով այդ գործընթացի հաջող իրականացման համար՝ այդ կերպ առավել կազմակերպված, անկորուստ և արդյունավետ դարձնելով հայրենադարձության գործընթացը:

Բացի այդ, հայրենադարձության հիմնադրամի ստեղծումը լուծում է ևս մեկ խնդիր: Կան բազմաթիվ մարդիկ, հատկապես՝ գործարարներ, ովքեր ցանկություն են ունեցել նյութապես (ֆինանսապես) օգնելու ինչպես հայրենադարձության կազմակերպմանը, այնպես էլ հայրենադարձների խնդիրների լուծմանը, սակայն չեն իմացել դրա իրականացման մեխանիզմները: Կարծում ենք, հայրենադարձության հիմնադրամի առկայության պարագայում նրանք կարող էին պարզապես այդ նպատակով նախատեսված գումարները փոխանցել վերջինիս՝ նրան վստահելով դրանց տնօրինումը: Հիմնադրամն էլ, ունենալով մասնագիտական պատրաստվածություն և փորձ հայրենադարձության ասպարեզում, կկարողանար առավել արդյունավետ օգտագործել այդ գումարները:

Բարեգործական կազմակերպությունների կողմից հայրենադարձության ծրագրերի իրականացում. Հայաստանյան և սփյուռքյան բարեգործական կառույցները («Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀԲԸՄ, ՀՕՄ, ՀՕՖ, ԱՀԱԸ և այլն) նույնպես միայն տարերային հայրենադարձության առաջացման դեպքում հախուռն կերպով արձագանքում են դրան՝ փորձելով իրենց միջոցներով թեթևացնել փախստականների հոգսերը: Հախուռն գործունեությունից ավելի կազմակերպվածի անցնելու համար, կարծում ենք, նպատակահարմար է, որ բարեգործական կառույցներն իրենց ծրագրերում և գործունեության ռազմավարության (հայեցակարգի) մեջ ամրագրված ընդգրկեն հայրենադարձության բաղադրիչը: Օրինակ, սիրիական ճգնաժամի սկզբից ի վեր հայկական գրեթե բոլոր բարեգործական կազմակերպությունները (այլ կառույցների նման՝ պետական, հասարակական, սփյուռքյան, եկեղեցական և այլն) հսկայական գումարներ են հատկացրել ինչպես Սիրիայում մնացած, այնպես էլ հարևան երկրներ (Լիբանան, Հորդանան և այլն) փախած սիրիահայ գաղթականների օգնելու համար: Մինչդեռ այդ գումարներով նվազագույն կորուստնորով կարելի էր կազմակերպել վերջիններիս հայրենադարձությունը, եթե նախապես բարեգործական կազմակերպությունների ծրագրերում լինեք նաև հայրենադարձության բաղադրիչը: Կամ գոնե հնարավոր կլինեք այդ գումարներով օգնել Հայաստան տեղափոխվել ցանկացողներին՝ հեշտացնելով այդ գործընթացը: Այսինքն՝ կրկին հախուռն և տարերային գործողությունների փոխարեն իրենց ծրագրերում այլ բաղադրիչների կողքին հայրենադարձության բաղադրիչն ունենալու պարագայում Սփյուռքի բարեգործական կառույցները կկարողանան առավել համարժեք արձագանքել ստեղծվող ֆորսմաժորային իրավիճակներին, որոնց պայմաններում արտերկրի հայությունը

կամ նրա մի մասը ստիպված կլինի բռնել Հայաստանի ճանապարհը, և կդիմեն արդեն նախօրոք մշակված գործողությունների (ըստ մշակված ռազմավարության և ըստ ստեղծված օբյեկտիվ հանգամանքների):

ՀՀ և ԼՂՀ մշակելի հողատարածքների հաշվառում՝ դրանք հայրենադարձներին տրամադրելու նպատակով: Այս դրույթը վերցված է իսրայելական հայրենադարձության փորձից: Ինչպե՞ս տեղի ունեցավ 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի կեսը հրեական պետության բացակայության պայմաններում Պաղեստինի ժողովրդագրական յուրացումը հրեաների կողմից: Հրեական կապիտալի միջոցով Պաղեստինում գնվում էին հողատարածքներ և անվճար տրամադրվում հրեա ներգաղթյալներին՝ բնակության համար [տե՛ս 15, էջ 98-99, 101-102]: Ներգաղթողներին հողեր բաժանելու հրեական փորձը լիովին կիրառելի է նաև հայերիս պարագայում՝ այն շահեկան տարբերությամբ, որ եթե հրեաները ստիպված էին դրամով գնել հողատարածքներ, ապա մենք այդ խնդիրը չունենք: Ներկայում ՀՀ և ԼՂՀ տարածքներում առկա են մեծ քանակությամբ մշակելի հողատարածքներ, որոնք սպասում են իրենց մշակին և կարող են օգտագործվել հայրենադարձության նպատակով: Պայմաններն առկա են: Խնդիրն ավելի շատ գործընթացի արդյունավետ կազմակերպման և կառավարման մեջ է¹: Իսկ դրա համար անհրաժեշտ է. ա) ՀՀ և ԼՂՀ տարածքներում անմշակ հողերի հաշվառում, բ) դրանցից առավել մշակելի հատվածների առանձնացում, գ) ըստ անդամների թվաքանակի՝ դրանց հատկացում հայրենադարձված ընտանիքներին՝ որքան մեծ է ընտանիքը, այնքան շատ է հողաբաժինը սկզբունքով, դ) հողահատկացումը պետք է լինի սկզբնական շրջանում՝ 5 տարի, անհատույց օգտագործման իրավունքով, իսկ դրանից հետո՝ ՀՀ կամ ԼՂՀ քաղաքացիություն ձեռք բերելու պարագայում՝ սեփականության իրավունքով:

Կարծում ենք, որ սեփականության իրավունքով օժտելը լուրջ գործոն է հանգամանքների բերումով Հայաստանում հայտնված սփյուռքահայերին մայր հողին ամուր կամ անգամ վերջնականապես կապելու համար: Մի բան է, երբ մարդը գտնվում է ընդամենը փախստականի կարգավիճակում՝ ունեզուրկ և իրավազուրկ վիճակում, լիովին այլ բան, երբ գտնվում է տվյալ երկրում սեփականատիրոջ իրավունքով. ունենում է որոշակի ունեցվածք՝ հետագայում լիովին սեփականաշնորհելու հեռանկարով:

¹Նման քաղաքականություն եղել է նաև հայկական փորձում: Խոսքը վերաբերում է Ցեղասպանության արդյունքում Արևելյան Հայաստանում ապաստանած արևմտահայ գաղթականների խնդրին: Ինչպե՞ս լուծվեց Խորհրդային Հայաստանում նրանց խնդիրը, եթե ոչ հողատարածքների հատկացման միջոցով: Կամ մի թե նույն կերպ չէր լուծվում 1829-30թթ. Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանի կազմում մնացած հայկական բնակավայրերից դեպի Ռուսական կայսրության կազմի մեջ մտած Արևելյան Հայաստան գաղթած հայերի խնդիրը:

Հողատարածքի հատկացումը հայրենադարձներին, բացի նրանց հայրենի հողին ավելի ամուր կապելուց, լուծում է նաև այլ խնդիրներ ինչպես վերջիններիս, այնպես էլ երկրի համար: Դրանք են.

ա) *Հայրենադարձների կեցության (օթևանի) և ապրուստի խնդրի լուծում*. Այս համատեքստում հարկ է նշել, որ հողատարածքների հաշվառման հետ մեկտեղ հարկ է ձեռք բերել մեծ քանակությամբ վագոն-տնակներ (ինչը համեմատաբար մեծ ծախսերի հետ կապված խնդիր չէ), և հողատարածքի հետ մեկտեղ դրանք տրամադրել հայրենադարձներին՝ սկզբնական շրջանում գոնե այդ կերպ նրանց օթևանի խնդիրը լուծելու համար: Կարծում ենք, մեկ տարի ապրելով վագոն-տնակում, Հայաստանում հողաբաժին ստացած սփյուռքահայ հայրենադարձը հաջորդ տարիների ընթացքում կկարողանա իր վաստակով և քրտինքով սեփական հողատարածքի վրա աստիճանաբար կառուցել սեփական տուն: Այնպես որ, առաջին հայացքից ծիծաղելի կամ նվաստացուցիչ թվացող այս առաջարկությունը միայն սկզբնական և շատ կարճ ժամանակահատվածի համար նախատեսված լուծում է՝ այնուհետև սեփական տուն ունենալու հստակ հեռանակարով: Ըստ այդմ էլ, հայրենադարձներին տրամադրվող հողատարածքների չափերի որոշումը պետք է իրականացվի, բացի ընտանիքի անդամների քանակից, նաև հատկացված հողատարածքի վրա բնակելի տուն և այլ շինություններ կառուցելու հաշվառումով: Ինչ վերաբերում է ապրուստի խնդրին, ապա տվյալ պարագայում այդ խնդրի լուծումը հենց հատկացված հողատարածքի վրա հողագործությունն է, որը պետք է ապահովի հայրենադարձներին պարենով և աշխատանքով (գումար վաստակելու հնարավորությամբ):

բ) *Հայաստանի տնտեսական կյանքի աշխուժացում*, հատկապես գյուղատնտեսության ոլորտում՝ նկատի ունենալով այն, որ հայրենադարձները ոչ միայն աշխատասեր և եռանդուն մարդիկ են՝ նվիրված երկրին և իրենց ընտանիքներին, այլ նաև այն, որ նրանք իրենց հետ բերելու են նոր մշակույթ, ինչը հարստացնելու է տեղի տնտեսական գործունեությամբ զբաղվելու մշակույթը և նպաստելու է տնտեսական զարգացմանը: Այս վերջին դրույթը արդեն իսկ ընդունվել է ՀՀ բարձրագույն իշխանությունների կողմից: Ըստ վարչապետ Կ.Կարապետյանի՝ «Վերջին շրջանում սփյուռքահայերի վերադարձով ... Հայաստանում ծառայությունների որակն էապես փոխվել է: Ավելին, աշխատանքի, աշխատասիրության նոր մշակույթ է ձևավորվել»¹:

¹ «Պետք է այնպիսի ազդակներ տանք, որ յուրաքանչյուր օրինապաշտ քաղաքացի հասկանա, որ ինքը Հայաստանում կարող է գործ սկսել և իրեն ապահով զգալ». ՀՀ վարչապետը հանդիպել է սփրիահայերին, <http://www.gov.am/am/news/item/12905/>

գ) *Ճողովորդագրական խնդիրների լուծում*¹՝ նկատի ունենալով, որ ներկայում Հայաստանից տեղի ունեցող արտագաղթի պայմաններում սփյուռքահայ հայրենադարձների հաստատումը երկրում, հատկապես սահմանային, անբնակ կամ նվազ բնակչություն ունեցող շրջաններում, ինչպիսիք են, օրինակ, Արցախի ազատագրված տարածքները, նոր բնակավայրերի հիմնումը, թեկուզ փոքրիկ, այնուամենայնիվ, մխիթարություն է և թեկուզ չնչին չափով, բայց և այնպես, հակակշռում է արտագաղթի գործընթացին:

Հաստուկ հարկային քաղաքականություն հայրենադարձների նկատմամբ. Քանի որ տարերային հայրենադարձության արդյունքում Հայաստանում հայտնված սփյուռքահայերը յուրահատուկ խումբ են և նրանց բնորոշ հատկություններից մեկն էլ խոցելիությունը կամ անպաշտպանությունն է, ապա նրանց նկատմամբ պետական քաղաքականությունը գոնե սկզբնական շրջանում պետք է լինի բարձր աստիճանի հոգացողական: Դրա դրսևորումներից մեկն էլ հայրենադարձ գործարարների նկատմամբ նպաստավոր հարկային քաղաքականությունն է: Խոսքն այստեղ վերաբերում է ոչ թե խոշոր բիզնեսին, քանի որ այդ ոլորտի ներկայացուցիչներն, անկախ ամեն ինչից, չեն կարող խոցելի կամ անպաշտպան համարվել, այլ առաջին հերթին հողահատկացումների արդյունքում հողաբաժին ստացած և դրա վրա գյուղատնտեսությամբ զբաղվող սփյուռքահայ ընտանիքներին: Կարծում ենք, որ նպատակահարմար է վերջիններիս 5 տարով ազատել գյուղատնտեսական հարկերից: Նույնպիսի մոտեցում, կարծում ենք, նպատակահարմար է որդեգրել նաև Հայաստանում փոքր բիզնես հիմնադրած սփյուռքահայ գործարարների նկատմամբ, որոնք նույնպես պետք է 5 տարով ազատվեն հարկերից:

Նման հարկային քաղաքականությունը կնպաստի ոչ միայն հայրենադարձների հաստատմանը Հայաստանում, այլև վերջիններիս տնտեսական բարեկեցության ապահովմանը սեփական աշխատանքի միջոցով: Արդյունքում՝ ոչ միայն կթեթևանա պետության բեռը՝ հայրենադարձներին օգնելու առումով, այլև կաշխուժանա երկրի սոցիալ-տնտեսական կյանքը:

Հայրենադարձների նկատմամբ վերոհիշյալ հարկային քաղաքականությունն ավելի իրատեսական է դառնում ՀՀ կառավարության կողմից վերջերս որդեգրված հարկային քաղաքականության համատեքստում, համաձայն որի՝ ինքնազբաղված անձինք, այսինքն՝ նրանք, ովքեր սեփական գործարար ակտիվության հաշվին իրենց ապահովում են աշխատանքով, ազատվում են հարկերից¹: Կարծում ենք, հարկային քաղաքականության

¹ *Ձեռքեջան Հ.*, Մի շարք ձեռնարկատերերի ազատում են հարկերից, տույժ-տուգանքներից. հարկային համաներում՝ կառավարությունից, <http://www.aravot.am/2016/12/13/836961/>

ուղորտում ՀՀ կառավարության այս նոր մոտեցումը պետք է տարածվի նաև հայրենադարձների վրա:

Տեղեկատվական աջակցության կենտրոնի ստեղծում. Ինչպես ցույց է տվել հատկապես սիրիահայերի փորձը, տարերային հայրենադարձության արդյունքում Հայաստանում հայտնված սփյուռքահայերի գլխավոր խնդիրներից մեկն էլ անտեղյակությունն է: Նրանք չեն տիրապետում հանրապետության օրենսդրությանը: Հետևաբար, պատշաճ կերպով չգիտեն իրենց իրավունքների մասին, չգիտեն որ հարցով ում դիմել, չգիտեն նաև Հայաստանի հարկային օրենսդրության, գործարար միջավայրի և այլնի մասին: Տարբեր խնդիրների առնչությամբ տեղեկատվություն ստանալու համար նրանք ստիպված են դիմել տարբեր աստիաններ, ինչն էապես բարդացնում է նրանց սկզբնական կեցությունը հայրենիքում:

ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայության կողմից դեռևս 2008թ. ստեղծվել և առ այսօր գործում է «Տունդարձ» (*«Back to Armenia!»*) համացանցային կայքը¹, որում անհրաժեշտ տեղեկատվություն է պարունակվում Հայաստանում հաստատվել ցանկացող հայերի համար իրենց հուզող խնդիրների վերաբերյալ՝ առողջապահության, կրթության, քաղաքացիության և երկքաղաքացիության, զինապարտության, կենսաթոշակների և պետական նպաստների հարցերում: Սակայն այդ կայքը բավարար չէ հայրենադարձների լիարժեք տեղեկատվական ապահովման համար՝ պայմանավորված երկու հանգամանքով: Նախ՝ կայքում պարունակվող տեղեկատվությունը նախատեսված է ոչ ֆորսմաժորային իրավիճակներում սեփական ցանկությամբ և որոշմամբ Հայաստան հայրենադարձվել ցանկացողների կամ արդեն հայրենադարձվածների համար: Այլ կերպ ասած՝ այն կոչված է լուծելու սովորական միգրանտների տեղեկատվական ապահովման խնդիրը: Ուստի, կայքը միայն մասնակիորեն կարող է օգտակար լինել ֆորսմաժորային իրավիճակների հետևանքով տարերայնորեն հայրենադարձվածների համար: Երկրորդ՝ լեզվական խնդիրները (կապված հատկապես գրավոր լեզվի հետ), իրավական գիտելիքների ոչ բարձր մակարդակը, առկա խնդիրներից բխող այլ հարցերի հնարավոր առաջացումը և այլն, անփոխարինելի են դարձնում մասնագետների հետ կենդանի շփման միջոցով խորհրդակցությունների դերը հայրենադարձների տեղեկատվական ապահովման հարցում, ինչն ապահովված չի կարող լինել միայն տեղեկատվական կայքի գործունեությամբ:

¹ www.backtoarmenia.com

Այս խնդրի հաղթահարման համար, կարծում ենք, նպատակահարմար է ստեղծել հատուկ հայրենադարձների խնդիրներով մասնագիտացված տեղեկատվական աջակցության կենտրոն, որի հիմնական գործառնությունը վերջիններիս ապահովումն է անհրաժեշտ և հավաստի տեղեկատվությամբ: Քանի որ, ինչպես ցույց է տալիս սիրիահայության օրինակը, հայրենադարձները հիմնականում շփվում են ՀՀ Սփյուռքի նախարարության հետ, ապա նպատակահարմար է նման կենտրոնի ստեղծումը վերջինիս կազմում կամ վերջինիս կից: Տեղեկատվական աջակցության կենտրոնի առկայության պարագայում տարերայնորեն Հայաստանում հայտնված սփյուռքահայերը կկարողանան անհրաժեշտ պահին հավաստի տեղեկատվություն ստանալ իրենց հուզող տարաբնույթ հարցերի մասին, այլ կերպ ասած՝ կիմանան ում դիմել այդպիսի անհրաժեշտության դեպքում՝ տարբեր աստիճաններում իրենց եռանդն ու ժամանակը վատնելու փոխարեն:

Շինարարական քաղաքականության փոփոխություն. Սա ավելի շատ տնտեսագիտական խնդիր է՝ դուրս մեր մասնագիտական կոմպետենտությունից: Այնուամենայնիվ, քանի որ տարերային հայրենադարձության հետևանքով Հայաստանում հայտնված սփյուռքահայերի գլխավոր խնդիրներից է բնակարաններով ապահովվածության (օթևանի) հարցը, հարկ ենք համարում որոշակի դիտարկումներ իրականացնել այս առնչությամբ:

Այսօր Երևանի կենտրոնական թաղամասերում կառուցվում են բազմաթիվ էլիտար շենքեր, անգամ թաղամասեր, որոնցից շատերը բնակեցվում են լավագույն դեպքում կիսով չափ: Նման շինարարական քաղաքականությունն անհեռանկարային է երկրի բնակեցման, մասնավորապես՝ տարերայնորեն Հայաստանում հայտնված սփյուռքահայերի՝ օթևանի ապահովման հարցը լուծելու առումով¹, քանի որ այդպիսի շենքերի բնակարանները, իրենց բարձր գնի պատճառով, մատչելի չեն վերջիններիս համար:

Դրա փոխարեն կարելի է որպես շինարարական հիմնական ուղղություն որդեգրել հասարակ (ոչ էլիտար) և մատչելի բնակարանների կառուցումը: Ընդ որում՝ ոչ միայն Երևանում, այլև մարզերում: Այդ կերպ հնարավոր կլինի ավելի հեշտ եղանակով լուծել փախստականի կարգավիճակում Հայաստանում հայտնված սփյուռքահայերի՝ օթևանի ապահովման հարցը: Բազմաթիվ այդպիսի բնակարանների առկայության դեպքում դրանք կարելի է տրամադրել հայրենադարձներին՝ սկզբնական շրջանում անվճար,

¹Նման քաղաքականությունն անհեռանկարային է նաև գործարարության առումով, քանի որ թույլ բնակեցվածության հետևանքով տուժում են նաև շինարարական կազմակերպությունները:

այնուհետև՝ վարձակալության կամ գնման միջոցով սեփականաշնորհման հիմունքներով: Այս համատեքստում կարևոր է նաև սփյուռքահայերին մատչելի բնակարանային վարկերով ապահովելու խնդիրը: Հասարակ և մատչելի բնակարանների առկայության պարագայում բացառված չէ, որ բազմաթիվ սփյուռքահայեր հենց սկզբից կկարողանան սեփական միջոցներով սեփականության իրավունքով ձեռք բերել (գնել) բնակարաններ¹:

Հայրենադարձության մասին օրենսդրության բարելավում. Հայրենադարձության արդյունավետ իրականացման համար կարևոր նշանակություն ունի այդ գործընթացը կարգավորող օրենսդրությունը (օրենքներ, հայեցակարգ, ռազմավարություն), որում պետք է ամրագրված լինեն հայրենադարձության բնագավառում պետական քաղաքականության մոտեցումները, հայրենադարձության սկզբունքները, հայրենադարձության փուլերը (հայրենադարձության նախապատրաստում, իրականացում, հայրենադարձների ինտեգրացիա)՝ յուրաքանչյուրն իրեն վերաբերող կոնկրետ գործողություններով հանդերձ, և այլն: Նման ինստիտուցիոնալ հենքի (մեխանիզմների ամբողջության) առկայությունը հնարավորություն է տալիս ոչ միայն խուսափել հախուռն՝ չհամակարգված գործողություններից, այլև որոշակիորեն ինքնակարգավորման և ինքնակառավարման հուն տեղափոխել հայրենադարձության գործընթացը:

Չնայած Հայաստանը վաղուց ի վեր բախվում է հայրենադարձության խնդրին, սակայն այդ ոլորտը կարգավորող օրենսդրական հենքերը մեր երկրում դեռևս հեռու են կատարյալ լինելուց²: Բացի միգրացիային վերաբերող իրավական ակտերից, ՀՀ-ում դեռևս 2010թ. մշակվել է հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգ: 2012թ. մշակվել է նաև հայրենադարձության մասին օրենքի նախագիծ, որն արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը, սակայն դեռևս չի ընդունվել ԱԺ-ի կողմից: Հիշյալ հայեցակարգում և օրինագծում ամրագրված են վերն արտացոլված գործնական քայլերի որոշ տարրեր՝ սահմանամերձ համայնքներում հողամասերի՝ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրում հայ-

¹ Սփյուռքահայերին բնակարաններով ապահովման հարցից բացի, շինարարական քաղաքականության նման փոփոխությունը կունենա դրական ազդեցություն ևս երկու իմաստով. ա) այն կնպաստի նաև ՀՀ բնակչության զգալի հատվածի՝ բնակարանի խնդրի լուծմանը, քանի որ մատչելի բնակարանները հասանելի կլինեն նաև նրանց, բ) կնպաստի ՀՀ համաչափ զարգացմանը, քանի որ Երևանի հետ մեկտեղ բնակչություն կկենտրոնանա նաև մարզերում, որի արդյունքում կզարգանան նաև դրանք:

² Անգամ 1946-48թթ. Մեծ հայրենադարձությունը, որը կազմակերպվել էր Կրեմլի մակարդակով, իրականացվեց հանպատրաստից և հախուռն՝ առանց ռազմավարության և հայեցակարգի [տե՛ս 16, էջ 107-119]:

րենադարձներին որպես նրանց տրամադրվող արտոնություն¹, հայրենադարձության հիմնադրամի՝ որպես այդ գործընթացը կազմակերպող, իրականացնող և դրան օժանդակող մարմնի ստեղծում²:

Թե՛ հայեցակարգի, թե՛ օրինագծի պարագայում ընդհանուր առմամբ խնդիրն այն է, որ դրանք կանոնակարգում են ծրագրված հայրենադարձության հետ կապված խնդիրները, երբ պետությունն ինքն է վարում հայրենադարձության քաղաքականություն: Այդ իսկ պատճառով դրանք միայն մասնակիորեն են վերաբերում տարերային հայրենադարձության հետ առնչվող խնդիրներին: Հետևաբար, կարելի է ասել, որ դրանք որոշակիորեն հնացած են և լիովին չեն համապատասխանում հայրենադարձության հետ կապված արդի իրողություններին: Ուստի, անհրաժեշտ է՝ ա) վերը թվարկված առաջարկությունների հաշվառմամբ համապատասխան լրամշակման ենթարկել ինչպես Հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգը, այնպես էլ «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, բ) ընդունել «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենսգիծը ԱԺ-ում՝ տալով դրան իրավական փաստաթղթի՝ օրենքի կարգավիճակ:

Ընդհանուր առմամբ, տարերային հայրենադարձության արդյունքում Հայաստան եկած սփյուռքահայերի նկատմամբ պետական քաղաքականությունը, հաշվի առնելով վերջինիս սահմանափակ հնարավորությունները, պետք է հենվի ոչ թե պետության կողմից նրանց նյութական և այլ բարիքներ առատորեն տրամադրելու սկզբունքի, այլ նրանց հնարավորություն տալով դրա, որպեսզի իրենք սեփական աշխատանքի և տաղանդի շնորհիվ ստեղծեն այդ բարիքներն իրենց համար, ինչը, վերջիններիս խնդիրներն էականորեն լուծելուց բացի, զգալի նպաստ կբերի նաև երկրին:

Մայիս, 2017թ.

¹ «Հայրենադարձության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, հոդված 12, կետ 1, ենթակետ 5, [https://www.google.am/url?sa=t&rct=j&q&esrc=s&source=web&cd=3&cad=rja&uact=8&ved=0ahUKEwi4jdCNofvPAhVC1hQKHAI-BcMQFggpMAI&url=http%3A%2F%2Fwww.mindiaspora.am%2Fres%2F3.%2520Iravakan%2520akter%2FNaxagcer%2FNaxagic%2520\(3\).doc&usq=AFQjCNGvXFU1bZHf22jiZYV8Cg17ZlOhoQ](https://www.google.am/url?sa=t&rct=j&q&esrc=s&source=web&cd=3&cad=rja&uact=8&ved=0ahUKEwi4jdCNofvPAhVC1hQKHAI-BcMQFggpMAI&url=http%3A%2F%2Fwww.mindiaspora.am%2Fres%2F3.%2520Iravakan%2520akter%2FNaxagcer%2FNaxagic%2520(3).doc&usq=AFQjCNGvXFU1bZHf22jiZYV8Cg17ZlOhoQ)

² Հայեցակարգ հայրենադարձության գործընթացի կազմակերպման, հոդված 2, կետ 4, www.google.am/url?sa=t&rct=j&q&esrc=s&source=web&cd=1&cad=rja&uact=8&ved=0ahUKEwi54WNoPvPAhWH2SwKHSG1Ah8QFggZMAA&url=http%3A%2F%2Fwww.mindiaspora.am%2Fres%2F3.%2520Iravakan%2520akter%2F0.%2520ALL%2FHayecakargHayren.Nor.doc&usq=AFQjCNE51pyzJH9mSkmDHSxIyZRG6UllUw&bvm=bv.136811127%2Cd.bGg

Աղբյուրներ և գրականություն

1. «Հայ սփյուռք» հանրագիտարան, գլխավոր խմբագիր՝ Հ.Այվազյան, Եր., «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2003:
2. «Դեռ կեանք մը կայ Հալեպի մէջ պլպլացող, պետք է բոցավառել զայն». *Կարօ Իզպաշեան*, Գանձասար, փետրուար Գ. 2017:
3. Ֆրանսայի երեք ձայնասփիւռներուն կողմէ կազմակերպուած «ռատիօթոն»ին սուրիահայութեան ի նպաստ 120 հազար եւրօ հանգանակուեցաւ, Գանձասար, փետրուար Դ. 2017:
4. ՆՍՕՏՏ Արամ Ա. վեհափառ հայրապետին հովուապետական այցելութիւնը Հալեպ եզակի խանդավառութիւն ստեղծեց հալեպահայութեան մօտ, Գանձասար, Յունուար Բ., 2017:
5. *Հարությունյան Լ.*, Լիբանանի կրօնա-համայնքային համակարգը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», թիվ 19, Եր., «Զանգակ-97», 2000:
6. Իրան Հրգպալլայի միջոցով «պատգամ» կ'ուղարկէ Իսրայէլին եւ Թրամփին, Նոր օր, 2017թ., փետրվարի 23, թիվ 8:
7. Կէսգիշերային միաժամանակեայ ոստիկանական գործողութիւն ՀԷ-ՏԷ-ՓԷի երեսփոխաններու դէմ. ՀԷ-ՏԷ-ՓԷի համանախագահներ Սէլահատտին Տէմիրթաշ ու Ֆիկէն Եիւքսէրտաղ ներառեալ 11 երեսփոխաններ հսկողութեան տակ առնուեցան, Նոր Մարմարա, 04 նոյեմբեր 2016:
8. *Հարությունյան Գ.*, Հայաստան-Սփյուռք. նոր մարտահրավերներ, «21-րդ ԴԱԸ», թիվ 2, 2015:
9. *Ատանալեան Գ.*, Սուրիոյ միջազգային տագնապը եւ սուրիահայութեան հերոսական պայքարը, Գանձասար, Փետրուար Բ, 2017:
10. Սփյուռքահայ կազմակերպություններ, խմբագիր՝ Հ.Այվազյան, Եր., 2002:
11. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, գլխավոր խմբագիր՝ Հ.Այվազյան, Եր., «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2002:
12. *Ղանալանյան Տ.*, Բեյրութի Հայկազյան համալսարանը, «Գլոբուս», թիվ 2, 2013:
13. *Գասպարյան Ս.*, Իրաքի «Հավրեսք» հայկական գյուղը ԻՊ-ի ահաբեկիչների դէմ մարտերում, Ազգ. դէկտեմբերի 9:
14. *Պետրոսյան Լ.*, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001թթ., Եր., «Գիտություն», 2011:
15. *Հակոբյան Հ.*, Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Եր., «Ասողիկ», 2002:
16. *Թիթիզյան Ս.*, 1946-48թթ. հայրենադարձությունը ակնառեսների հուշերում, «1946-48թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., «Լիմուշ», 2009:

ՄԵՐԶԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Վահրամ Հովյան

Ամփոփագիր

Հայրենադարձությունը, ըստ կազմակերպվածության աստիճանի, լինում է ծրագրված և տարերային: Ներկա սահմանափակ հնարավորությունները թույլ չեն տալիս ՀՀ-ին իրականացնել ծրագրված հայրենադարձություն: Մինչդեռ Մերձավոր և Միջին Արևելքում ընթացող գործընթացները լրջագույն մարտահրավերների առջև են կանգնեցնում տարածաշրջանի հայ համայնքները՝ մեծացնելով այնտեղից տարերային հայրենադարձության պիքների հավանականությունը:

Տարերային հայրենադարձության հնարավոր նոր պիքներին պատրաստ լինելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործնական քայլերը՝ հայրենադարձության հիմնադրամի ստեղծում, բարեգործական կազմակերպությունների կողմից հայրենադարձության ծրագրերի իրականացում, ՀՀ և ԼՂՀ անմշակ հողատարածքների հաշվառում՝ դրանք հայրենադարձներին հատկացնելու նպատակով, հայրենադարձների նկատմամբ հատուկ հարկային քաղաքականության որդեգրում, տեղեկատվական աջակցության կենտրոնի ստեղծում, մատչելի բնակարանաշինության քաղաքականության որդեգրում, հայրենադարձության մասին օրենսդրական հենքի բարելավում:

АРМЯНСКИЕ ОБЩИНЫ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА НА НЫНЕШНЕМ ЭТАПЕ: ПРОБЛЕМА РЕПАТРИАЦИИ

Ваграм Овян

Резюме

С точки зрения степени организованности, репатриация бывает запланированная и стихийная. Нынешние ограниченные возможности не позволяют РА осуществлять запланированную репатриацию. Между тем процесс на Ближнем и Среднем Востоке столкнули армянские общины региона с серьезнейшими вызовами, увеличивающим вероятность волн стихийной репатриации оттуда.

Чтобы быть готовыми к новым волнам стихийной репатриации, необходимо осуществить следующие практические шаги: создание фонда репатриации, осуществление репатриационных программ со стороны благотворительных ор-

ганизаций, учет необработанных земель в РА И НКР для их предоставления репатриантам, принятие специальной налоговой политики в отношении репатриантов, создание центра информационной поддержки, осуществление политики строительства доступного жилья, улучшение законодательной базы по вопросам репатриации.

ARMENIAN COMMUNITIES OF THE NEAR AND MIDDLE EAST IN THE CURRENT PHASE: THE ISSUE OF REPATRIATION

Vahram Hovyan

Resume

Repatriation by the level of its organization can be planned and spontaneous. The current limited means do not allow the Republic of Armenia to carry out planned repatriation. Meanwhile, processes occurring in the Near and Middle East pose serious challenges to be faced by the Armenian communities of the region, increasing the chances for spontaneous repatriation from there.

In order to be prepared for possible waves of spontaneous repatriation, the following practical steps need to be taken: establishing a fund for repatriation, implementing repatriation programs by charities, recording unused lands to allot those to repatriates, adopting special tax policies for repatriates, establishing an information support center, affordable housing policies, and improving legislation on repatriation.

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀՈԳԵԽՈՍՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՊԱՂՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

*Միրանուշ Անտոնյան**

Բանալի բառեր՝ համակարգչային գործունեության չարաշահում և կախվածություն, զարգացման «զգայուն շրջան», շփման պակաս, համակարգչային համախտանիշ, կրկնխոսություն, հոգեխոսքային զարգացման հապաղում, ակնառու-գործնական մտածողություն, շաբլոնային մտածողություն:

Անձի զարգացումն էապես պայմանավորվում է տվյալ ժամանակաշրջանի տնտեսական, սոցիալ-հասարակական և տեխնիկական փոփոխություններով ու զարգացումներով: Մասնավորապես, 20-րդ դարավերջին տեխնիկական նորարարությունները՝ համակարգիչն ու համացանցը, ինչպես ներմուծեցին բազում դրական տեղաշարժեր, հեշտացրին մարդու կենսագործունեությունը, այնպես էլ սերմանեցին տարաբնույթ անցանկալի երևույթներ: Այսօր աշխարհում մարդը համարվում է տեխնածին էակ և գտնվում է տեխնիկական փոփոխությունների ու զարգացումների կիզակետում: Տեղին է շեշտադրել պատմամշակութային տեսության հիմնադիր Լ.Ս. Վիգոտսկու այն գաղափարը, որ անձը պատմական և մշակութային արժեքների յուրացման հետևանք է, իսկ սոցիալական միջավայրը՝ անձի զարգացման հիմնական աղբյուրը [1]: Այդ առումով համակարգչային այս դարում պետք է սպասել, որ մեծ կլինի համակարգչային գործունեության ազդեցությունը 21-րդ դարի մարդու անձի և հոգեկան զարգացման վրա:

Այսօր հաճախ որպես գործունեություն մարդու, մասնավորապես՝ երեխայի կյանքում յուրահատուկ տեղ է զբաղեցնում համակարգչային գործունեությունը: Համաձայն Ա.Ն. Լեոնտևի գործունեական և Ս.Լ. Ռուբինշտեյնի սուբյեկտային մոտեցման, գործունեությունը պայմանավորում է անձի զարգացումը: Ա.Ն. Լեոնտևի դիտարկմամբ. «...անձը ոչ մի դեպքում չի նախորդում գործունեությանը, ինչպես և իր գիտակցությունը, նա ծնվում է նրանից» [2, c. 173]: Ս.Լ. Ռուբինշտեյնը նշում է. «...սուբյեկտը իր արարքներում ոչ միայն բացահայտվում և դրսևորվում է, այլև դրանցում կերտվում

* Հոգեբ.գ.թ., Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի հոգեբան:

և որոշակի է դառնում: Այդ իսկ պատճառով, նրանով, թե նա ինչ է անում, կարելի է որոշել այն, ինչ որ նա կա՝ իր գործունեության ուղղվածությամբ կարելի է որոշել և ձևավորել նրան» [3, c. 438]:

Հոգեկան զարգացման համատեքստում հատկապես կարևոր է և հրատապ ուսումնասիրել համակարգչային գործունեության ազդեցությունը մինչև 6 տարեկան երեխաների անձի և հոգեկան զարգացման գործընթացում, քանի որ անձի զարգացման վաղ փուլերում տարաբնույթ սոցիալական և հոգեբանական ազդեցությունները վճռորոշ են հետագա կենսագործունեության համար: Եվ հենց այս շրջանում են տեղի ունենում երեխայի խոսքի զարգացումը, ինքնագիտակցության, սոցիալական «ես»-ի ձևավորումը, շփման հմտությունների զարգացումը և այլն [4]: Այդ իմաստով մեծահասակը որպես անձ արդեն կազմավորված է և զգալի չափով կարող է վերահսկել շրջակա միջավայրի տարաբնույթ ներգործությունները:

Բացի այդ, Լ.Ս. Վիգոտսկին, Մ.Մոնտեսորին [5], Ն.Ս. Լեյտեար [6] և այլք մինչև 6 տարեկանը շեշտադրում են երեխայի զարգացման «զգայուն շրջանների»¹ կարևորությունը խոսքի, հոգեկան գործընթացների զարգացման, վարքաձևերի յուրացման համար: Ուստի, համակարգչային կախվածությունը և չարաշահումը հոգեկան գործընթացների զարգացման զգայուն շրջաններում տրամաբանորեն կունենան իրենց յուրատիպ ներգործությունը:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է հատկացնել համակարգչային գործունեության ազդեցությանը խոսքի զարգացման զգայուն շրջանում (0-6 տարեկան, մասնավորապես՝ 1,5 տարեկանը առանձնահատուկ կարևոր շրջանն է խոսքի զարգացման համար [7]), քանզի նախադպրոցական տարիքում երեխայի առաջին կարևոր ձեռքբերումը, տարիքային նորագոյացությունը² խոսքի զարգացումն է, և այն դիտարկվում է որպես անձի և հոգեկան զարգացման հիմնասյուն. խոսքի զարգացումն իր հետ զուգորդում է նաև մյուս հոգեկան գործընթացների զարգացումը, իսկ խոսքի հապաղմանը համընթաց հաճախ հապաղում է նաև երեխայի հոգեկան զարգացումը:

Խոսքը շփման անհրաժեշտ բաղադրիչ է և ձևավորվում է շփման ընթացքում: Համաձայն Ի.Յու. Կուլագինայի, եթե մինչև 1 տարեկանը շփման

¹ «Զգայուն շրջան» հասկացությունը ներմուծել է Լ.Ս. Վիգոտսկին: Նա շեշտադրել է տարիքային զարգացման որոշակի փուլերի կարևորությունը, առավել բարենպաստ և զգայունակ լինելը որոշակի վարքաձևերի, հոգեբանական առանձնահատկությունների, հոգեկան գործընթացների ձևավորման համար:

² Տարիքային նորագոյացությունները զարգացման որոշակի փուլում ձևավորվող և երեխայի գիտակցությունը, միջավայրի հետ նրա հարաբերությունները, զարգացման ընթացքը որոշող հոգեկան և սոցիալական փոփոխություններ են, ինչպես նաև նորագոյացությունը տվյալ տարիքային շրջանում երեխայի հոգեկան զարգացման ընդհանրացումն է որակական փոփոխության տեսքով:

պահանջմունքը չի բավարարվում կամ ոչ լիարժեք կերպով է բավարարվում, երեխայի հոգեկան զարգացումը հետ է ընկնում, իսկ խոսքը նման երեխաների մոտ շատ ուշ է ի հայտ գալիս [7, cc. 30-31]: «...Առաջին մեկ տարում մեծահասակի հետ լիարժեք շփումը կենսականորեն կարևոր է երեխայի համար» [7, c. 31]: Հետևապես, համակարգչային կախվածությունն ու չարաշահումը, կենդանի շփման, երկխոսության պակասը կարող են բացասաբար անդրադառնալ հոգեխոսքային զարգացման վրա: Եթե մեծահասակներն անտեսեն կամ բավականաչափ ուշադրություն չդարձնեն երեխայի խոսքի զարգացման զգայուն շրջանին, այն կարող է ավելի ուշ ձևավորվել՝ նպաստելով նաև հոգեկան գործընթացների հապաղմանը:

Հիմք ընդունելով տեսական վերլուծությունները՝ նպատակ դրվեց ուսումնասիրել համակարգչային գործունեության դերը հոգեխոսքային զարգացման հապաղմամբ երեխաների մոտ:

Որպես հետազոտվողներ ընտրվեց «հոգեխոսքային զարգացման հապաղում» ախտորոշմամբ 4 տարեկան 11 երեխա, որոնց անամնեստիկ տվյալների ուսումնասիրումը թույլ տվեց եզրակացնել, որ նրանք չունեն կենտրոնական նյարդային համակարգի, գլխուղեղի զարգացման շեղումներ և այլ կենսաբանական բնույթի պատճառներ: Բացի այդ, այս երեխաների ծնողների հետ իրականացվել է երեխայի զարգացմանը վերաբերող հետախայաց հարցում՝ ուղղված խոսքի զարգացման փուլերի ուսումնասիրմանը, խոսքի ձևավորման ընթացքում երեխայի համակարգչային ակտիվության տևողության, հաճախակիության բացահայտմանը, սոցիալականացման ինստիտուտներում երեխայի տարաբնույթ դրսևորումների ուսումնասիրմանը: Ծնողները շեշտադրում էին խոսքի զարգացման զգայուն շրջանում (մինչև 1,5-2 տարեկանը) երեխայի համակարգչային գործունեության չարաշահման և կախվածության մասին, ինչպես նաև ընտանիքում շփման դժվարությունների, ցրվածության, կամակորության վերաբերյալ: Համակարգչային կախվածության դրսևորումներից է ճաշելիս համակարգչային գործունեությամբ զբաղվելը: Հետաքրքիր էր, որ նրանք նշում էին երեխաների օտար լեզուներով ճանաչողական գիտելիքների՝ հաշվելու կարողության, կենդանիների, մրգերի, ոտանավորների, երգերի իմացության մասին, թեև մայրենի խոսքն այս երեխաների մոտ դեռ հստակ ձևավորված չէր: Ծնողների ամենահաճախ հանդիպող արտահայտությունն էր. «լավ չի խոսում, բայց շատ լավ հաշվում է ռուսերեն, անգլերեն, մրգերը անգլերեն գիտի» և նմանատիպ այլ մեկնաբանություններ:

Հետազոտության ընթացքում կիրառվել է համակարգված, ներառված դիտում¹, ինչպես նաև բնական ու լաբորատոր գիտափորձ²: Դիտումն իրականացվել է ըստ 3-4 տարեկան երեխայի հոգեկան զարգացման չափանիշների: Դիտման և գիտափորձի նպատակն էր բացահայտել համակարգչային գործունեության դրսևորումը երեխայի հոգեխոսքային զարգացման համատեքստում: Բնական գիտափորձի ընթացքում դիտարկվել են երեխայի առանձնահատկությունները տանը, դրսում, խաղալիս և այլ բնական միջավայրերում: Լաբորատոր գիտափորձն իրականացվել է նպատակային ստեղծված և հատուկ կահավորված խաղասենյակում:

Հետազոտությունների ընթացքում հոգեխոսքային զարգացման հապաղմամբ երեխաների մոտ բացահայտվեցին համակարգչային գործունեության չարաշահման և կախվածության հետևանքով դրսևորվող հետևյալ ախտանշանները.

1. Մահմանափակ բառապաշարով իմաստավորված խոսքին համատեղ մեխանիկական, շարժունային խոսք՝ զուգորդվող մայրենի լեզվով կրկնխոսություններով (էխոլալիաներով) և օտարալեզու համակարգչային բառապաշարով ու մենախոսությամբ:

Համաձայն Ժ.Պիաժեի՝ կրկնխոսությունների դրսևորումը երեխայի խոսքի բնականոն զարգացման փուլերից է, որը բնորոշ է խոսքի զարգացման վաղ շրջանին [8, c. 18-19]: «Անձի, սոցիալական նմանակման տեսակետից այն շփոթ է «ես»-ի և «ոչ-ես»-ի միջև...» [8, c. 19] և հաճախ ներկայանում է խաղի տեսքով: «...Երեխային հաճույք է պատճառում բառերի կրկնողությունը հենց այնպես, զվարճանքի համար...» [8, c. 19]: Երեխան կրկնխոսություններով կարծես թե հաստատում է դիմացինի ասածը [8]: Ի տարբերություն բնականոն զարգացմամբ երեխաների, որոնց մոտ կրկնխոսությունները կարճատև բնույթ են կրում, համակարգչային ազդեցության ներքո դրսևորվող կրկնխոսությունները համեմատաբար ավելի երկար են տևում: Կրկնխոսություններ հանդիպում ենք նաև աուտիստիկ սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների մոտ: Սակայն, ի տարբերություն աուտիզմով տառապող երեխաների, ովքեր կրկնում են բառերն ու արտահայտությունները հիմնականում իրավիճակին ոչ համարժեք և իմաստը չհասկանալով, համա-

¹ Համակարգված դիտումն իրականացվում է ըստ պլանի, և հետազոտողն ընտրում է այս կամ այն առանձնահատկությունն ու ֆիքսում նրա դրսևորումները տարբեր իրավիճակներում: Ներառված դիտման ժամանակ հետազոտողը դիտման անմիջական մասնակիցն է:

² Բնական գիտափորձն իրականացվում է կյանքի բնական պայմաններում, հետազոտվողի նվազագույն մասնակցությամբ, լաբորատոր գիտափորձը՝ արհեստականորեն ձևավորված պայմաններում, որտեղ հնարավորինս ապահովվում է հետազոտվողի փոխազդեցությունը հետազոտողին հետաքրքրող գործոնների հետ:

կարգչային ազդեցության ներքո դրսևորվող կրկնխոսությունների դեպքում երեխաները հիմնականում հասկանում են կրկնած արտահայտությունների իմաստը՝ դրանով հաստատելով դիմացինի ասածը: Օրինակ, ծնողի հարցին՝ «հաց ուզո՞ւմ ես», կրկնվող «հաց ուզում ես» պատասխանով երեխան հաստատում է նրա ասածը: Աուտիզմով երեխաների մոտ կրկնխոսությունները կատարում են զգայական, ուշադրություն գրավելու կամ ինչ-որ բանից խուսափելու գործառույթ¹: Բացի այդ, այս երեխաների հետ աշխատելիս կրկնխոսություններն ավելի հեշտությամբ են փոխարինվում իմաստավորված խոսքով, քան աուտիզմով երեխաների մոտ: Եվ, ի տարբերություն աուտիզմով երեխաների, այս երեխաների իմաստավորված խոսքն ավելի շատ է:

Այս երեխաները հաճախ են օգտագործում համակարգչային խաղերից և մուլտֆիլմերից յուրացրած օտարալեզու խոսքը, արտահայտությունները, բացի այդ, առանց առարկաների հետ հարաբերվելու մենախոսում են: Մենախոսությունը նույնպես խոսքի բնականոն զարգացման փուլերից է, սակայն, ի տարբերություն բնականոն զարգացմամբ երեխաների, ովքեր խաղալիս, ինչ-որ գործողություն անելիս մեկնաբանում են իրենց գործողությունները և իմաստային առումով մենախոսությունը կապված է իրենց գործողությունների հետ [8, c. 18-20], համակարգչային ազդեցությամբ երեխաները մենախոսում են խաղից դուրս, առանց խոսքի և գործողության իմաստային կապի, և մենախոսության հիմնական բովանդակությունը համակարգչային թեմաներն են, ընդ որում՝ օտար լեզվով: Նրանք հաճախ նաև օգտագործում են համակարգչային գործունեության ընթացքում յուրացրած բառեր, արտահայտություններ, որոնք թերևս նպատակային, իրավիճակին համարժեք են կիրառվում և համակարգչային հնչողությամբ, օրինակ՝ «правильно», «отлично», «мой животик такой голодный», «ой, какая красивая кукла»:

Հոգեխոսքային զարգացման հապաղմամբ և համակարգչային կախվածությամբ երեխաները հաճախ խոսքում ունենում են մեխանիկական, անգիր յուրացրած արտահայտություններ: Մեխանիկական խոսքի ցայտուն օրինակներից են. «բարև, ո՞նց ես, լա՞վ ես», կամ դերային խաղի ժամանակ՝ «մեքենա եմ վաճառում, ի՞նչ արժի, 500 դրամ» նախադասությունները, որոնք նրանք արտաբերում են մի շնչով:

Համակարգչային ազդեցության ներքո դրսևորվող կրկնխոսությունները, օտարալեզու բառապաշարը, մենախոսությունը հավանաբար պայմանավորված են երեխայի զարգացման վաղ շրջանում նմանակման, ընդօրինակման փուլով:

¹ <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC2598746/#!po=35.7955>

Հաճախ զբաղվածության կամ երեխայի խնամքն ու իրենց առօրյա գործունեությունը հեշտացնելու նպատակով ծնողները չեն վերահսկում, երբեմն նաև՝ խթանում համակարգչային խաղերի և օտարալեզու մուլտֆիլմերի չարաշահումը՝ այդպիսով սահմանափակելով կենդանի շփումը շրջապատի մարդկանց հետ: Խոսքի զարգացման զգայուն շրջանում ընտանիքի անդամների խոսքը լսելու և յուրացնելու փոխարեն երեխան սկսում է յուրացնել համակարգչային խոսքը, որը և դառնում է ընդօրինակման հիմնական օբյեկտը:

Կրկնխոսություններ զարգացնող համակարգչային խաղերից է «Խոսող Թոմը»¹ (Говорящий Том), որտեղ գլխավոր հերոսը՝ կատուն, նույնությամբ կրկնում է համակարգչից այն կողմ լսվող խոսքը:

2. Համատեղ ուշադրության թույլ արտահայտվածություն, ուշադրության պակաս:

Հոգեխոսքային զարգացման հապաղում և համակարգչային կախվածություն ունեցող երեխաները դժվարանում են ինչ-որ մեկի հետ միասին կենտրոնացնել ուշադրությունը միևնույն գործողության վրա: Նրանք խաղում են միայնակ, ցանկություն չունեն շփվելու, դիմելու և համատեղ որևիցե մեկի հետ խաղալու, հարաբերվելու: Կարող են դիմել և փորձել հասկացնել իրենց ցանկությունը գլխավորապես գործողության ընթացքում արգելքների և խոչընդոտների հանդիպելիս: Ուշադրությունը կայուն չէ, հաճախ են տեղափոխում այն մի գործողությունից մյուսը, դժվարությամբ են արձագանքում հրահանգներին: Նմանօրինակ վարքաձևի դսևորման պատճառները հետևյալն են.

- Առաջինը համակարգչային գերակա ազդեցության դեպքում կենդանի շփման, երկխոսության պակասն է, որի ընթացքում երեխան պետք է յուրացներ սոցիալական տարբեր վարքաձևեր, շփման հմտություններ, սովորեր հաղորդակցվել մարդկանց հետ:
- Հաջորդը միակողմանի շփումն է համակարգչի հետ, որի հետևանքով երեխան սովորում է միայնակ խաղալ, տարբեր գործողություններ կատարել առանց որևէ մեկի մասնակցության, առանց որևէ մեկին լսելու, ուշադրություն դարձնելու, ինչի հետևանքով համատեղ գործունեություն իրականացնելու նրանց ցանկությունը շատ թույլ է:
- Եվ իհարկե, երեխան հաճախ չի արձագանքում հրահանգներին, երբ իրեն դիմում են, քանզի համակարգչի հետ գործողություններ կատարելիս նրան ոչ ոք չի դիմում, հրահանգներ չի տալիս և կարիք չկա ինչ-

¹ <https://play.google.com/store/apps/details?id=com.outfit7.mytalkingtomfree&hl=ru>

որ մեկին լսելու: Հետևապես, ոչ համակարգչային խոսքին այս երեխաների ուշադրություն դարձնելու հատկությունը թույլ է արտահայտված:

Ի տարբերություն ատոտիստիկ սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների, ովքեր նույնպես բնորոշվում են համատեղ ուշադրության թույլ արտահայտվածությամբ, հրահանգները չլսելու, անվանը չարձագանքելու հատկությամբ, համակարգչային ազդեցությամբ երեխաներն ավելի հեշտությամբ են ներգրավվում համատեղ գործունեության մեջ և, տեսողական կոնտակտի պահպանվածության շնորհիվ, մասնագետի օգնությամբ ուշադրությունը կենտրոնացնելու դեպքում կարողանում են իրականացնել հրահանգները, արձագանքել շրջապատի ազդակներին: Կարճատև հոգեբանական աշխատանքներն առավել ակնհայտ փոփոխություններ են արձանագրում այս երեխաների ուշադրության գործընթացում:

3. Տեսաշարժողական կոորդինացիայի, տարածական կողմնորոշման զարգացածություն, ակնառու-գործնական մտածողության գերակայություն:

Համակարգչային գերակա ազդեցությունը զարգացնում է երեխայի տեսաշարժողական կոորդինացիան, տարածական կողմնորոշումը, քանի որ համակարգչային գործունեության ընթացքում, մասնավորապես՝ խաղի ժամանակ, երեխան ձեռքի շարժումները համատեղում է պատկերի հետ¹: Հետևապես, նրանց մեջ զարգացած և գերակայող է լինում ակնառու-գործնական մտածողությունը, թեև 3 տարեկանից հետո պետք է զարգանա ակնառու-պատկերավոր, ապա՝ վերացական (բառա-տրամաբանական) մտածողությունը: Մտածողության վերջին երկու տեսակները այս երեխաների մեջ թույլ են զարգացած, քանի որ նրանց զարգացման համար անհրաժեշտ են կենդանի շփում, երկխոսություն, ինչը պակասում է համակարգչային ազդեցությամբ երեխաների մեջ, հետևաբար՝ խոսքը հասպտում է, վերացական մտածողությունը՝ նույնպես:

Այս երեխաներն ունեն ճանաչողական գիտելիքների մեծ պաշար, գիտեն իրերի ֆունկցիոնալ նշանակությունը, կարող են ինքնուրույն, առանց մեծի օգնության կիրառել առարկաներն ըստ նշանակության, օրինակ՝ աթոռը հարմարեցնել, պահարանից վերցնել բաժակը, ծորակից ջուր լցնել և խմել: Սակայն, երբ մեծահասակը դիմի նրան՝ «գնա, բեր պահարանի վրա դրված բաժակը», նա կարող է չհասկանալ, քանի որ այս դեպքում պետք է ակտիվանա երեխայի վերացական մտածողությունը:

¹ https://dou24.ru/49/images/16-17/psiholog/reb_i_komp.pdf

4. Շարլոնային մտածողություն, շարլոնային վարք:

Համակարգչի դիտումը և կարգավորումը տեղի են ունենում ավգորիթմային կանոններով: «Այնպիսի բնութագրերը, ինչպիսիք են համակարգչային պատկերում շրիֆտի և սիմվոլի համակցումը, համակարգչային աշխատանքը կարգավորող հրահանգների կրկնողությունը, նրա տեմպոռիթմիկ հատկությունը, դիսֆիլեյի էկրանի չափսերի սահմանափակ լինելը և դիսֆիլեյի վրա աշխատանքների կազմակերպման ստանդարտացումը, օգտագործողի մտավոր գործունեությունը ենթարկում են ավգորիթմային կանոնների նոր համակարգին՝ դարձնելով այն ավելի շարլոնային, քան ավանդական համակարգում»¹: Համակարգչի հետ հաճախակի փոխազդեցությունը նպաստում է նաև գործունեության միատարրությանն ու շարլոնային լինելուն²: Իսկ երեխաների շրջանում, ովքեր չեն կարող վերահսկել համակարգչի ազդեցությունը, վարքում հստակորեն դրսևորվում են շարլոնային գործողություններ: Համակարգչային ազդեցությամբ և հոգեխոսքային զարգացման հապաղմամբ երեխաները հաճախ ճաշելիս, հագնվելիս, քնելիս գործողություններն իրականացնում են նույն հաջորդականությամբ, օրինակ՝ երեխաներից մեկը վերցնում էր բարձր, իր լեզվով բարի գիշեր մաղթում եղբորը, գնում ննջարան, շորերը դնում միննույն աթոռին, հագնում իր նույն գիշերազգեստը, պառկում քնելու և ամեն օր կրկնում այս նույն գործողություններն առանց հաջորդականությունը խախտելու: Դերային խաղեր խաղալիս նրանք պահպանում են և կրկնում գործողությունների այն հաջորդականությունը, որը յուրացրել են առաջին անգամ այդ խաղը խաղալիս: Համակարգչային ազդեցության ներքո դրսևորվող շարլոնային վարքը չպետք է շփոթել աուտիստիկ սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների, ստերեոտիպային, արարողակարգային վարքի հետ, երբ գործողության որևէ օղակի խախտման դեպքում այդ երեխաները հայտնվում են հուզական անկայուն վիճակում: Ի տարբերություն նրանց՝ համակարգչային ազդեցությամբ երեխաները չեն շփոթվում և բացասական հուզական ապրումներ չեն ունենում շարլոնային վարքի որևէ օղակի խախտման դեպքում, բացի այդ, նրանց շարլոնային վարքն առավել հեշտությամբ է ենթարկվում փոփոխման: Ինչպես նաև, այս երեխաները վարքում չեն դրսևորում ստերեոտիպ, կրկնվող շարժումներ, չունեն սևեռունություններ (*фиксация*), ի տարբերություն աուտիզմով երեխաների:

¹ prac.psy.msu.ru/science/public/voyskunskiy/voyskunskiy_2008a.pdf

² Նույն տեղում:

Որպես շաբլոնային վարք ձևավորող համակարգչային խաղի օրինակ կրկին պետք է նշել «Խոսող Թումը»¹, որի գլխավոր հերոս կատվին հարկավոր է խնամել, օրինակ՝ կերակրել, քնեցնել նույնատիպ, ստերետիպային, հաջորդական գործողություններով:

5. Կարգուկանոնի ընկալման թույլ արտահայտվածություն, կամակորություններ, հակադրվող վարքագիծ՝ ուղեկցվող լացով կամ ագրեսիվ գործողություններով:

Համակարգչային գերակա ազդեցության դեպքում հոգեխոսքային գարգացման հապաղամար երեխաները հաճախ են դրսևորում հակադրվող վարքագիծ, այն դեպքում, երբ նրանց ցանկությունները չեն կատարվում: Նրանք հաճախ են կիրառում «չեմ ուզում» արտահայտությունը: Հակադրվող վարքագիծը հաճախ է ուղեկցվում անցանկալի վարքային դրսևորումներով՝ իրեր նետելով, ջարդելով, գոռալով, գետնին պառկելով և այլն: Այս երեխաներն ուղղակիորեն չեն ենթարկվում սահմանված կանոններին և դժվարանում են կատարել այն, ինչ նրանց այդ պահին չի հետաքրքրում: Օրինակ՝ նախադպրոցական հաստատություններում նրանք չեն ենթարկվում սահմանված ռեժիմին, չեն կարողանում շաքր կանգնել, չեն ընկալում դասադրոցեսի կանոնները, ընդհանուր առմամբ՝ անում են այն, ինչ ուզում են:

Միգուցե նման վարքագծի պատճառներից մեկն այն է, որ համակարգչային գործունեության ընթացքում երեխան ինքն է ղեկավարում գործընթացը, որպես այդպիսին վարքի ինքնակարգավորման դժվարությունների չի հանդիպում, հետևապես՝ նա ենթադրում է, որ ամեն ինչ իր ցանկությամբ պետք է լինի: Քանի որ համակարգչային կախվածության դեպքում նվազագույնի է հասնում կենդանի շփումը միջավայրի մարդկանց հետ, երեխան չի յուրացնում վարքի կարգավորման ձևերը, նորմատիվները, կարգուկանոնին հարմարվելու հմտությունները: Պետք է նկատել նաև, որ հենց 0-3 տարեկանն է կարգուկանոնի ընկալման ձևավորման զգայուն շրջանը [7], և, եթե այդ փուլում նպաստող հանգամանքներ չեն լինում նշված զգացումի ձևավորման համար, երեխան դժվարանում է ընկալել կարգը, դառնում է կամակոր և հակադրվող:

Ընդհանրացնելով իրականացված հետազոտությունները՝ հարկ է նշել, որ վերոշարադրյալ երևույթներն այն հիմնական ախտանշաններն են, որոնք դրսևորվում են համատեղ, միմյանց հետ փոխալայմանավորված: Ուստի, ինչ-որ իմաստով կարելի է նշել, որ նրանք ձևավորում են 21-րդ դարի համար արդիական համակարգչային համախտանիշը, որը և բնորո-

¹ <https://play.google.com/store/apps/details?id=com.outfit7.mytalkingtombfree&hl=ru>

շում է երեխայի հոգեխոսքային զարգացման ընթացքը: Նրանց մեկուսի և անկայուն դրսևորումները դեռ չեն վկայում համակարգչային գործունեության չարաշահման և կախվածության մասին: Այս համախտանիշը բնութագրվում է ժամանակային և իրադրային կայունությամբ:

Ելնելով վերոնշյալ վերուծություններից՝ այս երեխաների հետ հոգեբանամանկավարժական աշխատանքների նախնական փուլը հարկ է կառուցել հետևյալ ուղղություններով.

1. համակարգչային գործունեության սահմանափակում,
2. կենդանի շփում, երկխոսությունների, հրահանգների հաճախակի կիրառում, երեխայի գործողությունների խոսքային մեկնաբանում,
3. համատեղ ուշադրության ձևավորում,
4. համատեղ գործունեության իրականացում,
5. պրոբլեմային իրավիճակների ստեղծում՝ մտածողության զարգացման և երեխայի համար շփման մեջ մտնելու անհրաժեշտություն առաջացնելու նպատակով,
6. ոչ շաբլոնային վարքի ձևավորում, միևնույն վարքը տարբեր գործողություններով իրականացնելու ունակության զարգացում,
7. կարգուկանոնի ընկալման ձևավորում:

Ամփոփելով՝ նշենք, որ երեխայի հոգեկան զարգացումը յուրատիպ ընթացք է ստանում, երբ խոսքի զարգացման զգայուն շրջանում ընկալման, ճանաչողության և շփման դաշտում առանձնահատուկ դեր է սկսում զբաղեցնել համակարգչային գործունեությունը: Մանկահասակ երեխային ակամա հրամցվում է այլ իրականություն, ինչը գրավում է նրան իր գույներով, տեղեկույթի հագեցածությամբ և այլն: Փաստացի, դեռ ամբողջությամբ չճանաչելով իրեն շրջապատող իրական աշխարհը՝ նա նախևառաջ ծանոթանում է համակարգչային աշխարհին, որը և դառնում է երեխայի զարգացման համար առաջնահերթ իրողություն՝ երկրորդային պլան մղելով իրական աշխարհն ու շփումները:

Իհարկե, իրականացված հետազոտությունները պահանջում են շարունակականություն, խորագնի և բազմամասնագիտական մոտեցում, սակայն հարկ է նշել, որ 21-րդ դարում վերոնշյալ համակարգչային համախտանիշի տարածումը երեխաների մեջ հնարավոր է աստիճանաբար ձևավորի մարդու պատմամշակութային զարգացման մի նոր տեսակ, ում թերևս և դեռևս վերապահումով կարելի է անվանել «մարդ համակարգի»:

Հունիս, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Выготский Л.С.*, Психология развития человека, М., 2005.
2. *Леонтьев А.Н.*, Деятельность, сознание, личность, М., 1975, с. 173.
3. *Рубинштейн С.Л.*, Избранные философско-психологические труды, М., 1997, с. 438.
4. *Божович Л.И.*, Проблемы формирования личности, М., 2001.
5. *Монтессори М.*, Помоги мне это сделать самому, М., 2000.
6. *Лейтес Н.С.*, Принципы развития в психологии, М., 1978.
7. *Кулагина И.Ю.*, Возрастная психология: развитие ребенка от рождения до 17 лет, М., 1999.
8. *Пиаже Ж.*, Речь и мышление ребенка, М., 1994.

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ ՀՈԳԵԽՈՍՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՊԱՂՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Միրանուշ Անտոնյան

Ամփոփագիր

Երեխայի հոգեկան զարգացումը յուրատիպ ընթացք է ստանում, երբ խոսքի զարգացման զգայուն շրջանում ընկալման, ճանաչողության և շփման դաշտում առանձնահատուկ դեր է սկսում զբաղեցնել համակարգչային գործունեությունը: Համակարգչային գործունեության չարաշահումն ու կախվածությունը նպաստում են խոսքի հապաղմանը, ինչին համընթաց հաճախ հապաղում է նաև երեխայի հոգեկան զարգացումը: Հետազոտությունների ընթացքում հոգեխոսքային զարգացման հապաղմամբ երեխաների մեջ բացահայտվեցին համակարգչային գործունեության չարաշահման և կախվածության հետևանքով դրսևորվող որոշ ախտանշաններ, որոնք միասին ձևավորում են համակարգչային համախտանիշը:

Թեև իրականացված հետազոտությունները պահանջում են շարունակականություն, խորագնին և բազմամասնագիտական մոտեցում, սակայն հարկ է նշել, որ 21-րդ դարում վերոնշյալ համակարգչային համախտանիշի տարածումը երեխաների մեջ հնարավոր է աստիճանաբար ձևավորի մարդու պատմամշակութային զարգացման մի նոր տեսակ, ում թերևս և դեռևս վերապահումով կարելի է անվանել «մարդ համակարգիչ»:

ПРОЯВЛЕНИЯ КОМПЬЮТЕРНОГО СИНДРОМА ПРИ ЗАДЕРЖКЕ ПСИХОРЕЧЕВОГО РАЗВИТИЯ

Տիրանուշ Անտոնյան

Резюме

Психическое развитие ребенка превращается в уникальный процесс, когда компьютерная деятельность начинает играть особую роль в сенситивный период развития речи в сфере восприятия, общения и познания. Компьютерная зависимость и злоупотребление компьютером способствуют задержке речи, что, в свою очередь, часто приводит к задержке психического развития. У детей с задержкой психоречевого развития в процессе исследования были выявлены некоторые симптомы, которые развились впоследствии компьютерной зависимости. Можно сказать, что эти симптомы формируют компьютерный синдром.

Хотя исследования требуют продолжительного, детального и многопрофильного подхода, но можно сказать, что 21-ом веке распространение у детей компьютерного синдрома может постепенно формировать новый вид культурно-исторического развития человека, которого можно, пока еще с оговоркой, называть «человеком-компьютером».

MANIFESTATION OF COMPUTER SYNDROME DURING PSYCHOLOGICAL AND SPEECH DEVELOPMENTAL DELAY

Siranush Antonyan

Resume

Psychological development of the child starts to become unique process when in the sensitive period of speech development computer activities begin to play a special role in perception, cognition and communication. Abuse of and addiction to computer activities contribute to speech delay, often along with delays in psychological development of child as well. Studies have revealed some of the symptoms manifested as a result of the abuse and dependence on computer activities in children with psychological and speech developmental delay, which together form the computer syndrome.

Although the studies require continuity, deep and multidisciplinary approach, it has to be noted that in the 21st century, the spread of the above-mentioned computer syndrome among children is possible to gradually shape a new kind of human cultural development, who with some reservations can be called a “human-computer”.

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

*Մամվել Ասատրյան**

Բանալի բաներ՝ համացանց, տեխնոլոգիա, կախվածություն, հոգեկան առողջություն, մանկավարժական կանխարգելում, վիրտուալ սոցիալականացում:

Վերջին տարիներին տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները լայնորեն մուտք են գործել մարդկային գործունեության բոլոր ոլորտներ: Մա բացատրվում է դուրակի հեռախոսների (*smartphone*) լայն հասանելիությամբ:

Համաշխարհային միտումները վկայում են, որ 2016թ. առաջին կիսամյակում աշխարհում դուրակի հեռախոսների վաճառքը հասել է 288,9 միլիոն միավորի, իսկ ահա տարեվերջին այդ թիվը գերազանցել է 314,5 միլիոնը: Այս ամենը վկայում է, որ շուկան շատ արագ է զարգանում, և պահանջարկը օր օրի ավելանում է: Ամմասն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը¹:

Վիճակագրությունը վկայում է, որ 2016թ. վերջի դրությամբ Հայաստանում բջջային բաժանորդների (ներառյալ լայնաշերտ ինտերնետի բաժանորդները) թիվը կազմել է 3.652.269, 2014թ. վերջի համեմատ սույն ցուցանիշն աճել է 27.891-ով: Միննույն ժամանակ, բջջային հեռախոսակապից (միայն կանխավճարային և հետվճարային բաժանորդները) օգտվող բաժանորդների թվաքանակը կազմել է 3.321.593, ինչը 2014թ. նույն ցուցանիշից պակաս է 11.139-ով²:

Տեխնոլոգիական այս զարգացումներին զուգընթաց՝ գիտական շրջանակներում ակտիվորեն կիրառվում է «տեխնոլոգիական կախվածություն» եզրույթը: Երբեմն այս եզրույթը գործածվում է որպես «համացանցային կախվածություն», չնայած վերջինն առավել կոնկրետ, նեղ իմաստ ունի:

* Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու:

¹ <http://androidios.org/statistika-prodazh-smartfonov-za-vtoroy-kvartala-2016-goda/>

² <http://armstat.am/am/>

Բազմաթիվ են հետազոտությունները, գիտական հրապարակումները և գիտաժողովները, որոնցում խոսվում է տեխնոլոգիական, համացանցային կախվածությունների՝ որպես ժամանակակից վարքաբանական և հոգեկան խանգարման մասին:

Ցանկացած նոր տեխնոլոգիա ներդնելիս պահանջվում է փորձարարական մի ժամանակահատված, որպեսզի անհատի և հասարակության վրա դրանց դրական և բացասական ազդեցությունները դառնան չափելի:

Որքան արագ են զարգանում ժամանակակից տեխնոլոգիաները, այնքան մեծ է դրանց կիրառման հետևանքով առաջացած բացասական դրսևորումների հավանականությունը: Այդ իսկ պատճառով առաջանում է երևույթի մանրագին պատճառահետևանքային ուսումնասիրության անհրաժեշտություն:

Այսօր իրականացվող ուսումնասիրությունները հիմնականում միտված են այս նոր կլինիկական և սոցիալական երևույթների բացահայտմանը, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել հասարակության վիրտուալ վարքի մասին և հասկանալ, թե ինչպես են մարդիկ օգտվում նոր տեխնոլոգիաներից: Տեխնոլոգիական կախվածությունն ազգային հիմնախնդիր է ճանաչվել ոչ միայն ԱՄՆ-ում, այլև այնպիսի երկրներում, ինչպիսիք են Չինաստանը, Հարավային Կորեան և Թայվանը: Հիմնախնդիրն ընդգրկվել է նաև հանրային առողջության ոլորտի մարտահրավերների շարքում [1]:

Վերջին տարիների ուսումնասիրությունները դիտարկում են տեխնոլոգիական կախվածության տարածվածությունը և խանգարման հետ կապված պատճառները:

Ուսումնասիրությունների մեծ մասն ուղղված է՝ պարզելու միջնորդավորված հաղորդակցության ազդեցությունը նոր, ինտերակտիվ բնույթի հարմարվելու մարդկանց կենսագործունեության վրա:

Համացանցային կախվածություն, համացանցի չարաշահում, համացանցի հիվանդագին կիրառում... Սրանք եզրույթներ են, որոնք բազմաթիվ հետազոտողների քննարկումների առարկա են՝ պայմանավորված երևույթի անվանակոչման հանգամանքով:

Այսօր գոյություն ունի երկու տարբեր տեսակետ. հետազոտողների մի մասը պնդում է, որ տեխնոլոգիական կախվածության դեպքում պետք է կիրառել վարքային թերապիայի հատուկ տեխնիկաներ՝ բուժելու այդ կախվածությունը որպես ախտաբանական խանգարում, մյուս մասն այն կարծիքին է, որ դեռ պետք է հետազոտություններ անցկացվեն՝ նախքան այն հիվանդություն որակելը [2]: Մեկ այլ տեսակետ գոյություն ունի, որի համա-

ձայն՝ այն սոցիալ-հոգեբանական, մանկավարժական հիմնախնդիր է, և դրա կանխարգելումը մանկավարժ-հոգեբանների գործառույթն է:

Հայտնի ամերիկացի գիտնական, հոգեբան Ք.Յանզը համացանցային կախվածությունը որպես հոգեկան առողջության խնդիր որակող տեսաբաններից է: Նա նշում էր, որ համացանցային կախվածություն կարող է ունենալ յուրաքանչյուրը, և որևէ ժողովրդագրական տարանջատում այս դեպքում չի կարող լինել: Վիրտուալ տարածությունը պետք է որ ունենա մի մույթ կողմ, որը ստիպում է մարդկանց, մոռանալով իրենց անձնականը, առողջությունն ու ընտանիքը, գերադասել իրենց ժամանակն անցկացնել համացանցում և տրվել տեխնոլոգիային: Ք.Յանզն առանձնացնում է անհատի այն գործողությունները և պարտականությունները, սոցիալական դերերը, որոնք անտեսվում են հանուն ինտերնետի: Այսպիսի գործողությունները բավական մեծ դեր ունեն ժամանակակից հասարակության կենսակերպում, և որոշ մարդիկ, պլանավորած գործողությունների փոխարեն, զբաղվում են ինտերնետային ժամանցով: Ի տարբերություն զբաղմունքի այլ տեսակների՝ գրքի ընթերցման կամ հեռուստացույց դիտելու, որոնք ունեն ժամանակի որոշակի սահմանափակումներ, համացանցի օգտագործումն անսահմանափակ է [3]:

Մեկ այլ տեսաբան՝ Մ.Գրիֆիթսը, կախվածությունը սահմանում է վեց չափանիշով՝ ցայտունություն, տրամադրության անկայունություն, հանդուրժողականություն, զրկանքի համախտանիշ, կոնֆլիկտներ և կրկնվելու բարձր հավանականություն [4]:

Ըստ նրա՝ տեխնոլոգիական կախվածությունը տարբերվում է մնացածներից նրանով, որ դրանք գործնականում սահմանվում են որպես ոչ քիմիական խանգարումներ, որոնք ներառում են մարդ - մեքենա փոխհարաբերությունները: Դրանք կարող են լինել պասիվ (օրինակ՝ հեռուստացույցը) կամ ակտիվ (օրինակ՝ համակարգչային խաղերը) և սովորաբար պարունակում են ինդուկտիվ և խթանիչ գծեր, որոնք կարող են դառնալ հիվանդագին զարգացումների առաջացման պատճառ:

Ինտերնետային կախվածության չափանիշներից է զրկանքի համախտանիշը, որի հետևանքով դրսևորվում են մեղքի և տագնապի զգացումներն այն պատճառով, երբ գործողությունները չեն իրականացվել համաձայն պլանավորածի:

Եթե անձը երկար ժամանակ է տրամադրում որևէ զբաղմունքի, մնացած գործերով զբաղվելու բավարար ժամանակ չի մնում: Այստեղ «խթանիչ-

ներ» բառի փոխարեն կարելի է առաջարկել «անընդհատություն» կամ «շարունակականություն» եզրույթը. սկզբնական շրջանում մի գործողություն արվում է սիրով, որը, սակայն, ընթացքում վեր է ածվում «կախվածության»: Նախընտրելի գործունեությամբ զբաղվելը դրական է և օգտակար, սակայն երբ այն սկսում է վերածվել կախվածության, այդ գործունեության հետ կապված արժեքներն ու նկատառումները դառնում են բացասական և կործանարար: «Սիրելը» կարող է վերածվել «նախընտրության», որը հետո կարող է դառնալ «սովորություն»: Սովորությունները կարող են վերածվել «սկզբնականության», որոնք սակայն խստորեն տարբերվում են «կախվածություն»-ից: Երբ սկզբնականությունը վեր է ածվում կախվածության, այն արդեն դառնում է շարունակական:

Վ.Գլասերն իր «Դրական կախվածություն» աշխատությամբ փորձում է ապացուցել, որ ոչ բոլոր կախվածություններն են բացասական: Ըստ Գլասերի՝ մեր կյանքում կարևորվում է երեք գործողություն՝ սիրելը և սիրվելը, մյուսների կողմից ընդունվելը, երջանիկ լինելն ու ներգրավված լինելը նրանում, ինչ մենք իմաստալից ենք համարում: Երջանկության և իմաստալից կյանքի խթանիչներից մեկը համարվում է նախընտրած զբաղմունքի հանդեպ ունեցած դրական կախվածությունը: Հիմնվելով այս փաստարկի վրա՝ կարելի է ասել, որ տեխնոլոգիաներից օգտվելը շատերին դարձնում է սոցիալապես վստահ, առօրյան՝ իմաստալից և տալիս առավելություններ: Վ.Գլասերի կարևորագույն բնորոշումներից մեկի համաձայն՝ այն «ուղեղի գործունեության մի վիճակ է, որտեղ բացակայում է ինքնաքննադատումը, և որը խթանում է անհատի մեջ բարեկեցիկ և ուժեղ լինելու զգացումը: Նրանց մոտ, ում տեխնոլոգիաների օգտագործումն անհանգստացնում է կամ առաջացնում խնդիրներ, աշխատում է ուղեղի ինքնաքննադատական մասը: Նրանց համար, ովքեր հաճախ օգտվում են համացանցից և տառապում ախտանշաններով, համացանցը դրական կախվածություն չի համարվում: Այդ դեպքում նրանց կարելի է անվանել տեխնոլոգիական կախվածություն ունեցող անձ, ինչը կարող է հանգեցնել ժամանակի զուր վատնման և համարվել խնդրահարույց կախվածություն» [5]:

Գոյություն ունեն կախվածության մի շարք անվանումներ.

- համացանցային կախվածություն (*IAD*),
- համացանցի հիվանդագին/ախտաբանական օգտագործում (*PIU*),
- համացանցի չարաշահում (*EIU*),
- համացանցի կոմպուլսիվ/սկզբնական/ օգտագործում (*CIU*):

Տեխնոլոգիաների և հասարակության միջև փոխհարաբերությունների ամբողջական մոդելը մանրամասնորեն ուսումնասիրել է Մ.Քաստելլը: Ներկայիս սերնդի համացանց օգտագործողների ցուցաբերած հետաքրքրությունը սպառման մի տեսակ է, որն առաջացել է կապիտալիստական հասարակարգում կուտակման պահանջի պատճառով, որտեղ շեշտը դրվում է ինքնաիրացման և անկախության վրա, և երկրորդային է համարվում նրա հասարակական, թե՛ անհատական լինելը, անձնական, թե՛ մասնագիտական ոլորտներում դրսևորվելը [6]:

Ժամանակակից տեխնոլոգիաները լայն հնարավորություն են ընձեռում ուսուցանման և ժամանցի կազմակերպման համար: Բացի այդ, համացանցը համարվում է սոցիալական հաղորդակցության կարևոր միջոց:

Համացանցից օգտվող անձինք հիմնականում ծավալում են հետևյալ գործունեությունները.

- էլեկտրոնային շփում տարբեր վիրտուալ սոցիալական ցանցերում (*Facebook, Twitter, Odnoklassniki*),
- տեղեկատվության որոնում համացանցում (*Yahoo, Google*),
- էլեկտրոնային նամակագրություն (*E-mail*),
- գիտական և մասնագիտական գործունեության ծավալում (գիտական և հրապարակախոսական տեղեկատվության ուսումնասիրում),
- կրթական գործընթացի կազմակերպում (առցանց (*online*) տարբերակով),
- ինտերնետային կայքէջի նախագծում, ստեղծում և համալրում,
- մշակութային ոլորտի ուսումնասիրություններ,
- անդամություն տարբեր բլոգերում (ժամանցային, մասնագիտական, անձնական և կորպորատիվ),
- առևտրային գործունեության ծավալում (առցանց (*online*) խանութներ, սպասարկում, խորհրդատվություն և այլն),
- վիրտուալ, համացանցային խաղեր,
- երաժշտության ու ֆիլմերի վերբեռնում և վարբեռնում, դրանց ունկնդրում, դիտում և այլն:

Ըստ Մ.Մակերետի և Ջ.Անդերսոնի՝ «որոշ երիտասարդների համար ժամանակակից տեխնոլոգիաները վերածվում են մշակութային կարևորագույն գործիքի», միջոց, որով նրանք և՛ հաղորդակցվում են, և՛ փորձարկում այն, ինչն իրենցն են համարում [7]:

Ա.Վոյսկունսկին, Օ.Բաբանան համացանցային կախվածության հիմնախնդրի ուսումնասիրմամբ զբաղվող առաջատար ռուս հետազոտողներից են, որոնց ուսումնասիրման շրջանակներում է գտնվում մարդկանց համացանցում ծավալված գործունեությունը և դրա ազդեցությունը նրանց վրա, վիրտուալ իրականության հոգեբանական դիրքորոշումը: Նրանք նշում են, որ «մարդ-համակարգիչ/հեռախոս-համացանց» շղթայում հնարավոր է երկու փոխկապված զարգացման տարբերակ՝ դրական և բացասական: Երկրորդ դեպքում համացանցի հաճախակի օգտագործումը կախվածության հոգեբանական դրսևորում է, որն էլ հիմնականում դրսևորվում է վարքային և հետաքրքրությունների նկատմամբ վերահսկողության խնդիրների տեսքով, ինչն էլ հանգեցնում է անձնային փոփոխությունների [8]:

Սոցիոլոգիական մենկաբանման տեսանկյունից՝ անձը դուրս է գալիս ռեկուրսիվ փոխազդեցությունից՝ տվյալ իրավիճակում իր վրա կրելով ուրիշների դերերը (որտեղ ուրիշի դերակատարման գործընթացը կրում է ազդեցություն, դրսևորվում հստակ սիմվոլների տեսքով և բխում տվյալ սոցիալական իրավիճակից) և իրավիճակային համատեքստից բխող անհատի կողմից հստակ սիմվոլային համակարգով սահմանված սոցիալական փոխազդեցությունները:

Վիրտուալ միջավայրում, որտեղ ընդունված տեղեկատվական սիմվոլները և դրանց իրականացման ձևաչափերը բացակայում են, ինքնաներկայացման համար տրվում է այլ՝ ռադիկալ տարբեր իրավիճակային հարթություն, որն իր հերթին կարող է ազդեցություն ունենալ անձի ինքնության վրա:


Համացանցից առավել օգտվողները շատ են գնահատում արժևորման բարձր մակարդակը, օրինակ՝ սոցիալական ցանցերում ընկերական հարաբերությունների ստեղծումը, հետևաբար նրանք առավել հակված են սոցիալական ցանցերը համարել մի վայր, որտեղ մարդիկ կարող են արտահայտել իրենց զգացմունքները, կարևորել անձնական հարաբերությունները, և մեկը մյուսի համար պարզապես լինել ակտիվ լսողներ և այլն:

Համացանցը մարդուն ընձեռում է ազատություն՝ ինքնաներկայացման և ինքնադրսևորման համար, և այս տեսանկյունից գերօգտվողները կարող են լինել բարձր ինքնարժևորմամբ և ինքնագնահատականով օժտված անձինք:

Այս ամենը հիմնավորելու համար ներկայացնենք մեր կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումը Երևան քաղաքում ապրող այն երիտասարդների շրջանում, ովքեր տևական ժամանակ են անցկացնում համացանցային տիրույթներում կամ հեռախոսային խաղեր խաղալիս:

Հարցման արդյունքները հետևյալն են.

Տրամազիր 1



Արդյունքները վկայում են, որ տևական ժամանակով համացանց օգտագործողներն անպայման ձեռք են բերում խնդիրների մի ամբողջ փունջ:

Մեր հետազոտությունները ցույց են տվել, որ այս խնդիրներից շատերն առկա են հայ հասարակության լայն շրջանակներում, դրանց մասին արդեն բարձրաձայնում են և՛ ծնողները, և՛ ուսուցիչները, և՛ մասնագետները, և դրանց հետևանքները կարող են լինել շատ լուրջ և երկարատև, եթե ոչ մշտական, քանի որ տեխնոլոգիական կախվածությունը, դրա ազդեցությունը անձի վրա մանրագնին ուսումնասիրված չեն, և դեռևս տեխնոլոգիական կամ համացանցային կախվածության դրական և բացասական հետևանքները չափելի չեն:

Այսպիսով՝ հայ իրականությունում և՛ հաղորդակցային կախվածությունը (սոցիալական ցանցերից կախվածություն), և՛ խաղային կախվածությունը (այս երկուսի համակցությունն անվանում ենք տեխնոլոգիական կախվածություն) ներկայացվում է գրեթե հավասարաչափ ցուցանիշներով, ինչը չի կարելի ասել ճանաչողական կախվածության մասին, միայն այն տարբերությամբ, որ տղաների ներկայացուցչությունն ավելի մեծ է խաղային կախվածության համատեքստում, իսկ աղջիկներն ավելի ընդգրկված են հաղորդակցային կախվածություններում:

ՀՀ տեղեկատվական քաղաքականության իրացման գործընթացը նպաստում է համացանցային տեխնոլոգիաների յուրացման ատիճանի և տեմպերի արագացմանը, համացանցային լսարանի մեծացմանը և երիտասարդացմանը (հիմնականում երեխաներ, դեռահասներ, երիտասարդներ) և փոխակերպվող հասարակության սոցիալական կառուցվածքի համատեքս-

տում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման պահանջարկի ավելացմանը զուգահեռ՝ հայաստանյան հասարակության համար ստեղծվում են տեխնոլոգիական կախվածության վարքագծի ձևավորման նպաստավոր պայմաններ, որոնց կանխարգելման համար անհրաժեշտ է լուրջ ու գիտականորեն հիմնավոր հետազոտություններ իրականացնել:

Մայիս, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Young K.S. and Nabuco de Abreu C.*, 2011, Internet addiction: A handbook and guide to evaluation and treatment. John Wiley & Sons, Hoboken, New Jersey.
2. *Hermida A.*, Parents 'ignore game age ratings', BBC News website, 2005, Retrieved February 26, 2010, from <http://news.bbc.co.uk/2/hi/technology/4118270.stm>
3. *Young K.S.*, 2007. Cognitive-behavioral therapy with Internet addicts: Treatment outcomes and implications, *CyberPsychology & Behavior*, 10(5), 671–679.
4. *Griffiths M.D.*, 1997. Psychology of computer use XLIII. Some comments on 'Addictive use of the internet'. *Psychological Reports*, 80, 81–82.
5. *Glasser W.*, Positive Addiction, 44–68, New York, 1976.
6. *Castells M.*, The Rise of the Network Society. Massachusetts: Blackwell Publishers, 394–413, 1996.
7. *Mackereth M. & Anderson J.*, Computers. Video Games, and Literacy: What do Girls Think?. *Australian Journal of Language and Literacy* 23:3, 184–96, 2000.
8. *Бабаева Ю.Д., Войскунский А.Е., Смыслова О.В.*, 2000. Интернет: воздействие на личность. Гуманитарные исследования в Интернете. Под ред. А.Е. Войскунского, "Можайск-Терра". 11–39. URL: <http://www.relarn.ru:8080/human/pers.html>

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Մամվել Ասատրյան

Ամփոփագիր

Հոդվածում քննարկված է տեխնոլոգիական կախվածությունը որպես դարի հիմնախնդիր: Վերլուծված են տեխնոլոգիական կախվածության վերաբերյալ տարբեր հեղինակների գիտական մտեցումները:

Հոդվածում ներկայացված է նաև հեղինակի իրականացրած սոցիոլոգիական հարցումը հիմնախնդրի վերաբերյալ:

ТЕХНОЛОГИЧЕСКАЯ ЗАВИСИМОСТЬ КАК ПРОБЛЕМА

Самвел Асатрян

Резюме

В статье обсуждается проблема технологической зависимости. Анализируются научные подходы различных авторов по технологической зависимости. В статье дается также результаты соцопроса по проблеме.

TECHNOLOGICAL ADDICTION AS A PROBLEM

Samvel Asatryan

Resume

The article discusses the problem of technological addiction. The scientific approaches of different authors with regard to the technological addiction are analyzed. The results of the social survey on the issue conducted by the author are also presented.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱԸ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱԸ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱԸ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Syllfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 12 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*), ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), շ. (ռուսերեն), ք. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, շ. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
 - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
 - *Шарипова Р.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
 - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ԴԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 07.07.2017թ.
Թիվ 4 (74), 2017թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 7 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում